1006

# ՀԱՄԱՌՕՏ
## ՆՈՐ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔՆՆՈՒԱԾ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԱԾ



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԾՎԱՅԵԱՆ
1875

Գ. վրապրէ.

# ՀԱՄԱՌՕՏ
## ՆՈՐ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔՆՆՈՒԱԾ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԱԾ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ

—

1875

1006

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՏԵԱՌՆ ԵՍԱՅԵԱՅ՝

ԱՌԱՔԵԼԱՇԱՒԻՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս համառօտ քերականութիւնն առաջին, երկրորդ եւ երրորդ մասերուն մէջ հայերէն լեզուին կարեւոր սկզբունքներն ու կանոնները կը պարունակէ, եւ բաւական է անոնց համար՝ որոց դիտումը հայերէն հասկնալ, լուծել եւ փոքր 'ի շատէ գրել է։

Այս տպագրութեան մէջ մանաւանդ ջանացինք դասագիրքս յարմարագոյն ընել քերականութեան ստորին դասերուն, իւրաքանչիւր կանոնի պատշաճ համառօտ հարցում մը դնելով եւ կարեւոր յաւելուածներ ընելով ի դիւրութիւն նորընծայ աշակերտաց։

Քերականութեանս համառօտութեանը հետ դիւրիմացութիւնը, ամենէն կարեւոր կանոններուն ամբողջութիւնը, գնոյն ալ մեծ չափաւորութիւնը այն յատկութիւններն են որ այսպիսի նախնական դասագրքէ մը կը պահանջուին։

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
## ՀԱՅԵՐԷՆ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ Ա.

## ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

1. Հ. Քերականութիւնն ի՞նչ կը սորվեցնէ։

Պ. Քերականութիւնն ուղիղ խօսիլ և ուղիղ գրել կը սորվեցնէ։

2. Հ. Խօսքն ի՞նչ բանէ կը շինուի։

Պ. Խօսքը բառերէ կը շինուի։

3. Հ. Հայերէն լեզուին բառերը քանի՞ կարգ են։

Պ. Հայերէն լեզուին բառերն ութը կարգ կը բաժնուին, և մասունք բանի կը կոչուին. և են՝ գոյական, ածական, դերանուն, Նախդիր կամ Նախադրութիւն, բայ, մակբայ, շաղկապ և ձայնարկութիւն։

## ԳԼՈՒԽ Ա.

## ԳՈՅԱԿԱՆ

4. Հ. Գոյականն ի՞նչ է։

Պ. Գոյականը կը ցուցնէ անձ մը և իր մը. զոր օրինակ, հայր, մայր, հաց, քաղաք, հոգի, ճշմարտութիւն։

5. Հ. Գոյականը քանի՞ փոփոխութիւն ունի ։

Պ. Գոյականը երկու փոփոխութիւն ունի, թիւ և հոլով ։

6. Հ. Թիւը քանի՞ է ։

Պ. Թիւը երկու է, եզակի և յոգնակի ։

7. Հ. Եզակին ի՞նչ կը ցուցնէ ։

Պ. Եզակին գոյականին նշանակած բանին մէկ հատ ըլլալը կը ցուցնէ. զոր օրինակ, մարդ, քաղաք, գետ, կը նշանակեն մէկ մարդ, մէկ քաղաք, մէկ գետ ։

8. Հ. Յոքնակին ի՞նչ կը ցուցնէ ։

Պ. Յոքնակին գոյականին նշանակած բանին մէկէ աւելի ըլլալը կը ցուցնէ. զոր օրինակ, մարդք, քաղաքք, գետք, կը նշանակեն մարդեր, քաղաքներ, գետեր. այսինքն՝ մէկէ աւելի մարդ, մէկէ աւելի քաղաք, մէկէ աւելի գետ ։

9. Հ. Յոքնակիին վերջաւորութիւնն ի՞նչպէս է ։

Պ. Յոքնակիին վերջաւորութիւնը միշտ եզակիէն տարբեր է ։

10. Հ. Հոլովն ի՞նչ է ։

Պ. Հոլովը՝ անունի մը վերջաւորութեանը փոխուիլն է ։

11. Հ. Հայերէնի մէջ հոլովը քանի՞ է ։

Պ. Հայերէնի մէջ հոլովը վեց է. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական ։

12. Հ. Գոյականներուն վերջը քանի՞ կերպով կը փոխուի ։

Պ. Հայերէնի մէջ ամէն գոյականի վերջը մի և նոյն կերպով չի փոխուիր, այլ տասն երկու կերպով ։

13․ Հ․ Այս տասուերկու կերպ փոփոխմունք ի՞նչ կ'ըսուին։

Պ․ Այս տասուերկու կերպ փոփոխմունք հոլովմանք կ'ըսուին։

14․ Հ․ Քանի՞ անկանոն հոլովմունք կան։

Պ․ Տասուերկու հոլովմունքէն զատ որ կանոնաւոր են, քանի մը անկանոն հոլովմունք կան։

## ՏԱՍՆԵՐԿՈՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

### Ա․ ՀՈԼՈՎՈՒՄ

*Եզակի*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղական․ | Բան․ | Խօսք․ | Սէօզ․ |
| Սեռական․ | Բան-ի․ | Խօսքի․ | Սէօզին․ |
| Տրական․ | Բան-ի․ | Խօսքի․ | Սէօզէ․ |
| Հայցական․ | զԲան․ | Խօսքը․ | Սէօզի․ |
| Բացառական․ | 'ի Բան-է․ | Խօսքէ․ | Սէօզտէն․ |
| Գործիական․ | Բան-իւ․ | Խօսքով․ | Սէօզ իլէ․ |

*Յոգնակի*

| | | | |
|---|---|---|---|
| Ո․ | Բան-ք․ | Խօսքեր․ | Սէօզլէր․ |
| Ս․ | Բան-ից․ | Խօսքերու․ | Սէօզլէրին․ |
| Տ․ | Բան-ից․ | Խօսքերու․ | Սէօզլէրէ․ |
| Հ․ | զԲան-ս․ | Խօսքերը․ | Սէօզլէրի․ |
| Բ․ | 'ի Բան-ից․ | Խօսքերէ․ | Սէօզլէրտէն․ |
| Գ․ | Բան-իւք․ | Խօսքերով․ | Սէօզլէր իլէ․ |

Արքայ, յի, յիւ․ Գիծ, գծի, գծիւ․

Հանդէս, դիսի, դիսիւ․ Ողջոյն, ջունի, ջունիւ․

## Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Քաղաք | Քաղաք . | Շեհր . |
| Ս. | Քաղաք-ի . | Քաղքի . | Շեհրին . |
| Տ. | Քաղաք-ի : | Քաղքի . | Շեհրե . |
| Հ. | զՔաղաք . | Քաղաքը . | Շեհրի . |
| Բ. | 'ի Քաղաք-է . | Քաղքէ . | Շեհրտէն . |
| Գ. | Քաղաք-աւ . | Քաղքով . | Շեհր իլէ . |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Քաղաք-ք . | Քաղաքներ . | Շեհիրլէր . |
| Ս. | Քաղաք-աց . | Քաղաքներու . | Շեհիրլէրին . |
| Տ. | Քաղաք-աց . | Քաղաքներու . | Շեհիրլէրէ . |
| Հ. | զՔաղաք-ս . | Քաղաքները . | Շեհիրլէրի . |
| Բ. | 'ի Քաղաք-աց . | Քաղաքներէ . | Շեհիրլէրտէն . |
| Գ. | Քաղաք-օք | Քաղաքներով . | Շեհիրլէր իլէ . |

Աւազան , նի , նաւ . Լեզու , զուի , զուաւ .
Որդեակ , դեկի , դեկաւ . Պարտէզ , տիզի , տիզաւ .

## Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Զգեստ . | Զգեստ . | Էսվապ . |
| Ս. | Զգեստ-ու . | Զգեստի . | Էսվապըն . |
| Տ. | Զգեստ-ու . | Զգեստի . | Էսվապա . |
| Հ. | զԶգեստ . | Զգեստը . | Էսվապը . |
| Բ. | 'ի Զգեստ-է . | Զգեստէ . | Էսվապտան . |
| Գ. | Զգեստ-ու . | Զգեստով . | Էսվապ իլէ . |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Զգեստ-ք . | Զգեստներ . | Էսվապլար . |
| Ս. | Զգեստ-ուց . | Զգեստներու . | Էսվապլարըն . |
| Տ. | Զգեստ-ուց . | Զգեստներու . | Էսվապլարա . |

| | | | |
|---|---|---|---|
| Հ. | զԶգեստ-ս. | Զգեստները. | Էսվաբլարը. |
| Բ. | 'ի Զգեստ-ուց. | Զգեստներէ. | Էսվաբլարտան. |
| Գ. | Զգեստ-ուք. | Զգեստներով. | Էսվաբլար իլէ. |

Ծով, ծովու, ծովու. Ձէն, ձէնու, ձէնու.
Ինձ, ընձու, ընձու. Քաղց, ցու, ցու.

## Դ. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Գետ. | Գետ. | Ըրմաք. |
| Ս. | Գետ-ոյ. | Գետի. | Ըրմաղըն. |
| Տ. | Գետ-ոյ. | Գետի. | Ըրմաղա. |
| Հ. | զԳետ. | Գետը. | Ըրմաղը. |
| Բ. | 'ի Գետ-ոյ. | Գետէ. | Ըրմաքտան. |
| Գ. | Գետ-ով. | Գետով. | Ըրմաղ իլէ. |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Գետ-ք. | Գետեր. | Ըրմաքլար. |
| Ս. | Գետ-ոց. | Գետերու. | Ըրմաքլարըն. |
| Տ. | Գետ-ոց. | Գետերու. | Ըրմաքլարա. |
| Հ. | զԳետ-ս. | Գետերը. | Ըրմաքլարը. |
| Բ. | 'ի Գետ-ոց. | Գետերէ. | Ըրմաքլարտան. |
| Գ. | Գետ-ովք. | Գետերով. | Ըրմաքլար իլէ. |

Էշ, էշոյ, էշով. Յոյս, յուսոյ, յուսով.
Ծեր, րոյ, րով. Ցաւ, ւոյ, ւով:

## Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Տրդատ. | Տրդատ. | Տըրդադ. |
| Ս. | Տրդատ-այ. | Տրդատի. | Տըրդադըն. |
| Տ. | Տրդատ-այ. | Տրդատին. | Տըրդադա. |
| Հ. | զՏրդատ. | Տրդատը. | Տըրդադը. |

| | | | |
|---|---|---|---|
| Բ. | 'ի Տրդատ-այ . | Տրդատէն . | Տրդատտան . |
| Գ. | Տրդատ-աւ . | Տրդատով . | Տրդատ իլէ . |

Հայկ , կայ , կաւ .     Տիգրան , նայ , նաւ .

## Զ. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հռիփսիմէ . | Հռիփսիմէ . | Հռիփսիմէ . |
| Ս. | Հռիփսիմ-եայ . | Հռիփսիմէի . | Հռիփսիմէնին . |
| Տ. | Հռիփսիմ-եայ . | Հռիփսիմէին . | Հռիփսիմէյէ . |
| Հ. | զՀռիփսիմէ . | Հռիփսիմէն . | Հռիփսիմէյի . |
| Բ. | 'ի Հռիփսիմ-եայ . | Հռիփսիմէէն . | Հռիփսիմէտէն . |
| Գ. | Հռիփսիմ-եաւ . | Հռիփսիմէով . | Հռիփսիմէ իլէ . |

Եսայի , յեայ , յեաւ .     Նունէ , նեայ , նեաւ ։

## Է. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Եկեղեցի . | Եկեղեցի . | Քիլիսէ . |
| Ս. | Եկեղեց-ւոյ . | Եկեղեցւոյ . | Քիլիսէնին . |
| Տ. | Եկեղեց-ւոյ, -ւոջ, | Եկեղեցւոյ . | Քիլիսէյէ . |
| Հ. | զԵկեղեցի . | Եկեղեցին . | Քիլիսէյի . |
| Բ. | * յԵկեղեց-ւոյ̊ . | Եկեղեցիէ . | Քիլիսէտէն . |
| Գ. | Եկեղեց-ե̊աւ . | Եկեղեցիով . | Քիլիսէ իլէ . |

### Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Եկեղեցի-ք . | Եկեղեցիներ . | Քիլիսէլէր . |
| Ս. | Եկեղեց-եաց . | Եկեղեցիներու . | Քիլիսէլէրին . |
| Տ. | Եկեղեց-եաց . | Եկեղեցիներու . | Քիլիսէլէրէ . |
| Հ. | զԵկեղեցի-ս . | Եկեղեցիները . | Քիլիսէլէրի . |
| Բ. | յԵկեղեց-եաց . | Եկեղեցիներէ . | Քիլիսէլէրտէն . |
| Գ. | Եկեղեց-եօք . | Եկեղեցիներով . | Քիլիսէլէր իլէ . |

---

* Ձայնաւորով սկսող բառերէն առաջ՝ փոխանակ 'ի նախդրի՝ յ նախդիրը կը դրուի ։

Գինի, նւոյ, նեաւ. Կղզի, զւոյ, զեաւ.
Գօտի, տւոյ, տեաւ. Տեղի, տեղւոյ, տեղեաւ:

## Ը. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Փոքր. | Մանր. | Ուֆագ. |
| Ս. | Փոքու. | Մանրի. | Ուֆաղըն. |
| Տ. | Փոքու. | Մանրի. | Ուֆաղա. |
| Հ. | զՓոքր. | Մանրը. | Ուֆաղը. |
| Բ. | ՚ի Փոքուէ. | Մանրէ. | Ուֆագտան. |
| Գ. | Փոքուամբ. Փոքու. | Մանրով. | Ուֆագ իլէ. |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Փոքունք. | Մանրեր. | Ուֆագլար. |
| Ս. | Փոքունց. | Մանրերու. | Ուֆագլարըն. |
| Տ. | Փոքունց. | Մանրերու. | Ուֆագլարա. |
| Հ. | զՓոքունս. | Մանրերը. | Ուֆագլարը. |
| Բ. | ՚ի Փոքունց. | Մանրերէ. | Ուֆագլարտան. |
| Գ. | Փոքուամբք. | Մանրերով. | Ուֆագլար իլէ. |

Բարձր, ձու, ձու. Մանր, նու, նու.
Ծանր, նու, նու. Քաղցր, ցու, ցու:

## Թ. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հիմն. | Հիմ. | Թէմէլ. |
| Ս. | Հիման. | Հիման. | Թէմէլին. |
| Տ. | Հիման. | Հիման. | Թէմէլէ. |
| Հ. | զՀիմն. | Հիմը. | Թէմէլի. |
| Բ. | ՚ի Հիմանէ. | Հիմէ. | Թէմէլտէն.. |
| Գ. | Հիմամբ. | Հիմով. | Թէմէլ իլէ. |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հիմ-ունք. | Հիմեր. | Թէմէլլէր. |
| Ս. | Հիմ-անց. | Հիմերու. | Թէմէլլէրին. |
| Տ. | Հիմ-անց. | Հիմերու. | Թէմէլլէրէ. |
| Հ. | զՀիմ-ունս. | Հիմերը, | Թէմէլլէրի. |
| Բ. | 'ի Հիմ-անց. | Հիմերէ. | Թէմէլլէրտէն. |
| Գ. | Հիմ-ամբք. | Հիմերով. | Թէմէլլէր իլէ. |

Արեգակն, կան, կամբ. Խոստումն, տման, տմամբ.
Դուռն, դրան, դրամբ. Շուրթն, շրթան, շրթամբ.

## Ժ. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Գառն. | Գառնուկ. | Գուզու. |
| Ս. | Գառ-ին. | Գառնուկի. | Գուզունուն. |
| Տ. | Գառ-ին. | Գառնուկի. | Գուզույա. |
| Հ. | զԳառն. | Գառնուկը. | Գուզույու. |
| Բ. | 'ի Գառ-անէ. | Գառնուկէ. | Գուզուտան. |
| Գ. | Գառ-ամբ. | Գառնուկով. | Գուզու իլէ. |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Գառ-ինք. | Գառնուկներ. | Գուզուլար. |
| Ս. | Գառ-անց. | Գառնուկներու. | Գուզուլարըն. |
| Տ. | Գառ-անց. | Գառնուկներու. | Գուզուլարա. |
| Հ. | զԳառ-ինս. | Գառնուկները. | Գուզուլարը. |
| Բ. | 'ի Գառ-անց. | Գառնուկներէ. | Գուզուլարտան. |
| Գ. | Գառ-ամբք. | Գառնուկներով. | Գուզուլար իլէ. |

Եզն, եզին, եզամբ. Խաչն, խաչին, խաչամբ.
Լեառն, լերին, լերամբ. Ձեռն, ռին, ռամբ։

## ԺԱ. ՀՈԼՈՎՈՒՄ

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Նեղութիւն. | Նեղութիւն. | Տարլըք. |
| Ս. | Նեղութ-եան. | Նեղութեան. | Տարլըղըն. |
| Տ. | Նեղութ-եան. | Նեղութեան. | Տարլըղա. |

| | | | |
|---|---|---|---|
| Հ. | զՆեղութիւն . | Նեղութիւնը . | Տարլըղը . |
| Բ. | ՚ի Նեղութ-ենէ . | Նեղութենէ . | Տարլըքտան . |
| Գ. | Նեղութ-եամբ . | Նեղութեամբ . | Տարլըղ իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Նեղութիւն-ք . | Նեղութիւններ . | Տարլըքլար . |
| Ս. | Նեղութ-եանց . | Նեղութիւններու . | Տարլըքլարըն . |
| Տ. | Նեղութ-եանց . | Նեղութիւններու . | Տարլըքլարա . |
| Հ. | զՆեղութիւն-ս . | Նեղութիւնները . | Տարլըքլարը . |
| Բ. | ՚ի Նեղութ-եանց . | Նեղութիւններէ . | Տարլըքլարտան . |
| Գ. | Նեղութ-եամբք . | Նեղութիւններով . | Տարլըքլար իլէ . |

Բարութիւն, թեան, թեամբ. Գերութիւն, թեան, թեամբ. Անկիւն, կեան, կեամբ. Արիւն, եան, եամբ :

ԺԲ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզական

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոսկր . | Ոսկր . | Քէմիք . |
| Ս. | Ոսկ-եր . | Ոսկրի . | Քէմիյին . |
| Տ. | Ոսկ-եր . | Ոսկրի . | Քէմիյէ . |
| Հ. | զՈսկր . | Ոսկրը . | Քէմիյի . |
| Բ. | յՈսկ-երէ . | Ոսկրէ . | Քէմիքտէն . |
| Գ. | Ոսկ-երբ . | Ոսկրով . | Քէմիյիլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոսկ-երք . | Ոսկրներ . | Քէմիքլէր . |
| Ս. | Ոսկ-երաց . | Ոսկրներու . | Քէմիքլէրին . |
| Տ. | Ոսկ-երաց . | Ոսկրներու . | Քէմիքլէրէ . |
| Հ. | զՈ՞սկ-երս . | Ոսկրները . | Քէմիքլէրի . |
| Բ. | յՈսկ-երէ . | Ոսկրներէ . | Քէմիքլէրտէն . |
| Գ. | Ոսկ-երօք . | Ոսկրներով . | Քէմիքլէր իլէ . |

ԳԻՏԵԼԻՔ

15. Հ. Ո՞ր ձայնաւորները կը կորսուին :

Պ. Բաղաձայնով վերջաւորուած անուններուն

վերջի վանկին է և ու ձայնաւորները, ուղղակա-նէն և հայցականէն զատ, միւս հոլովներուն մէջ կը կորսուին, զոր օրինակ, գէժ, զգէժ, գժի, 'ի գժէ, գժիւ. գէժք, զգէժս, գժից, 'ի գժից, գժիւք. խունկ, զխունկ, խնկոյ, 'ի խնկոյ, խնկով. խունկք, զխունկս, խնկոց, 'ի խնկոց, խնկովք:

16. Հ. Ո՞ր ձայնաւորները կը փոխուին:

Պ. Նոյնպէս բաղաձայնով վերջաւորուած ա-նուններուն վերջի վանկին եան՝ եի, էն՝ էի, ոյն՝ ուի կը փոխուին ուղղականէն և հայցականէն զատ միւս հոլովներուն մէջ. զոր օրինակ. ատեան, զատեան, ատենի, յատենէ, ատենիւ. ատեանք, զատեանս, ատենից, յատենից, ատենիւք. մէգ, զմէգ, միգի, 'ի միգէ, միգաւ. մէգք, զմէգս, միգաց, միգօք. գոյն, զգոյն, գունոյ, 'ի գունոյ, գունով. գոյնք, զգոյնս, գունոց, 'ի գունոց, գու-նովք:

17. Հ. Ո՞ր բառերն անեզական կը կոչուին:

Պ. Կան գոյականներ որոց եզակին չի գոր-ծածուիր, զոր օրինակ, ողջոյնք, ընծայք, կամք, մեղք. Ասոնք անեզական կը կոչուին:

---

## ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

| Ա. ՀՈԼՈՎՈՒՄ | | | Բ. ՀՈԼՈՎՈՒՄ | |
|---|---|---|---|---|
| | Այր. Երէկմարդ. Եր+է+. | | Հայր. հայր. պապա. | |
| | Եզ. | Յք. | Եզ. | Յք. |
| Ու. | Այր. | Արք. | Հայր. | Հարք. |
| Ս. | Առն. | Արանց. | Հօր. | Հարց. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տ· | Առն · | Արանց · | Հօր · | Հարց · |
| Հ· | զԱյր · | զԱրս · | զՀայր · | զՀարս · |
| Բ· | յԱռնէ · | յԱրանց · | 'ի Հօրէ · | 'ի Հարց · |
| Գ· | Արամբ · | Արամբք · | Հարբ · | Հարբք · |

Տէր , տեառն , 'ի տեառնէ , տերամբ · Տեարք , տերանց , տերամբք ։

Մայր , մօր , 'ի մօրէ , մարբ · Մարք , մարց , մարբք ·

Եղբայր , եղբօր , յեղբօրէ , եղբարբ · Եղբարք , եղբարց , եղբարբք ։

## Գ· ՀՈԼՈՎՈՒՄ

Քոյր · քոյր · գըզ գարտաշ ·

## Դ· ՀՈԼՈՎՈՒՄ

Կին · կին · գարը ·

| | Եզ· | Յք· | Եզ· | Յք· |
|---|---|---|---|---|
| Ո· | Քոյր · | Քորք · | Կին · | Կանայք · |
| Ս· | Քեռ · | Քերց · | Կնոջ · | Կանանց · |
| Տ· | Քեռ · | Քերց · | Կնոջ · | Կանանց · |
| Հ· | զՔոյր · | զՔորս · | զԿին · | զԿանայս · |
| Բ· | 'ի Քեռէ · | 'ի Քերց · | 'ի Կնոջէ · | 'ի Կանանց · |
| Գ· | Քերբ · | Քերբք · | Կանամբ · | Կանամբք · |

## Ե· ՀՈԼՈՎՈՒՄ

Գիւղ , գեղ , քէօյ ·

## Զ· ՀՈԼՈՎՈՒՄ

Օր · օր · կիւն ·

| | Եզ· | Յք· | Եզ· | Յք· |
|---|---|---|---|---|
| Ո· | Գիւղ · | Գիւղք · | Օր · | Աւուրք · |
| Ս· | Գեղջ · | Գիւղից · | Աւուր · | Աւուրց · |
| Տ· | Գեղջ · | Գիւղից · | Աւուր · | Աւուրց · |
| Հ· | զԳիւղ · | զԳիւղս · | զՕր · | զԱւուրս · |
| Բ· | 'ի Գեղջէ · | 'ի Գիւղից · | յՕրէ · | յԱւուրց · |
| Գ· | Գիւղիւ · | Գիւղիւք · | Աւուրբ · | Աւուրբք · |

Է. ՀՈԼՈՎՈՒՄ　　　　Ը. ՀՈԼՈՎՈՒՄ

Տիւ · ցորեկ · կիւնտիւզ · Արեւելեայ · արեւելեան · շարգլի ·

| | Եզ. | Յք. | Եզ. | Յք. |
|---|---|---|---|---|
| Ո. | Տիւ . | Տիւք . | Արեւելեայ . | Արեւելեայք . |
| Ս. | Տուընջեան . | Տուընջեանց . | Արեւելւոյ . | Արեւելեայց . |
| Տ. | Տուընջեան . | Տուընջեանց . | Արեւելւոյ . | Արեւելեայց : |
| Հ. | զՏիւ . | զՏիւս . | զԱրեւելեայ . | զԱրեւելեայս . |
| Բ | 'ի Տուընջենէ . ['ի տուէ .] | 'ի Տուընջեանց . | յԱրեւելւոյ . | յԱրեւելեայց . |
| Գ. | Տուընջեամբ . | Տուընջեամբք . | Արեւելեաւ . | Արեւելեօք . |

# ԳԼՈՒԽ Բ.

## ԱԾԱԿԱՆ

18. Հ. Ածականն ի՞նչ է։

Պ. Ածական կ'ըսուին այն տեսակ բառեր՝ որոնք գոյականին որպիսութիւնը, այսինքն ինչպէս ըլլալը, և կամ քանակութիւնը, այսինքն՝ թիւը, քանի հատ ըլլալը, կը ցուցնեն։ Զոր օրինակ, կարմիր հանդերձ, երկու հանդերձ։ Կարմիր՝ հանդերձին որպիսութիւնը, երկու՝ քանակութիւնը կը ցուցնեն, ուստի և ածական են։

19. Հ. Գոյականն ու ածականը որոշելու կերպն ի՞նչ է։

Պ. Գոյականն ու ածականը իրարմէ որոշելու դիւրին կերպն է՝ բառին քով բան (շէյ) բառը դնել. եթէ կը յարմարի՝ այն բառն ածական է, եթէ չի յարմարիր՝ բառը գոյական է. զոր օրի-

նակ, չըսուիր՝ մարդ բան, քաղաք բան, տուն բան. ապա՝ մարդ, քաղաք, տուն, գոյական են։ բայց կ՚ըսուի, բարի բան, չար բան, մեծ բան. ապա՝ բարի, չար, մեծ, ածական են։

20. Հ. Ածականները սովորաբար ո՞ւր կը դրուին։

Պ. Ածականները սովորաբար գոյականէն առաջ կը դրուին, և անոր հետ մէկտեղ կը հոլովին, զոր օրինակ, այր իմաստուն. իմաստուն մարդ։

## Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այր իմաստուն. | Իմաստուն մարդ. | Աքըլլը ադէմ. |
| Ս. | Առն իմաստնոյ. | Իմաստուն մարդու. | Աքըլլը ադէմին։ |
| Տ. | Առն իմաստնոյ. | Իմաստուն մարդու. | Աքըլլը ադէմէ. |
| Հ. | զԱյր իմաստուն. | Իմաստուն մարդը. | Աքըլլը ադէմի. |
| Բ. | յԱռնէ իմաստնոյ. | Իմաստուն մարդէ. | Աքըլլը ադէմդէն. |
| Գ. | Արամբ իմաստնով. | Իմաստուն մարդով. | Աքըլլը ադէմ իլէ։ |

## Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Արք իմաստունք. | Իմաստուն մարդիկ. | Աքըլլը ադէմլէր։ |
| Ս. | Արանց իմաստնոց։ | Իմաստուն մարդոց. | Աքըլլը ադէմլէրին։ |
| Տ. | Արանց իմաստնոց. | Իմաստուն մարդոց. | Աքըլլը ադէմլէրէ։ |
| Հ. | զԱրս իմաստունս. | Իմաստուն մարդիկը. | Աքըլլը ադէմլէրի։ |
| Բ. | յԱրանց իմաստնոց. | Իմաստուն մարդերէ։ | Աքըլլը ադէմլէրդէն։ |
| Գ. | Արամբք իմաստնովք. | Իմաստուն մարդերով. | Աքըլլը ադէմլէր իլէ։ |

21. Հ. Ածականը կրնա՞յ գոյականէն առաջ ալ գրուիլ։

Պ. Հարկ կ'ըլլայ շատ անգամ ածականը գոյականէն առաջ դնել, անատեն ածականն՝ անփոփոխ կը մնայ, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Հաւատարիմ բարեկամ. | Հաւատարիմ բարեկամք. |
| Հաւատարիմ բարեկամի. | Հաւատարիմ բարեկամաց. |
| 'ի Հաւատարիմ բարեկամէ. | Հաւատարիմ բարեկամօք. |
| Հաւատարիմ բարեկամաւ. | |

22. Հ. Միավանկ ածականներուն վրայ ի՞նչ դիտելիք կայ։

Պ. Միավանկ ածականները միայն գոյականէն առաջ ալ դրուելու ըլլան, անոր հետ մէկտեղ կը հոլովին. զոր օրինակ Մեծ տուն, Մեծի տան, Մեծաւ տամբ. Նոր օրէնք, Նորոց օրինաց. Քաջ այր, Քաջի առն, Քաջաց արանց. Սուրբ քաղաք, Սրբոյ քաղաքի. եւայլն։

23. Հ. Գոյականին քանակութիւնը ցուցնող ածականաց ի՞նչ կ'ըսուի։

Պ. Գոյականին քանակութիւնը ցուցնող ածականներուն Թուական կ'ըսուի։

24. Հ. Թուականները քանի՞ տեսակ են։

Պ. Թուականները երեք տեսակ են. Բացարձակ, Դասական և Անջնջական։

25. Հ. Բացարձակներն ի՞նչ կը ցուցնեն։

Պ. Բացարձակները գոյականին Թիւը կամ քանի հատ ըլլալը կը ցուցնեն, ինչպէս՝ Մի, Երկու, Երեք, Չորք, մինչեւ Հազար և Բիւր։

26. Հ. Մէ, երկու, երեք, չորք ինչպէս կը հոլովին։

Պ. Մէ, երկու, երեք, չորք կը հոլովին հետեւեալ կերպով։

| Եզ. | Յոգ. | Յոգ. | Յոգ. |
|---|---|---|---|
| Ո. Մի. | Երկու. | Երեք. | Չորք. |
| Ս. Միոյ, միոջ. | Երկուց. | Երից. | Չորից. |
| Տ. Միոյ, միում. | Երկուց. | Երից. | Չորից. |
| Հ. զՄի. | զԵրկուս. | զԵրիս. | զՉորս. |
| Բ. 'ի Միոջէ. | յԵրկուց. | յԵրից. | 'ի Չորից. |
| Գ. Միով. | Երկուք. | Երիւք. | Չորիւք. |

Մէ յոքնակի չի կրնար ունենալ։

Երկու, երեք, չորք եզակի չունին. Մնացեալ թըւականք թէ եզակի և թէ յոքնակի ունին։

27. Հ. Հինգէն մինչև տասը ինչպէս կը հոլովին։

Պ. Հինգէն մինչև տասը կը հոլովին հետևեալ կերպով։

| Հինգ, պէշ | | Վեց, ալթը | |
|---|---|---|---|
| Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. Հինգ. | Հինգք. | Վեց. | Վեցք. |
| Ս. Հնգի. | Հնգից. | Վեցի. | Վեցից. |
| Տ. Հնգի. | Հնգից. | Վեցի. | Վեցից. |
| Հ. զՀինգ. | զՀինգս. | զՎեց. | զՎեցս. |
| Բ. 'ի Հնգէ. | 'ի Հնգից. | 'ի Վեցէ. | 'ի Վեցից. |
| Գ. Հնգիւ. | Հնգօք. | Վեցիւ. | Վեցիւք. |

| Եօթն, եէտի | | Ութ, սէքիզ | |
|---|---|---|---|
| Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
| Ո. Եօթն. | Եօթանք. | Ութ. | Ութք. |
| Ս. Եօթան. | Եօթանց. | Ութի. | Ութից. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տ. | Եօթան. | Եօթանց. | Ութի. | Ութից. |
| Հ. | զԵօթն. | զԵօթանս. | զՈւթ. | զՈւթս. |
| Բ. | յԵօթանէ. | յԵօթանց. | յՈւթէ. | յՈւթից. |
| Գ. | Եօթամբ. | Եօթամբք. | Ութիւ. | Ութիւք. |

28. Հ. Ինն և տասն ի՞նչպէս կը հոլովին ։

Գ. Ինն և տասն կը հոլովին այսպէս.

| | Եզ. | Յոք. | Եզ. | Յոք. |
|---|---|---|---|---|
| Ո. | Ինն. | Իննունք. | Տասն. | Տասունք. |
| Ս. | Ըննի. | Ըննից. | Տասին. | Տասանց. |
| Տ. | Ըննի. | Ըննից. | Տասին. | Տասանց. |
| Հ. | զԻնն. | զԻննունս. | զՏասն. | զՏասունս. |
| Բ. | յԸննէ. | յԸննից. | 'ի Տասնէ. | 'ի Տասանց. |
| Գ. | Ըննիւ. | Ըննիւք. | Տասամբ. | Տասամբք. |

29. Հ. Մետասան ի՞նչպէս կը հոլովի ։

Գ. Մետասան, տասնըմէկ, կը հոլովի այսպէս ։

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Մետասան. | Մետասանք. |
| Ս. | Մետասանի. | Մետասանից. |
| Տ. | Մետասանի. | Մետասանից. |
| Հ. | զՄետասան. | զՄետասանս. |
| Բ. | 'ի Մետասանէ. | 'ի Մետասանից. |
| Գ. | Մետասանիւ. | Մետասանիւք. |

Մետասանէ պէս կը հոլովին՝ երկոտասան, տասուերկու. երեքտասան, տասուերեք. չորեքտասան, տասնըչորս. հնգետասան, տասնըհինգ. վեշտասան, տասնըվեց ։

30. Հ. Եօթնևտասան ի՞նչպէս կը հոլովի.

Գ. Եօթնևտասան, տասնըեօթը, կը հոլովի այսպէս ։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Եօթնևտասն . | Եօթնևտասանք . |
| Ս. | Եօթնևտասին . | Եօթնևտասանց . |
| Տ. | Եօթնևտասին . | Եօթնևտասանց . |
| Հ. | զԵօթնևտասն . | զԵօթնևտասանս . |
| Բ. | յԵօթնևտասնէ . | յԵօթնևտասանց . |
| Գ. | Եօթնևտասամբ . | Եօթնևտասամբք . |

Ասոր պէս կը հոլովին ութնևտասն, տասնըութը, և իննևտասն, տասնևինը։

31. Հ. Քսան ի՞նչպէս կը հոլովի։

Պ. Քսան հետևեալ կերպով կը հոլովի։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Քսան . | Քսանք . |
| Ս. | Քսանի . | Քսանից . |
| Տ. | Քսանի . | Քսանից . |
| Հ. | զՔսան . | զՔսանս . |
| Բ. | ՚ի Քսանէ . | ՚ի Քսանից . |
| Գ. | Քսանիւ . | Քսանիւք . |

Այսպէս կը հոլովին նաև երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, իննսուն։

32. Հ. Հարիւր ի՞նչպէս կը հոլովի։

Պ. Հարիւր հետևեալ կերպով կը հոլովի։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Հարիւր . | Հարիւրք . |
| Ս. | Հարիւրոյ . | Հարիւրոց . |
| Տ. | Հարիւրոյ . | Հարիւրոց . |
| Հ. | զՀարիւր . | զՀարիւրս . |
| Բ. | ՚ի Հարիւրոյ . | ՚ի Հարիւրոց . |
| Գ. | Հարիւրով . | Հարիւրովք . |

Այսպէս կը հոլովին երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, իններորդ։

33. Հ. Հազար և բիւր ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Հազար և բիւր կը հոլովին հետեւեալ կերպով։

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ու. | Հազար. | Հազարք. | Բիւր. | Բիւրք. |
| Ս. | Հազարի. | Հազարաց. | Բիւրու. | Բիւրուց. |
| Տ. | Հազարի. | Հազարաց. | Բիւրու. | Բիւրուց. |
| Հ. | զՀազար. | զՀազարս. | զԲիւր. | զԲիւրս. |
| Բ. | 'ի Հազարէ. | 'ի Հազարաց. | 'ի Բիւրէ. | 'ի Բիւրուց. |
| Գ. | Հազարաւ. | Հազարօք. | Բիւրու. | Բիւրուք. |

34. Հ. Դասական թուականներն ի՞նչ կը ցուցնեն։

Պ. Դասական թուականները գոյականին կարգը կամ շատերուն մէջ քանիերորդ ըլլալը կը ցուցնեն։

35. Հ. Դասականներն ի՞նչպէս կը շինուին։

Պ. Բաց 'ի մէկէն, ուրիշ ամէն բացարձակ թուականի վերջը որդ կամ երորդ մասնիկն աւելցնելով կը շինուին դասականները, զոր օրինակ՝

Երկու, երկրորդ,
Երեք, երրորդ,
Չորք, չորրորդ,
Հինգ, հինգերորդ եւայլն։

36. Հ. Դասական թուականք ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Դասական թուականք կը հոլովին այսպէս.

## Երկրորդ , [illegible]

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Երկրորդ · | Երկրորդք · |
| Ս. | Երկրորդի · | Երկրորդաց · |
| Տ. | Երկրորդի · կամ երկրորդում · | Երկրորդաց · |
| Հ. | զԵրկրորդ · | զԵրկրորդս · |
| Բ. | յԵրկրորդէ · | յԵրկրորդաց · |
| Գ. | Երկրորդաւ · | Երկրորդօք · |

Այսպէս կը հոլովին միւս դասականները ։

37. Հ. Փոխանակ միերորդի ի՞նչ կ՚ըսուի ։

Պ. Փոխանակ միերորդի կ՚ըսուի առաջներորդ կամ առաջին , որ կը հոլովի այսպէս ։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Առաջին · | Առաջինք · |
| Ս. | Առաջնոյ · | Առաջնոց · |
| Տ. | Առաջնոյ., ջնում · | Առաջնոց · |
| Հ. | զԱռաջին · | զԱռաջինս · |
| Բ. | յԱռաջնմէ, յԱռաջնոյ · | յԱռաջնոց · |
| Գ. | Առաջնով · | Առաջնովք · |

Այսպէս կը հոլովի նաեւ վերջին ։

38. Հ. Անձնականներն ի՞նչպէս կը շինուին ։

Պ. Անձնական Թուականները կը շինուին բացարձակներուն վրայ եքին կամ եքեան մասնիկն աւելցնելով, և ցուցուած Թուոյն ամէնն ալ կը նշանակեն , զոր օրինակ , երկոքին՝ երկուքն ալ բսել է · երեքին՝ երեքն ալ · չորեքին՝ չորսն ալ , տասնեքին՝ տասն ալ , և այլն ։

39. Հ. Անձնական Թուականք ի՞նչ Թիւ են , և ի՞նչպէս կը հոլովին ։

Պ. Անձներական թուականները միայն յոքնակի են, և հետևեալ կերպով կը հոլովին։

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Երկուքին, երկուքեան. | Երեքին, երեքեան. |
| Ս. | Երկոցունց, ցունց. | Երեցունց. |
| Տ. | Երկոցունց, ցունց. | Երեցունց. |
| Հ. | զԵրկոսին, զերկոսեան. | զԵրեսին, զերեսեան. |
| Բ. | յԵրկոցունց. | յԵրեցունց. |
| Գ. | Երկուքումբք. | Երեքումբք։ |

40. Հ. Ամենեքին կամ ամենեքեան ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ամենեքին, ամենեքեան կը նշանակէ ամենն ալ, և գոյականաբար միայն կը գործածուի։

41. Հ. Թուական ածականներն ո՞ւր կը դրուին և ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Թուական ածականներն ալ սովորաբար գոյականէն ետքը դրուելով մէկտեղ կը հոլովին։

42. Հ. Թուական ածականք եզակի՞ թէ յոքնակի գոյական կ՚ուզեն։

Պ. Մէ՝ եզակի գոյական կ՚ուզէ. Մնացած թուականները սովորաբար յոքնակի գոյական կ՚ուզեն, զոր օրինակ։

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Այր մի. | Արք երկու. |
| Ս. | Առն միոջ. | Արանց երկուց. |
| Տ. | Առն միում. | Արանց երկուց. |
| Հ. | զԱյր մի. | զԱրս երկուս. |
| Բ. | յԱռնէ միոջէ. | յԱրանց երկուց. |
| Գ. | Արամբ միով. | Արամբք երկուք. |

| | Յոքնակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո․ | Արք վեց․ | Արք քսան․ |
| Ս․ | Արանց վեցից․ | Արանց քսանից․ |
| Տ․ | Արանց վեցից․ | Արանց քսանից․ |
| Հ․ | զԱրս վեց․ | զԱրս քսան․ |
| Բ․ | յԱրանց վեցից․ | յԱրանց քսանից․ |
| Գ․ | Արամբք վեցիւք․ | Արամբք քսանիւք․ |

43․ Հ․ Թուականները, եթէ գոյականէն առաջ դրուին, ի՞նչ կ'ըլլան։

Պ․ Թուականները, գոյականէն առաջ ալ դրըւելով, կրնան մէկտեղ հոլովիլ․ զոր օրինակ, Ծըկ·· արք․ Ծըկ··ց արանց, ուէց զինուորաց․ Ծօնանց սարկաւագաց․ Ծըկոգ··անեց առաքելոց, և այլն։

44․ Հ․ Մէ թուականին վրայ ի՞նչ գիտելիք կայ։

Պ․ Մէ՝ գոյականէն առաջ ալ կը դրուի, և մէկտեղ կը հոլովի․ Ծ այր, Ծոյ առն, Ծով արամբ։

45․ Հ․ Դասականներն ո՞ւր կը դրուին և ի՞նչպէս կը հոլովին։

Պ․ Դասականներն ալ գոյականէն ետքը, երբեմն ալ առաջ դրուելով, միշտ եզակի գոյական կ'ուզեն, ու մէկտեղ կը հոլովին, զոր օրինակ, օր Ծըկրորդ, աւուր Ծըկրորդի, յօրէ Ծըկրորդէ․ կամ Ծըկրորդում աւուր, 'ի հնգետասաներորդում ամսեան, և այլն։

46․ Հ․ Անձներականք ո՞ւր կը դրուին և ի՞նչպէս կը հոլովին։

Պ․ Անձներականները գոյականէն ետքը, երբեմն ալ առաջ դրուելով, միշտ յոքնակի գոյական կ'ուզեն, ու մէկտեղ կը հոլովին․ զոր օրի-

նակ․ որդիք երկոքին, որդւոց երկոցունց, որդւովք երկոքումբք․ կամ, երկոքին որդիք, երկոցունց որդւոց, երկոքումբք որդւովք։

ԱՆՈՐՈՇ ԿԱՄ ՄԻՋԱԿ ԱԾԱԿԱՆՆԵՐ

47․ Հ․ Ուրիշ ի՞նչ տեսակ ածական կայ։

Պ․ Տեսակ մը ածականներ ալ կան որ անորոշ կամ միջակ կը կոչուին, և հետեւեալներն են․

Ամենայն, այլ, իւրաքանչիւր, միւս, ոմն, ոք, իմն, ինչ, նոյն։

48․ Հ․ Ամենայն և այլ ի՞նչպէս կը հոլովին։

Ամենայն գրեթէ միշտ եզակի կը գործածուի, և կը հոլովի առաջին հոլովման պէս. Այլ կը հոլովի չորրորդ հոլովման պէս․ զոր օրինակ․

| | Եզ․ | Եզ․ | Յոգ․ |
|---|---|---|---|
| Ո․ | Ամենայն․ | Այլ․ | Այլք․ |
| Ս․ | Ամենայնի․ | Այլոյ․ | Այլոց․ |
| Տ․ | Ամենայնի․ | Այլում․ | Այլոց․ |
| Հ․ | զԱմենայն․ | զԱյլ․ | զԱյլս․ |
| Բ․ | յԱմենայնէ․ | յԱյլմէ․ | յԱյլոց․ |
| Գ․ | Ամենայնիւ․ | Այլով․ | Այլովք․ |

Այսպէս կը հոլովին իւրաքանչիւր, ամէն մէկը, հեր տէր․ միւս, օ տէր։

49․ Հ․ Ոմն, ոք ի՞նչպէս կը հոլովին։

Պ․ Ոմն, ոք, մէկը, տէրէ, կը հոլովին այսպէս։

| | Եզ․ | Յք․ | Եզ․ | Յք․ |
|---|---|---|---|---|
| Ո․ | Ոմն․ | Ոմանք․ | Ոք․ | Ոմանք․ |
| Ս․ | Ուրումն․ | Ոմանց․ | Ուրուք․ | Ոմանց․ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տ. | Ումեմն . | Ոմանց . | Ումեք . | Ոմանց . |
| Հ. | զՈմն . | զՈմանս . | զՈք . | զՈմանս . |
| Բ. | յՈւմեմնէ . | յՈմանց . | յՈւմեքէ . | յՈմանց . |
| Գ. | Ոմամբ . | Ոմամբք . | Ոմամբ . | Ոմամբք . |

50. Հ. Իմն, ինչ, նոյն ի՞նչպէս կը հոլովին ։

Պ. Իմն, ինչ, բան մը, պէտ չէ . Նոյն, նոյնը, օ, կը հոլովին այսպէս .

| Եզ. և Յոգ. | | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|
| Ո. | Իմն, ինչ . | Նոյն . | Նոքին . |
| Ս. | Իրիք . | Նորին . | Նոցին, նոցունց . |
| Տ. | Իմիք . | Նմին . | Նոցին, նոցունց . |
| Հ. | զԻմն, զինչ . | զՆոյն . | զՆոսին . |
| Բ. | յԻմեքէ . | ի Նմին . | 'ի Նոցունց . |
| Գ. | Իւիք . | Նովին, նովիմբ . | Նովիմբք, նոքիմբք . |

Սոյն, դոյն ալ այսպէս կը հոլովին ։

51. Հ. Ով, ո, որ, զինչ ի՞նչպէս կը հոլովին ։

Պ. Ով կամ ո, ով, [illegible] . որ, որ, [illegible] . զինչ, ինչ, նէ, այսպէս կը հոլովին ։

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. | Եզ. |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Ով, ո . | Ոյք . | Որ . | Որք . | Զինչ . |
| Ս. | Ոյր . | Ոյց . | Որոյ . | Որոց . | Էր . |
| Տ. | Ում . | Ոյց . | Որում . | Որոց . | Իմ . |
| Հ. | զՈվ, զո . | զՈյս . | զՈր . | զՈրս . | Զինչ . |
| Բ. | յՈւմէ . | յՈյց . | յՈրմէ . | յՈրոց . | Առ իմէ . |
| Գ. | Որով . | Որովք . | Որով . | Որովք . | Իւ . |

52. Հ. Անորոշ ածականք ո՞ր կը դրուին և ի՞նչպէս կը հոլովին .

Պ. Անորոշ ածականք ալ շատ անգամ գոյա-

կաններու հետ, առաջ կամ վերջը գծելով, կը հոլովին, զոր օրինակ.

Այս այր, այսր առն, յայսմանէ առնէ, այսու արամբ. Այսք արք, այսց արանց, այսոքիւք արամբք. կամ այր այս, առն այսր, առն այսմ, յառնէ այսմանէ, արամբ այսու, արանց այսց, արամբք այսոքիւք, եւայլն.

Այր ոմն, առն ուրուքն, առն ումեմն, յառնէ ումեմնէ, արամբ ոմամբ. կամ, այր ոք, առն ուրուք, առն ումեք, յառնէ ումեքէ. արք ոմանք, արանց ոմանց, արամբք ոմամբք, զարս ոմանս.

Գործ ինչ, գործոյ իրիք, գործոյ իմիք, ՚ի գործոյ իմիքէ, գործով իւիք.

Նոյն բան, նորին բանի, նմին բանի, ՚ի նմին բանէ. նովին բանիւ. նոյն բանք, նոցին բանից, նովին բանիւք.

Որ տուն, որոյ տան, որում տան, յորմէ տանէ, որով տամբ. որ տունք, որոց տանց, որովք տամբք։

53. Հ. ՈՔ, կամ ոք եւ ինչ ինչպէս կը գործածուին։

Պ. ՈՔ կամ ոք գոյականաբար կը գործածուի. մինակ ոք բառին հետ երբ ածական կը հոլովի այսպէս.

ՈՔ կամ ոք ոք, ուրուք, ումեք, յումեքէ։

Ինչ ալ մինակ ինչ բառին հետ երբ ածական կը գործածուի այսպէս.

Ինչ ինչ, իրիք, իմիք, իւիք։

54. Հ. Մեծարանաց, երեւելեաց բառերուն վրայ ինչ գիտելիք կայ։

Պ. Մեծարանաց, երեւելեաց բառերը գոյականաբար կը

գործածուին, ուղղական չունին, և հետևեալ կերպով կը հոլովին ։

| | | |
|---|---|---|
| Ո. | Չունի. | Չունի. |
| Ս. | Միմեանց. | Իրերաց. |
| Տ. | Միմեանց. | Իրերաց. |
| Հ. | զՄիմեանս. | զԻրեարս. |
| Բ. | ՚ի Միմեանց. | յԻրերաց. |
| Գ. | Միմեամբք. | Իրերօք. |

55. Հ. Ածականները միշտ գոյականի՞ հետ կը գործածուին ։

Պ. Ածականներն առանց գոյականի ալ գործածուելով, գոյականի պաշտօն կը վարեն. և ան ատեն ածականը գոյականաբար առնուած կ'ըսուի. զոր օրինակ. անզգամն անգոսնէ զխրատ հօր. անըզգամը հօրը խրատը կ'անգոսնէ. արդարք ժառանգեսցեն զերկիր. արդարները երկիրը պիտի ստանան. հոս անզգամ, արդարք, անզգամ մարդ, արդար մարդիկ, ըսել է ։

## ԳԼՈՒԽ Գ.

### ԴԵՐԱՆՈՒՆ

56. Հ. Ո՞ր բառերը դերանուն կ'ըսուին ։

Պ. Դերանուն կ'ըսուին այն բառերը որ խօսքին մէջ առաջուց յիշուած բառի մը տեղ կը դրուին, միևնոյն բառը չկրկնելու համար. զոր օրինակ. Աստուած արդար է, յանցաւորները կը պատժէ. Տեսայ այն տղան որ քեզի հետ էր ։ Այս

խօսքերուն մէջ՝ ան, որ, դերանուն են. քանզի առաջինը (ան) Աստուած բառին տեղ դրուած է. իսկ երկրորդը (որ)՝ ծառը բառին տեղ։

57. Հ. Դերանուններն ի՞նչ մասնաւոր բան կը ցուցնեն։

Պ. Դերանունները մասնաւորապէս դէմք կը ցուցնեն. և դէմքը երեք է. առաջին, երկրորդ, երրորդ։ Առաջին դէմքն է խօսողը. երկրորդն է այն առ որ կը խօսուի. երրորդն է այն որոյ վրայով կը խօսուի։

58. Հ. Դերանունները քանի՞ տեսակ են։

Պ. Դերանունները չորս տեսակ են. էական կամ անձնական, ցուցական, ստացական և յարաբերական։

59. Հ. Էական դերանուն որո՞նք են։

Պ. Էական դերանուն են. ես, դու, սա, դա, նա, ինքն, իւր։

60. Հ. Այս դերանուններուն ո՞րը ինչ դէմք կը ցուցնէ։

Պ. Ես առաջին դէմքի դերանուն է. դու երկրորդ դէմքի, սա, դա, նա, ինքն, իւր երրորդ դէմքի։

61. Հ. Էական դերանուններն ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Էական դերանունները հետևեալ կերպով կը հոլովին։

Ա. ԴԷՄՔ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ես. | Ես. | Պէն. |
| Ս. | Իմ. | Իմ. | Պէնիմ. |

| | | | |
|---|---|---|---|
| Տ. | Ինձ . | Ինծի . | Պանա . |
| Հ. | զիս . | զիս . | Պէնի . |
| Բ. | յինէն . | Ինէ . | Պէնտէն . |
| Գ. | Ինեւ . | Իզմով . | Պէնիմ իլէ . |

Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Մեք . | Մենք . | Պիզ . |
| Ս. | Մեր . | Մեր . | Պիզիմ . |
| Տ. | Մեզ . | Մեզի . | Պիզէ . |
| Հ. | զՄեզ . | Մեզ . | Պիզի . |
| Բ. | 'ի Մէնջ . | Մենէ . | Պիզտէն . |
| Գ. | Մեօք . | Մեզմով . | Պիզիմ իլէ . |

Բ. ԴԷՄՔ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Դու . | Դուն . | Սէն . |
| Ս. | Քո . | Քու . | Սէնին . |
| Տ. | Քեզ . | Քեզի . | Սանա . |
| Հ. | զՔեզ . | Քեզ . | Սէնի . |
| Բ. | 'ի Քէն . | Քենէ . | Սէնտէն . |
| Գ. | Քեւ . | Քեզմով . | Սէնին իլէ . |

Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Դուք . | Դուք . | Սիզ . |
| Ս. | Ձեր . | Ձեր . | Սիզին . |
| Տ. | Ձեզ . | Ձեզի . | Սիզէ . |
| Հ. | զՁեզ . | Ձեզ . | Սիզի . |
| Բ. | 'ի Ձէնջ . | Ձենէ . | Սիզտէն . |
| Գ. | Ձեօք . | Ձեզմով . | Սիզին իլէ . |

Գ. ԴԷՄՔ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Նա . | Ան . | Օ . |
| Ս. | Նորա . | Անոր . | Օնուն . |

| | | | |
|---|---|---|---|
| Տ. | Նմա . | Անոր . | Օնա . |
| Հ. | զՆա . | զԱնի . | Օնու . |
| Բ. | 'ի Նմանէ . | Անկէ . | Օնտան . |
| Գ. | Նովաւ . | Անով . | Օնունըլա . |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Նոքա . | Անոնք . | Օնլար . |
| Ս. | Նոցա . | Անոնց . | Օնլարըն . |
| Տ. | Նոցա . | Անոնց . | Օնլարա . |
| Հ. | զՆոսա . | զԱնոնք . | Օնլարը . |
| Բ. | 'ի Նոցանէ . | Անոնցմէ . | Օնլարտան . |
| Գ. | Նոքօք . | Անոնցմով . | Օնլար իլէ . |

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ինքն . | Ինք . | Քէնտի . |
| Ս. | Ինքեան . | Իրեն . | Քէնտինին . |
| Տ. | Ինքեան . | Իրեն . | Քէնտինէ . |
| Հ. | զԻնքն . | զԻնք . | Քէնտինի . |
| Բ. | յԻնքենէ . | Իրմէ . | Քէնտինտէն . |
| Գ. | Ինքեամբ . | Իրմով . | Քէնտիսի իլէ . |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ինքեանք . | Իրենք . | Քէնտիլէրի . |
| Ս. | Ինքեանց . | Իրենց . | Քէնտիլէրինին . |
| Տ. | Ինքեանց . | Իրենց . | Քէնտիլէրինէ . |
| Հ. | զԻնքեանս . | զԻրենք . | Քէնտիլէրինի . |
| Բ. | յԻնքեանց . | Իրենցմէ . | Քէնտիլէրինտէն . |
| Գ. | Ինքեամբք . | Իրենցմով . | Քէնտիլէրի իլէ . |

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Զուանի . | | |
| Ս. | Իւրոյ իւրեան. | Իրեն . | Քէնտինին . |
| Տ. | Իւրոյ իւրեան. | Իրեն . | Քէնտինէ . |
| Հ. | Զուանի . | զԻնք . | Քէնտինի . |

| | | | |
|---|---|---|---|
| Բ. | յԻւրմէ . | Իրմէ . | Քէնտինտէն . |
| Գ. | Իւրեւ, իւր-եաւ, իւրեամբ. | Իրմով. | Քէնտիսի իլէ . |

Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Իւրեանք . | Իրենք . | Քէնտիլէրի . |
| Ս. | Իւրեանց . | Իրենց . | Քէնտիլէրինին . |
| Տ. | Իւրեանց . | Իրենց . | Քէնտիլէրինէ . |
| Հ. | զԻւրեանս . | զԻրենք . | Քէնտիլէրինի . |
| Բ. | յԻւրեանց . | Իրենցմէ . | Քէնտիլէրինտէն . |
| Գ. | Իւրեամբք . | Իրենցմով . | Քէնտիլէրի իլէ . |

Մա, տա դերանունները նային պէս կը հոլովին։

62. Հ. Ցուցական դերանուն ո՞րն է և ի՞նչպէս կը հոլովի։

Պ. Ցուցական դերանուն են այս, այդ, այն, որ հետևեալ կերպով կը հոլովին։

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այս . | Աս. | Պու . |
| Ս. | Այսր, այսորիկ . | Ասոր . | Պունուն . |
| Տ. | Այսմ, այսմիկ . | Ասոր . | Պունա . |
| Հ. | զԱյս . | Ասիկա . | Պունու . |
| Բ. | յԱյսմ, յայսմանէ . | Ասկէ . | Պունտան . |
| Գ. | Այսու, այսուիկ . | Ասով . | Պունուն իլէ . |

Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այսք, այսոքիկ . | Ասոնք . | Պունլար . |
| Ս. | Այսց, այսոցիկ . | Ասոնց . | Պունլարըն . |
| Տ. | Այսց, այսոցիկ . | Ասոնց . | Պունլարա . |
| Հ. | զԱյս, զայսոսիկ . | զԱսոնք . | Պունլարը . |
| Բ. | յԱյսց, յայսցանէ. | Ասոնցմէ . | Պունլարտան . |
| Գ. | Այսու, այսոքիւք. | Ասոնցմով . | Պունլար իլէ . |

5

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | Այդ, ատ, դա. | Այդք, այդոքին. |
| Ս. | Այդր, այդորին. | Այդց, այդոցին. |
| Տ. | Այդմ, այդմին. | Այդց, այդոցին. |
| Հ. | զԱյդ. | զԱյդ, զայդոսին. |
| Բ. | յԱյդմ, յայդմանէ. | յԱյդց, յայդցանէ. |
| Գ. | Այդու, այդուին. | Այդու, այդոքիւք. |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | Այն, ան. | Այնք, այնոքին. |
| Ս. | Այնր, այնորին. | Այնց, այնոցին. |
| Տ. | Այնմ, այնմին. | Այնց, այնոցին. |
| Հ. | զԱյն. | զԱյնս, զայնոսին. |
| Բ. | յԱյնմ, յայնմանէ. | յԱյնց, յայնցանէ. |
| Գ. | Այնու, այնուին. | Այնու, այնոքիւք. |

63. Հ. Ցուցականներն ինչպէս կը գործածուին։

Պ. Ցուցականներն, իբրև ածական, գոյականէն թէ՛ առաջ և թէ ետքը դրուելով անոր հետ մէկտեղ կը հոլովին։ Եթէ առաջ դրուին՝ կարճ հոլովները կը գործածուին, եթէ ետքը դրուին՝ երկայնները, և ամէն գոյականին վրայ ս, դ, ն գիրերը կ՚աւելցուին. զոր օրինակ.

ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | Այս տուն. | Այս տունք. |
| Ս. | Այսր տան. | Այսց տանց. |
| Տ. | Այսմ տան. | Այսց տանց. |
| Հ. | զԱյս տուն. | զԱյս տունս. |
| Բ. | յԱյսմ տանէ. | յԱյսց տանց. |
| Գ. | Այսու տամբ. | Այսու տամբք. |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Այդ տուն · | Այդ տունք · |
| Ս· | Այդր տան · | Այդց տանց · |
| Տ· | Այդմ տան · | Այդց տանց · |
| Հ· | ՚Այդ տուն · | ՚Այդ տունս · |
| Բ· | յԱյդմ տանէ · | յԱյդց տանց · |
| Գ· | Այդու տամբ · | Այդու տամբք · |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Այն տուն · | Այն տունք · |
| Ս· | Այնր տան · | Այնց տանց · |
| Տ· | Այնմ տան · | Այնց տանց · |
| Հ· | ՚Այն տուն · | ՚Այն տունս · |
| Բ· | յԱյնմ տանէ · | յԱյց տանց · |
| Գ· | Այնու տամբ · | Այնու տամբք · |

## ՎԵՐՋԸ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Տուն« այս · | Տունք« այսոքիկ · |
| Ս· | Տան« այսորիկ · | Տանց« այսոցիկ · |
| Տ· | Տան« այսմիկ · | Տանց« այսոցիկ · |
| Հ· | ՚Տուն« ՚այս · | ՚Տունս« ՚այսոսիկ · |
| Բ· | ՚էՏանէ« յայսմանէ · | ՚է Տանց« յայսցանէ · |
| Գ· | Տամբ« այսուիկ · | Տամբք« այսոքիւք· |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Տունդ այդ · | Տունքդ այդոքիկ · |
| Ս· | Տանդ այդորիկ · | Տանցդ այդոցիկ · |
| Տ· | Տանդ այդմիկ · | Տանցդ այդոցիկ · |
| Հ· | ՚Տունդ ՚այդ · | ՚Տունսդ ՚այդոսիկ · |
| Բ· | ՚էՏանէդ յայդմանէ · | ՚էՏանցդ յայդցանէ · |
| Գ· | Տամբդ այդուիկ · | Տամբքդ այդոքիւք· |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տուն այն . | Տունք այնոքիկ . |
| Ս. | Տան այնորիկ . | Տանց այնոցիկ . |
| Տ. | Տան այնմիկ . | Տանց այնոցիկ . |
| Հ. | զՏուն զայն . | զՏունս զայնոսիկ . |
| Բ. | ՚ի Տանէ յայնմանէ . | ՚ի Տանց յայնցանէ . |
| Գ. | Տամբ այնուիկ . | Տամբք այնոքիւք . |

64. Հ. ս, դ, ն գիրերն ի՞նչ են ։

Պ. ս, դ, ն գիրերն՝ այս, այդ, այն դերանուններուն կրճատեալն են, և դիմորոշ յօդ կը կոչուին, կամ անոնց զօրութիւնն ունին ։

65. Հ. Ստացական դերանուն որո՞նք են, և ինչպէս կը հոլովին ։

Պ. Ստացական դերանուն են իմ, քո, մեր, ձեր, իւր. Ասոնք հետևեալ կերպով կը հոլովին ։

Եզակի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Իմ . | Քո . | Մեր . | Ձեր . | Իւր . |
| Ս. | Իմոյ . | Քոյ, քոյոյ . | Մերոյ . | Ձերոյ . | Իւրոյ . |
| Տ. | Իմում . | Քում . | Մերում . | Ձերում . | Իւրում . |
| Հ. | զԻմ . | զՔո . | զՄեր . | զՁեր . | զԻւր . |
| Բ. | յԻմմէ . | ՚ի Քումմէ . | ՚ի Մերմէ . | ՚ի Ձերմէ . | յԻւրմէ . |
| Գ. | Իմով . | Քով, քոյով . | Մերով . | Ձերով . | Իւրով . |

Յոգնակի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Իմք . | Քոյք . | Մերք . | Ձերք . | Իւրք . |
| Ս. | Իմոց . | Քոց, քոյոց . | Մերոց . | Ձերոց . | Իւրոց . |
| Տ. | Իմոց . | Քոց, քոյոց . | Մերոց . | Ձերոց . | Իւրոց . |
| Հ. | զԻմս . | զՔոյս . | զՄերս . | զՁերս . | զԻւրս . |
| Բ. | յԻմոց . | ՚ի Քոց, քոյոց . | ՚ի Մերոց . | ՚ի Ձերոց . | յԻւրոց . |
| Գ. | Իմովք . | Քովք, քոյովք . | Մերովք . | Ձերովք . | Իւրովք . |

66. Հ. Ստացականներն ալ կրնա՞ն իբրև ածական գործածուիլ։

Պ. Ստացականներն ալ, իբրև ածական գործածուելով, գոյականներէն առաջ կամ ետքը կը դրուին և մէկտեղ կը հոլովին, այսպէս.

### ԱՌԱՋ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | իմ տուն. | իմ տունք. |
| Ս. | իմոյ տան. | իմոց տանց. |
| Տ. | իմում տան. | իմոց տանց. |
| Հ. | զիմ տուն. | զիմ տունս. |
| Բ. | յիմմէ տանէ. | յիմոց տանց. |
| Գ. | իմով տամբ. | իմովք տամբք. |

### ԵՏՔԸ ԴՐՈՒԱԾ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տուն իմ. | Տունք իմ. |
| Ս. | Տան իմոյ. | Տանց իմոց. |
| Տ. | Տան իմում. | Տանց իմոց. |
| Հ. | զՏուն իմ. | զՏունս իմ. |
| Բ. | ՚ի Տանէ իմմէ. | ՚ի Տանց իմոց. |
| Գ. | Տամբ իմով. | Տամբք իմովք. |

Այսպէս կ'ըլլան միւս ստացականներն ալ։

67. Հ. Յարաբերական դերանունը ո՞րն է, և ի՞նչպէս կը հոլովի։

Պ. Յարաբերական դերանունն է «ո՛ կամ ո», և հետևեալ կերպով կը հոլովի։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Որ, ո. | Որք, որք, ոյք. |
| Ս. | Որոյ, ոյր. | Որոց, ոյց. |

| | | |
|---|---|---|
| Տ. | Որում, ում. | Որոց, այց. |
| Հ. | զՈր, զո. | զՈր, զորս, զոյս. |
| Բ. | յՈրմէ, յումմէ. | յՈրոց, յոյց. |
| Գ. | Որով. | Որովք. |

# ԳԼՈՒԽ Դ.

## ՆԱԽԴԻՐ ԿԱՄ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

68. Հ. Ո՞ր բառեր Նախդիր կամ Նախադրութիւն կ՚ըսուին ։

Պ. Նախդիր կամ Նախադրութիւն կ՚ըսուին այն բառերը որոնք, հոլովեալ բառով մը, գործողութեան մը պարագաները, զոր օրինակ՝ տեղը, ժամանակը, կերպը, պատճառը, կը ցուցնեն ։

69. Հ. Նախադրութիւնները մինա՞կ կը գործածուին ։

Պ. Նախադրութիւնները մինակ չեն գործածուիր, այլ իրենցմէ ետքը բառ մը կ՚ուզեն, ապա թէ ոչ իմաստ մը չեն տար. զոր օրինակ, վասն, համար. Նախադրութիւն է. և առանձին իմաստ մը չի տար. բայց երբ կ՚ըսեմ, վասն Աստուծոյ, Աստուծոյ համար. վասն սիրոյ, սիրոյ համար, իմաստ մը կ՚իմանամ ։

70. Հ. Նախադրութեան քովի բառն ի՞նչ կը կոչուի ։

Պ. Նախադրութեան քովի բառը Նախադրութեան խնդիր կը կոչուի. ուստի վերի օրինակներուն մէջ, Աստուծոյ, սիրոյ, բառերը վասն Նախադրութեան խնդիր են ։

Այս տղան իր սենեկին մէջ, մինչեւ կէս գիշեր, կը նստի, իր վարժապետին հրամանին համեմատ, դասը պատրաստելու համար ։

Այս խօսքին մէջ՝ մէջ, մինչեւ, համեմատ, համար նախադրութիւն են, և նստելու գործողութեան տեղը, ժամանակը, կերպը և պատճառը կը ցուցնեն ։

71․ Հ․ Գլխաւոր նախադրութիւնները որո՞նք են ։

Պ․ Գլխաւոր նախադրութիւնները հետևեալներն են՝ ի, յ, ց, զ, առ, ընդ, ըստ ։ Ասոնք մասնաւոր նախդիր կը կոչուին ։

Դարձեալ,

Առաջի · առջեւը · էօնիւնէ, էօնիւնտէ
Զկնի / Զհետ } ետեւը, ետեւէն · արդընտա, արդընտան
Ի վերայ · վրան · իւսդիւնէ, իւսդիւնտէ
Ի ներքոյ · ներսը · իչէրիսինէ, իչէրիսինտէ
Ի մէջ / Ի միջի } մէջտեղը · օրթասընա, օրթասընտա
Արտաքոյ · դուրսը · տըշարըսընա, տըշարըսընտա
Յանդիման · դիմացը · գարշըսընա, գարշըսընտա
Ի վեր, 'ի վերոյ քան զ· (բանէ մը) վեր · եուգարը, եուգարըտա
Փոխանակ · տեղը · եէրինէ
Յետոյ · ետքին · արդընա, արդընտա
Յետ · ետքը · սօնրա
Յառաջ քան զ / Նախ քան զ } (բանէ մը) առաջ · էվվէլ
Ի ձեռն · ձեռքովը · էլի էլէ
Գաղտ · գաղտուկ · կիզլի

Հակառակ } դէմ . ղարշը
Ընդդէմ

Հանդերձ . մէկտեղ . պէրապէր

Շուրջ զ . բոլորտիքը . էթրաֆընտա , էթրաֆընտան

Մինչեւ 'ի } մինչեւ , . . . տէք , տա
Մինչեւ ց

Վասն
Յաղագս } համար . իչին
Սակս

# ԳԼՈՒԽ Ե.

## ԲԱՅ

72. Հ. Ո՞ր բառերը բայ կ'ըսուին ։

Պ. Բայ կ'ըսուին այն բառերը որ ընել, ըլլալ և կրել կը ցուցնեն. զոր օրինակ սէվէմ, կը սիրեմ. կէզէմ, կը պտըտիմ, բան մը ընել կը ցուցընեն. էմ, եմ. հասթալանըրըմ, կը հիւընդնամ, բան մը ըլլալ կը ցուցնեն. սէվիլէմ, կը սիրուիմ, կրել կը ցուցնէ, ուստի այս բառերը բայ են ։

73. Բայերը քանի՞ տեսակ են ։

Պ. Բայերը երեք տեսակ են. էական բայ, ներգործական բայ, և չէզոք բայ ։

74. Հ. Էական բայը ո՞րն է ։

Պ. Էական բայն է եմ ։

75. Հ. Ներգործական բայերը ո՞րչափ են և ի՞նչ կը ցուցնեն ։

Պ. Ներգործական բայերը շատ են, և ամէն ներգործական բայ կրաւորական կրնայ ունենալ ։

Ներգործականը գործողութիւնն ընել կը ցուցնէ .

կրաւորականը գործողութիւնը ներս (ընդունիլ) կը ցուցնէ. որ օրինակ, սէվէրիմ, կը սիրեմ, ներգործական է. սէվիլիրիմ, կը սիրուիմ, կրաւորական է։

76. Հ. Չէզոք բայերն ի՞նչ կը ցուցնեն։

Գ. Չէզոք բայերէն ոմանք ընել կը ցուցնեն. ինչպէս՝ չալըշմագ, տուրմաք, եիւրիւմէք. ոմանք ալ ըլլալ կը ցուցնեն, որ օրինակ, հասթալանմաք, զայըֆլամաք, սէմիզլէնմէք։ Բայց չէզոք բայերը կրաւորական չեն կրնար ունենալ։

77. Հ. Բայերն ի՞նչ ունին։

Գ. Բայերն ունին Թիւ, Դէմք, Ժամանակ և Եղանակ։

78. Հ. Թիւն ի՞նչ է։

Գ. Թիւը եզակին և յոգնակին է. որ օրինակ, սէվէրիմ, սէվէրսին, սէվէր, կը սիրեմ, կը սիրես, կը սիրէ՝ եզակի են. սէվէրիզ, սէվէրսինիզ, սէվէրլէր, կը սիրենք, կը սիրէք, կը սիրեն՝ յոգնակի են։

79. Հ. Դէմքը քանի՞ է։

Գ. Դէմքը երեք է, առաջին, երկրորդ, երրորդ, որ օրինակ, սէվէրիմ, կը սիրեմ՝ առաջին դէմք է. սէվէրսին, կը սիրես՝ երկրորդ դէմք է. սէվէր, կը սիրէ՝ երրորդ դէմք է։ Այսպէս ալ յոգնակին մէջ։

80. Հ. Ժամանակը քանի՞ է։

Գ. Ժամանակը բուն երեք է. Ներկայ, անցեալ, ապառնի։ Ներկան՝ հիմակուանը կը ցուցնէ, որ օրինակ, սէվէրիմ, կը սիրեմ՝ ներկայ է. Անցեալը՝ անցածը կը ցուցնէ. որ օրինակ, սէվտիմ, սիրեցի՝ անցեալ է. Ապառնին՝ գալիքը կը ցուցնէ. որ օրինակ, սէվէճէյիմ, պիտի սիրեմ՝ ապառնի է։

81․ Հ․ Անցեալը քանի՞ է ։

Պ․ Անցեալը երկու է, անկատար անցեալ, որ է սիրէի, կը սիրէի․ և կատարեալ անցեալ, որ է սիրեցի, սիրեցի ։

82․ Հ․ Եղանակը քանի՞ է ։

Պ․ Եղանակը չորս է․ սահմանական, հրամայական, ստորադասական և դերբայ ։

83․ Հ․ Դիմաւոր բայն ի՞նչ է ։

Պ․ Սահմանականը, հրամայականը և ստորադասականը դէմք ունին, և դիմաւոր բայ կը կոչուին․ իսկ դերբայը դէմք չունի, ուստի և անդէմ բայ կը կոչուի ։

84․ Հ․ Դերբայը քանի՞ է ։

Պ․ Դերբայը երեք է․ աներևոյթ, անցեալ ընդունելութիւն և ապառնի ընդունելութիւն․ զոր օրինակ, սիրել՝ աներևոյթ է․ սիրեալ՝ անցեալ ընդունելութիւն․ սիրելոց, սիրելի՝ ապառնի ընդունելութիւն ։

85․ Հ․ Բայի մը թիւը, դէմքը, ևայլն, ինչպէս կը ճանչցուին ։

Պ․ Բայի մը ինչ թիւ, ինչ դէմք, ինչ ժամանակ և ինչ եղանակ ըլլալը՝ բային վերջաւորութեանը փոխուելէն կը ճանչցուի ։

86․ Հ․ Այս փոփոխութեան ի՞նչ կ'ըսուի ։

Պ․ Թիւ, դէմք, ժամանակ և եղանակ ցուցընելու համար բային վերջաւորութեանը փոխուելուն՝ լծորդութիւն կ'ըսուի ։

87․ Հ․ Լծորդութիւնը քանի՞ է ։

Պ․ Լծորդութիւնը չորս է ։ Բայերէն ոմանք եմ կը վերջաւորին, զոր օրինակ, սիրեմ, հատանեմ․

ոմանք իմ կը վերջաւորին, զոր օրինակ, խօսիմ, ուսանիմ. ոմանք ամ կը վերջաւորին, զոր օրինակ, աղամ, խոստանամ. ոմանք ալ ում կը վերջաւորին, զոր օրինակ, Թողում, ընթեռնում ։

88. Հ. Կանոնաւոր բայերը ո՞րչափ են ։

Պ. Բայերուն մեծ մասը կանոնաւոր է, ոմանք ալ անկանոն են ։

89. Հ. Էական բայն ի՞նչպէս կը խոնարհի ։

Պ. Էական բայը կը խոնարհի հետեւեալ կերպով ։

*Սահմանական եղանակ, ներկայ*

**Եզակի**

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Եմ, | Եմ, | Պէն իմ |
| Բ. « Ես, | Ես, | Սէն սին |
| Գ. « Է, | Է, | Օ տուր |

**Յոքնակի**

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Եմք, | Ենք, | Պիզ իզ |
| Բ. « Էք, | Էք, | Սիզ սինիզ |
| Գ. « Են, | Են, | Օնլար տըր |

*Անցեալ անկատար*

**Եզակի**

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Էի, | Էի, | Պէն իտիմ |
| Բ. « Էիր; | Էիր, | Սէն իտին |
| Գ. « Էր, | Էր, | Օ իտի |

**Յոքնակի**

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Էաք, | Էինք, | Պիզ իտիք |
| Բ. « Էիք, | Էիք, | Սիզ իտինիզ |
| Գ. « Էին, | Էին, | Օնլար իտիլէր |

*Անցեալ կատարեալ*

**Եզակի**

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ. | Եղէ , | Եղայ , | Օլտում |
| Բ. | « Եղեր , | Եղար , | Օլտուն |
| Գ. | « Եղեւ , | Եղաւ , | Օլտու |

**Յոգնակի**

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ. | Եղաք , | Եղանք , | Օլտուք |
| Բ. | « Եղէք , | Եղաք , | Օլտունուզ |
| Գ. | « Եղեն , | Եղան , | Օլտուլար |

*Ապառնի*

**Եզակի**

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ. | Եղէց , | Պիտի ըլլամ , | Օլաճաղըմ |
| Բ. | « Եղիցիս , | Պիտի ըլլաս , | Օլաճագսըն |
| Գ. | « Եղիցի , | Պիտի ըլլայ , | Օլաճագ |

**Յոգնակի**

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ. | Եղիցուք , | Պիտի ըլլանք , | Օլաճաղըզ |
| Բ. | « Եղիջիք , | Պիտի ըլլաք , | Օլաճագսընըզ |
| Գ. | « Եղիցին , | Պիտի ըլլան , | Օլաճագլար |

*Հրամայական եղանակ*

**Եզակի**

| | | | |
|---|---|---|---|
| Բ. Դէմ. | Լեր , լիջիր , Լինիջիր , | Եղիր , | Օլ |
| | Մի՛ լինիր | Մի՛ ըլլար , | Օլմա |

**Յոգնակի**

| | | | |
|---|---|---|---|
| Բ. Դէմ. | Լերուք , եղերուք , լիջիք , լինիջիք , | Եղէք , | Օլուն |
| | Մի՛ լինիք , | Մի՛ ըլլաք , | Օլմայըն |

*Ստորադասական եղանակ*

**Եզակի**

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Իցեմ, | Ըլլամ, | Օլայըմ |
| Բ. « Իցես, | Ըլլաս, | Օլասըն |
| Գ. « Իցէ, | Ըլլայ, | Օլսուն |

**Յոգնակի**

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Իցեմք, | Ըլլանք, | Օլալըմ |
| Բ. « Իցէք, | Ըլլաք, | Օլասընըզ |
| Գ. « Իցեն, | Ըլլան, | Օլսունլար |

*Աներեւոյթ*

| | | |
|---|---|---|
| Անդէմ Լինել, | Ըլլալ, | Օլմագ |

*Անցեալ ընդունելութիւն*

| | |
|---|---|
| Անդէմ Լեալ, եղեալ, Եղած, | Օլմուշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Անդէմ Լինելոց, | Ըլլալու, | Օլաճագ |

90. Հ. Ա. լծորդութեան «սիրեմ» բային ներգործականն ինչպէս կը խոնարհի ։

Պ. Ա. լծորդութեան «սիրեմ» բային ներգործականը հետեւեալ կերպով կը խոնարհի ։

*Սահմանական եղանակ, ներկայ*

**Եզակի**

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր-եմ, | կը սիրեմ, | Սէվէրիմ |
| Բ. « Սիր-ես, | կը սիրես, | Սէվէրսին |
| Գ. « Սիր-է, | կը սիրէ, | Սէվէր |

**Յոգնակի**

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր-եմք, | կը սիրենք, | Սէվէրիզ |
| Բ. « Սիր-էք, | կը սիրէք, | Սէվէրսինիզ |
| Գ. « Սիր-են, | կը սիրեն, | Սէվէրլէր |

### Անցեալ անկատար

#### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ | Սիր-էէ, | Կը սիրէի, | Սէվէր էւէմ |
| Բ. « | Սիր-էէր, | Կը սիրէիր, | Սէվէր էւէն |
| Գ. « | Սիր-էր, | Կը սիրէր, | Սէվէր էւէ |

#### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ | Սիր-էաք, | Կը սիրէինք, | Սէվէր էւէք |
| Բ. « | Սիր-էէք, | Կը սիրէիք, | Սէվէր էւէնէղ |
| Գ. « | Սիր-էէն, | Կը սիրէին, | Սէվէր էւէվէր |

### Անցեալ կատարեալ

#### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ | Սիր-եցէ, | Սիրեցի, | Սէվւէմ |
| Բ. « | Սիր-եցէր | Սիրեցիր, | Սէվւէն |
| Գ. « | Սիր-եաց, | Սիրեց, | Սէվւէ |

#### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ | Սիր-եցաք | Սիրեցինք, | Սէվւէք |
| Բ. « | Սիր-եցէք, | Սիրեցիք, | Սէվւէնէղ |
| Գ. « | Սիր-եցէն, | Սիրեցին, | Սէվւէվէր |

### Ապառնի

#### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ | Սիր-եցէց, | Պիտի սիրեմ, | Սէվէճէյէմ |
| Բ. « | Սիր-եացես, | Պիտի սիրես, | Սէվէճէքաէն |
| Գ. « | Սիր-եացէ, | Պիտի սիրէ, | Սէվէճէք |

#### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմ | Սիր-եացուք, | Պիտի սիրենք, | Սէվէճէյէղ |
| Բ. « | Սիր-եաջէք, | Պիտի սիրէք, | Սէվէճէքանէղ |
| Գ. « | Սիր-եացէն, | Պիտի սիրեն, | Սէվէճէքվէր |

*Հրամայական եղանակ*

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Բ. Դէմք Սիր-եա, սիր-եաջիր, | Սիրէ, | Սեղ |
| Մի սիր-եր | Մի սիրեր, | Սեղձ |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Բ. Դէմք Սիր-եցէք, սիր-եաջիք, | Սիրեցէք, | Սեզին |
| Մի սիր-էք, | Մի սիրէք, | Սեղձեյին |

*Ստորադասական եղանակ*

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր-էցեմ | Սիրեմ, | Սեզեյեմ |
| Բ. « Սիր-էցես | Սիրես, | Սեզեսին |
| Գ. « Սիր-էցէ, | Սիրէ, | Սեղսին |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր-էցեմ | Սիրենք, | Սեզեյեմ |
| Բ. « Սիր-էցէք | Սիրէք, | Սեզեսինեղ |
| Գ. « Սիր-էցեն | Սիրեն, | Սեղսինյեր |

*Աներևոյթ*

| | | |
|---|---|---|
| Անդէմ Սիր-եւ, | Սիրել, | Սեղձք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Անդէմ Սիր-եաւ, | Սիրած, | Սեղծւ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Անդէմ Սիր-եւոց | Սիրելու, | Սեզեճէք |

Այսոր պէս կը խոնարհի ամէն եւ վերջաւոր-ուած կանոնաւոր բայ, ինչպէս

*Ներգործական*

| | | |
|---|---|---|
| Ազատ-եմ, | Ազատել, | Գուրթուլուրում |
| Փակ-եմ, | Գոցել, | Գափանըրըմ |
| Գան-եմ, | Ծեծել, | Տէօյիւլիւր |

*Չէզոք*

| | | |
|---|---|---|
| Ամաչ-եմ, | Ամչնալ, | Ուտանըրըմ |
| Գոչ--եմ, | Գոչել, | Պաղըրըրըմ |
| Ննջ-եմ, | Քնանալ, | Ույուրում |

91. Հ. Ա. լծորդութեան «եմ» բային կրաւորականն ինչպէս կը խոնարհի։

Պ. Ա. լծորդութեան «եմ» բային կրաւորականը հետեւեալ կերպով կը խոնարհի։

*Սահմանական եղանակ. Ներկայ*

**Եզակի**

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-իմ. | կը սիրուիմ. | Սէվիլիրիմ. |
| Բ. | » | Սիր-իս. | կը սիրուիս. | Սէվիլիրսին. |
| Գ. | » | Սիր-ի. | կը սիրուի. | Սէվիլիր. |

**Յոգնակի**

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-իմք. | կը սիրուինք. | Սէվիլիրիզ. |
| Բ. | » | Սիր-իք. | կը սիրուիք. | Սէվիլիրսինիզ. |
| Գ. | » | Սիր-ին. | կը սիրուին. | Սէվիլիրլէր. |

*Անցեալ անկատար*

**Եզակի**

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-էի. | կը սիրուէի. | Սէվիլիր էտիմ. |
| Բ. | » | Սիր-էիր. | կը սիրուէիր. | Սէվիլիր էտին. |
| Գ. | » | Սիր-էր. | կը սիրուէր. | Սէվիլիր էտի. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-էաք· | Կը սիրուէինք · | Սեվիլիր իտիք |
| Բ. » | Սիր-էիք · | Կը սիրուէիք · | Սեվիլիր իտինիզ |
| Գ. » | Սիր-էին · | Կը սիրուէին · | Սեվիլիր իտիլէր |

Անցեալ կատարեալ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-եցայ · | Սիրուեցայ · | Սեվիլտիմ |
| Բ. » | Սիր-եցար · | Սիրուեցար · | Սեվիլտին |
| Գ. » | Սիր-եցաւ · | Սիրուեցաւ · | Սեվիլտի |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-եցաք · | Սիրուեցանք · | Սեվիլտիք |
| Բ. » | Սիր-եցայք · | Սիրուեցաք · | Սեվիլտինիզ |
| Գ. » | Սիր-եցան · | Սիրուեցան · | Սեվիլտիլէր |

Ապառնի

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-եցայց · | Պիտի սիրուիմ · | Սեվիլէճէյիմ |
| Բ. » | Սիր-եսցիս · | Պիտի սիրուիս · | Սեվիլէճէքսին |
| Գ. » | Սիր-եսցի · | Պիտի սիրուի · | Սեվիլէճէք |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-եսցուք · | Պիտի սիրուինք · | Սեվիլէճէյիզ |
| Բ. » | Սիր-եսջիք · | Պիտի սիրուիք · | Սեվիլէճէքսինիզ |
| Գ. » | Սիր-եսցին · | Պիտի սիրուին · | Սեվիլէճէքլէր |

Հրամայական եղանակ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Բ. Դէմք | Սիր-եաց · | Սիրուէ · | Սեվիլ |
| | Մի սի-րեր · | Մի՛ սիրուիր · | Սեվիլմէ |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Բ. Դէմք | Սիր-եցարուք · | Սիրուեցէք · | Սեվիլին |
| | Մի սիր-էք · | Մի սիրուիք · | Սեվիլմէյին |

*Ստորադասական եղանակ*

*Եզակի*

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր—էցէմ . | Սիրուիմ . | Սեվիլէյիմ |
| Բ. » Սիր—էցէս . | Սիրուիս . | Սեվիլէսին |
| Գ. » Սիր—էցէ . | Սիրուի . | Սեվիլսին |

*Յոգնակի*

| | | |
|---|---|---|
| Ա. Դէմք Սիր—էցէմք . | Սիրուինք . | Սեվիլէլիմ |
| Բ. » Սիր—էցէք . | Սիրուիք . | Սեվիլէսինիզ |
| Գ. » Սիր—էցէն . | Սիրուին . | Սեվիլսինլէր |

*Աներևոյթ*

| | | |
|---|---|---|
| Անդէմ . Սիր—ել . | Սիրուիլ . | Սեվիլմէք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Անդէմ . Սիր—եալ . | Սիրուած . | Սեվիլմիշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Անդէմ . Սիր—ելէ . | Սիրուելու . | Սեվիլէճէկ |

92. Հ. Ա. լծորդութեան հատանեմ բային ներգործականն ի՞նչպէս կը խոնարհի ։

Պ. Ա. լծորդութեան հատանեմ բային ներգործականը կը խոնարհի այսպէս ։

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Հատ—անեմ . | կը կտրեմ . | Քէսէրիմ |
| Հատ—անես . | կը կտրես . | Քէսէրսին |
| Հատ—անէ . | կը կտրէ . | Քէսէր |
| Հատ—անեմք . | կը կտրենք . | Քէսէրիզ |
| Հատ—անէք . | կը կտրէք . | Քէսէրսինիզ |
| Հատ—անէն . | կը կտրեն . | Քէսէրլէր |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Հատ—անէի . | կը կտրէի . | Քէսէր իտիմ |
| Հատ—անէիր . | կը կտրէիր . | Քէսէր իտին |

| | | |
|---|---|---|
| Հատ-անէր · | Կը կտրէր · | Քէսէր իտի |
| Հատ-անէաք · | Կը կտրէինք · | Քէսէր իտիք |
| Հատ-անէիք · | Կը կտրէիք · | Քէսէր իտինիզ |
| Հատ-անէին · | Կը կտրէին · | Քէսէր իտիլէր |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Հատ-ի · | կտրեցի · | Քէստիմ |
| Հատ-էր · | կտրեցիր · | Քէստին |
| Հատ , է-հատ · | կտրեց · | Քէստի |
| Հատ-աք · | կտրեցինք · | Քէստիք |
| Հատ-էք · | կտրեցիք · | Քէստինիզ |
| Հատ-ին · | կտրեցին · | Քէստիլէր |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Հատ-իձ · | Պիտի կտրեմ · | Քէսէճէյիմ |
| Հատ-ցէս · | Պիտի կտրես · | Քէսէճէքսին |
| Հատ-ցէ · | Պիտի կտրէ · | Քէսէճէք |
| Հատ-ցաք · | Պիտի կտրենք · | Քէսէճէյիզ |
| Հատ-ձիք · | Պիտի կտրէք · | Քէսէճէքսինիզ |
| Հատ-ցէն · | Պիտի կտրեն · | Քէսէճէքլէր |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Հատ , հատ-ձիր , | | |
| հատ-անիձիր · | կտրէ · | Քէս |
| Մի հատ-անէր · | Մի կտրեր · | Քէսմէ |
| Հատ-էք, հատ-ձիք, | | |
| հատ-անիձիք · | կտրեցէք · | Քէսին |
| Մի հատ-անէք · | Մի կտրէք · | Քէսմէյին |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Հատ-անիցէմ · | կտրեմ · | Քէսէյիմ |
| Հատ-անիցէս · | կտրես · | Քէսէսին |
| Հատ-անիցէ · | կտրէ · | Քէսսին |
| Հատ-անիցէմք · | կտրենք · | Քէսէլիմ |

| | | |
|---|---|---|
| Հատ-անիցէք . | կտրէք . | Քէսէսինիզ |
| Հատ-անիցեն . | կտրեն . | Քէսսինլէր |

*Աներևոյթ*

| | | |
|---|---|---|
| Հատ-անել . | կտրել . | Քէսմէք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Հատ-եալ . | կտրած . | Քէսմիշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Հատ-անելոց . | կտրելու . | Քէսէճէք |

---

*Ներգործական*

| | | |
|---|---|---|
| Տես-անեմ . | Տեսնել . | Կէօրմէք |
| Բեկ-անեմ . | Կոտրել . | Գըրմաք |
| Արկ-անեմ . | Դնել . | Գօմաք |

*Չէզոք*

| | | |
|---|---|---|
| Անց-անեմ . | Անցնիլ . | Կէչմէք |
| Հաս-անեմ . | Հասնիլ . | Եէթիշմէք |
| Ել-անեմ . | Ելնել . | Չըգմաք |

93. Հ. Հատանեմ բային կրաւորականն ինչպէս կը խոնարհի։

Պ. Հատանեմ բային կրաւորականը կը խոնարհի այսպէս։

*Սահմանական, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Հատ-անիմ . | կը կտրուիմ . | Քէսիլիյօրում |
| Հատ-անիս . | կը կտրուիս . | Քէսիլիյօրսուն |
| Հատ-անի . | կը կտրուի . | Քէսիլիյօր |
| Հատ-անիմք . | կը կտրուինք . | Քէսիլիյօրուզ |
| Հատ-անիք . | կը կտրուիք . | Քէսիլիյօրսունուզ |
| Հատ-անին . | կը կտրուին . | Քէսիլիյօրլար |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Հատ–անէյ · | Կը կտրուէի · | Քէսիլիրդիմ |
| Հատ–անէիր · | Կը կտրուէիր · | Քէսիլիրդին |
| Հատ–անէր · | Կը կտրուէր · | Քէսիլիրդի |
| Հատ–անէաք · | Կը կտրուէինք · | Քէսիլիրդիք |
| Հատ–անէիք · | Կը կտրուէիք · | Քէսիլիրդինիզ |
| Հատ–անէին · | Կը կտրուէին - | Քէսիլիրդիլէր |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Հատ–այ · | Կտրուեցայ · | Քէսիլդիմ |
| Հատ–ար · | Կտրուեցար · | Քէսիլդին |
| Հատ–աւ · | Կտրուեցաւ · | Քէսիլդի |
| Հատ–աք · | Կտրուեցանք · | Քէսիլդիք |
| Հատ–այք · | Կտրուեցաք · | Քէսիլդինիզ |
| Հատ–ան · | Կտրուեցան · | Քէսիլդիլէր |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Հատ–այց · | Պիտի կտրուիմ · | Քէսիլէճէյիմ |
| Հատ–ցէս · | Պիտի կտրուիս · | Քէսիլէճէքսին |
| Հատ–ցէ · | Պիտի կտրուի · | Քէսիլէճէք |
| Հատ–ցսաք · | Պիտի կտրուինք · | Քէսիլէճէյիզ |
| Հատ–ջէք · | Պիտի կտրուիք · | Քէսիլէճէքսինիզ |
| Հատ–ցէն · | Պիտի կտրուին · | Քէսիլէճէքլէր |

*Հրամայական*

| | | |
|---|---|---|
| Հատ–էր · | Կտրուէ · | Քէսիլ |
| Մի հատ–անէր · | Մի կտրուիր · | Քէսիլմէ |
| Հատ–արսաք · | Կտրուեցէք · | Քէսիլին |
| Մի հատ–անէք · | Մի կտրուիք · | Քէսիլմէյին |

*Ստորադասական*

| | | |
|---|---|---|
| Հատ–անէյցէմ · | Կտրուիմ · | Քէսիլէյիմ |
| Հատ–անէյցէս · | Կտրուիս · | Քէսիլէսին |
| Հատ–անէյցէ · | Կտրուի · | Քէսիլսին |

| | | |
|---|---|---|
| Հատ–անիցեմք . | կտրուինք . | Կէսիլիրիզ |
| Հատ–անիցէք . | կտրուիք . | Կէսիլիրսինիզ |
| Հատ–անիցեն . | կտրուին . | Կէսիլիրլէր |

*Աներեւոյթ*

| | | |
|---|---|---|
| Հատ–անել . | կտրուիլ . | Կէսիլմէք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Հատ–եալ . | կտրուած . | Կէսիլմիշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Հատ–անելի . | կտրուելու . | Կէսիլէճէք |

94. Հ. Բ. լծորդութեան խօսիմ բայն ինչպէ՞ս կը խոնարհի ։

Պ. Բ. լծորդութեան խօսիմ բայը կը խոնարհի այսպէս ։

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Խօս–իմ . | կը խօսիմ . | Սէօյլէրիմ |
| Խօս–իս . | կը խօսիս . | Սէօյլէրսին |
| Խօս–ի . | կը խօսի . | Սէօյլէր |
| Խօս–իմք . | կը խօսինք . | Սէօյլէրիզ |
| Խօս–իք . | կը խօսիք . | Սէօյլէրսինիզ |
| Խօս–ին . | կը խօսին . | Սէօյլէրլէր |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Խօս–էի . | կը խօսէի . | Սէօյլէր իտիմ |
| Խօս–էիր . | կը խօսէիր . | Սէօյլէր իտին |
| Խօս–էր . | կը խօսէր . | Սէօյլէր իտի |
| Խօս–էաք . | կը խօսէինք . | Սէօյլէր իտիք |
| Խօս–էիք . | կը խօսէիք . | Սէօյլէր իտինիզ |
| Խօս–էին . | կը խօսէին . | Սէօյլէր իտիլէր |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Խօս–եցայ . | խօսեցայ . | Սէօյլէտիմ |
| Խօս–եցար . | խօսեցար . | Սէօյլէտին |

| | | |
|---|---|---|
| խօս–եցաւ · | խօսեցաւ · | Սէօյլէտի |
| խօս–եցաք · | խօսեցանք · | Սէօյլէտիք |
| խօս–եցայք · | խօսեցայք · | Սէօյլէտինիզ |
| խօս–եցան · | խօսեցան · | Սէօյլէտիլէր |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| խօս–եցայց · | Պիտի խօսիմ · | Սէօյլէյէճէյիմ |
| խօս–եօցես · | Պիտի խօսիս · | Սէօյլէյէճէքսին |
| խօս–եօցէ · | Պիտի խօսի · | Սէօյլէյէճէք |
| խօս–եօցոաք · | Պիտի խօսինք · | Սէօյլէյէճէյիզ |
| խօս–եօջէք · | Պիտի խօսիք · | Սէօյլէյէճէքսինիզ |
| խօս–եօցէն · | Պիտի խօսին · | Սէօյլէյէճէքլէր |

*Հրամայական*

| | | |
|---|---|---|
| խօս–եայ, խօս–եօջէր · | խօսէ · | Սէօյլէ |
| Մի խօս–էր · | Մի խօսիր · | Սէօյլէմէ |
| խօս–եցարուաք, խօս–եօջէք · | խօսեցէք · | Սէօյլէյին |
| Մի խօս–էք · | Մի խօսիք · | Սէօյլէմէյին |

*Ստորադասական*

| | | |
|---|---|---|
| խօս–էցեմ · | խօսիմ · | Սէօյլէյէյիմ |
| խօս–էցես · | խօսիս · | Սէօյլէյէսին |
| խօս–էցէ · | խօսի · | Սէօյլէսին |
| խօս–էցեմք · | խօսինք · | Սէօյլէյէլիմ |
| խօս–էցեք · | խօսիք · | Սէօյլէյէսինիզ |
| խօս–էցեն · | խօսին · | Սէօյլէսինլէր |

*Աներևոյթ*

| | | |
|---|---|---|
| խօս–եղ · | խօսիլ · | Սէօյլէմէք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| խօս–եալ · | խօսած · | Սէօյլէմիշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Խօս-ելոց · | Խօսելու · | Սէօյլէյէճէք |

*Ներգործական*

| | | |
|---|---|---|
| Բարբառ-եմ · | Խօսիլ · | Սէօյլէմէք |
| Խոստովան-եմ · | Խոստովանիլ · | Իգրար էթմէք |
| Համար-եմ · | Համրել · Համարիլ · | Սայմագ |

*Չէզոք*

| | | |
|---|---|---|
| Աշխատ-եմ · | Աշխատիլ · | Չալըշմագ · |
| Երեւ-եմ · | Երեւիլ · | Կէօրիւնմէք |
| Դադար-եմ · | Դադրիլ · | Տուրմագ |

95. Հ. Բ. լծորդութեան ուսանիմ բայն ինչպէ՞ս կը խոնարհի ։

Պ. Բ. լծորդութեան ուսանիմ բայը կը խոնարհի այսպէս ։

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Ուս-անիմ · | կը սորվիմ · | Էօյրէնիրիմ |
| Ուս-անիս · | կը սորվիս · | Էօյրէնիրսին |
| Ուս-անի · | կը սորվի · | Էօյրէնիր |
| Ուս-անիմք · | կը սորվինք · | Էօյրէնիրիզ |
| Ուս-անիք · | կը սորվիք · | Էօյրէնիրսինիզ |
| Ուս-անին · | կը սորվին · | Էօյրէնիրլէր |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Ուս-անէի · | կը սորվէի · | Էօյրէնիր իտիմ |
| Ուս-անէիր · | կը սորվէիր · | Էօյրէնիր իտին |
| Ուս-անէր · | կը սորվէր · | Էօյրէնիր իտի |
| Ուս-անէաք · | կը սորվէինք · | Էօյրէնիր իտիք |
| Ուս-անէիք · | կը սորվէիք · | Էօյրէնիր իտինիզ |
| Ուս-անէին · | կը սորվէին · | Էօյրէնիր իտիլէր |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Ուս–այ · | Սորվեցայ · | Էօյրէնտիմ |
| Ուս–ար · | Սորվեցար · | Էօյրէնտին |
| Ուս–աւ · | Սորվեցաւ · | Էօյրէնտի |
| Ուս–աք · | Սորվեցանք · | Էօյրէնտիք |
| Ուս–այք · | Սորվեցաք · | Էօյրէնտինիզ |
| Ուս–ան · | Սորվեցան · | Էօյրէնտիլէր |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Ուս–այց · | Պիտի սորվիմ · | Էօյրէնէճէյիմ |
| Ուս–ցես · | Պիտի սորվիս · | Էօյրէնէճէքսին |
| Ուս–ցէ · | Պիտի սորվի · | Էօյրէնէճէք |
| Ուս–ցուք · | Պիտի սորվինք · | Էօյրէնէճէյիզ |
| Ուս–ջիք · | Պիտի սորվիք · | Էօյրէնէճէքսինիզ |
| Ուս–ցեն · | Պիտի սորվին · | Էօյրէնէճէքլէր |

*Հրամայական*

| | | |
|---|---|---|
| Ուս–իր , ուս–ջիր , ուս–անիջիր · | Սորվէ · | Էօյրէն |
| Մի ուս–անիր · | Մի սորվիր · | Էօյրէնմէ |
| Ուս–արուք , ուս–ջիք , ուս–անիջիք · | Սորվեցէք · | Էօյրէնին |
| Մի ուս–անիք · | Մի սորվիք · | Էօյրէնմէյին |

*Ստորադասական*

| | | |
|---|---|---|
| Ուս–անիցիմ · | Սորվիմ · | Էօյրէնէյիմ |
| Ուս–անիցիս · | Սորվիս · | Էօյրէնէսին |
| Ուս–անիցի · | Սորվի · | Էօյրէնսին |
| Ուս–անիցիմք · | Սորվինք · | Էօյրէնէլիմ |
| Ուս–անիցիք · | Սորվիք · | Էօյրէնէսինիզ |
| Ուս–անիցին · | Սորվին · | Էօյրէնսինլէր |

*Աներեւոյթ*

| | | |
|---|---|---|
| Ուս–անել · | Սորվիլ · | Էօյրէնմէք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Ուս-եալ. | Սորված. | Էօյրէնմիշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Ուս-անելոց. | Սորվելու. | Էօյրէնէճէք |

---

*Ներգործական*

| | | |
|---|---|---|
| Ագ-անիմ. | Հագնիլ. | Կէյմէք |
| Ծն-անիմ. | Ծնանիլ. | Տօղուրմաք |
| Սկս-անիմ. | Սկսիլ. | Պաշլամաք |

*Չէզոք*

| | | |
|---|---|---|
| Անկ-անիմ. | Իյնալ. | Տիւշմէք |
| Մեռ-անիմ. | Մեռնիլ. | Էօլմէք |
| Սն-անիմ. | Սնանիլ. | Պէսլէնմէք |

96. Հ. Բ. լծորդութեան իմ և անիմ վերջաւորած ներգործական բայերուն կրաւորականն ի՞նչպէս է։

Պ. Իմ և անիմ վերջաւորած ներգործական բայերուն կրաւորականը ներգործականին հետ նոյն է. այս պատճառաւ այս բայերը հասարակ բայ կոչուած են։ Զոր օրինակ, խօսիմ, ուսանիմ, թէ կը խօսիմ, կը սորվիմ, և թէ կը խօսուիմ, կը սորվուիմ, կը նշանակեն։

97. Հ. Գ. լծորդութեան աղամ բային ներգործականն ի՞նչպէս կը խոնարհի։

Պ. Գ. լծորդութեան աղամ բային ներգործականը կը խոնարհի այսպէս։

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Աղ-ամ. | կ'աղամ. | Էօյիւտիւրիւմ |
| Աղ-աս. | կ'աղաս. | Էօյիւտիւրսիւն |

| | | |
|---|---|---|
| Աղ–այ · | Կ'աղայ · | Ի–յէ–ոէ–ր |
| Աղ–ամ+ · | Կ'աղանք · | Ի–յէ–ոէ–րէ–ղ |
| Աղ–այ+ · | Կ'աղաք · | Ի–յէ–ոէ–րուէ–նէ–ղ |
| Աղ–ան · | Կ'աղան · | Ի–յէ–ոէ–րլէր |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| •Աղ–այէ · | Կ'աղայի · | Ի–յէ–ոէ–ր էոէմ |
| Աղ–այէր · | Կ'աղայիր · | Ի–յէ–ոէ–ր էոէն |
| Աղ–այր · | Կ'աղար · | Ի–յէ–ոէ–ր էոէ |
| • Աղ–այա+ · | Կ'աղայինք · | Ի–յէ–ոէ–ր էոէ+ |
| Աղ–այէ+ · | Կ'աղայիք · | Ի–յէ–ոէ–ր էոէնէղ |
| Աղ–այէն · | Կ'աղային · | Ի–յէ–ոէ–ր էոէլէր |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Աղ–ացէ · | Աղացի · | Ի–յէ–Րոէ–մ |
| Աղ–ացէր · | Աղացիր · | Ի–յէ–Րոէ–ն |
| Աղ–աց · | Աղաց · | Ի–յէ–Րոէ– |
| Աղ–ացա+ · | Աղացինք · | Ի–յէ–Րոէ–+ |
| Աղ–ացէ+ · | Աղացիք · | Ի–յէ–Րոէ–նէ–ղ |
| Աղ–ացէն · | Աղացին · | Ի–յէ–Րոէ–լէր |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Աղ–ացէց · | Պիտի աղամ · | Ի–յէ–ոէճէյէմ |
| Աղ–աուցէս · | Պիտի աղաս · | Ի–յէ–ոէճէ+ուէն |
| Աղ–աուցէ · | Պիտի աղայ · | Ի–յէ–ոէճէ+ |
| Աղ–աուցու+ · | Պիտի աղանք · | Ի–յէ–ոէճէյէղ |
| Աղ–աուջէ+ · | Պիտի աղաք · | Ի–յէ–ոէճէ+ուէնէղ |
| Աղ–աուցէն · | Պիտի աղան · | Ի–յէ–ոէճէ+լէր |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Աղ–ա, կամ աղ–աուջէր · | Աղա · | Ի–յէ–Ր |
| Մի աղ–ար · | Մի աղար · | Ի–յէ–Րվ |
| Աղ–ացէ+, կամ աղ–աուջէ+ · | Աղացէք · | Ի–յէ–ոէ–ն |
| Մի աղ–այ+ · | Մի աղաք · | Ի–յէ–Րվյէն |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Աղ-այցեմ · | Աղամ · | Իօյէ-տէյիմ |
| Աղ-այցես · | Աղաս · | Իօյէ-տէսին |
| Աղ-այցէ · | Աղայ · | Իօյէ-տօէ-ն |
| Աղ-այցեմք · | Աղանք · | Իօյէ-տէլիմ |
| Աղ-այցէք · | Աղաք · | Իօյէ-տէսինիզ |
| Աղ-այցեն · | Աղան · | Իօյէ-տօէ-նլէր |

*Աներևոյթ*

| | | |
|---|---|---|
| Աղ-ալ · | Աղալ · | Իօյէ-Թմէք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Աղ-ացեալ · | Աղացած · | Իօյէ-Թմիշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Աղ-ալոց · | Աղալու · | Իօյէ-տէճէք |

---

*Ներգործական*

| | | |
|---|---|---|
| Խոկ-ամ · | Մտածել · | Տէ-շէ-նմէք |
| Կարդ-ամ · | Կանչել · | Չաղըրմագ |
| Ողբ-ամ · | Ողբալ · | Աղլամագ |

*Չէզոք*

| | | |
|---|---|---|
| Գն-ամ · | Երթալ · | Կէթմէք |
| Խաղ-ամ · | Խաղալ · | Օյնամագ |
| Փութ-ամ · | Փութալ · | Էվէթլէմէք |

98· Հ· Գ· Լծորդութեան աղամ բային կրաւորականն ի՛նչպէս կը խոնարհի ։

Պ· Գ· Լծորդութեան աղամ բային կրաւորականը կը խոնարհի այսպէս ։

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Աղ-ամ · | Կ'աղացուիմ · | Իօյէ-տէ-լէ-րէ-մ |
| Աղ-աս · | Կ'աղացուիս · | Իօյէ-տէ-լէ-րօէ-ն |

| | | |
|---|---|---|
| Աղ—այ . | Կ'աղացուի . | Ի—յէ—տէ—լէ—ր |
| Աղ—ամք . | Կ'աղացուինք . | Ի—յէ—տէ—լէ—րէ—զ |
| Աղ—այք . | Կ'աղացուիք . | Ի—յէ—տէ—լէ—րսէ—նէզ |
| Աղ—ան . | Կ'աղացուին . | Ի—յէ—տէ—լէ—րլէր |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Աղ—այէ . | Կ'աղացուէի . | Ի—յէ—տէ—լէ—ր էտէմ |
| Աղ—այէր . | Կ'աղացուէիր . | Ի—յէ—տէ—լէ—ր էտէն |
| Աղ—այր . | Կ'աղացուէր . | Ի—յէ—տէ—լէ—ր էտէ |
| Աղ—այաք . | Կ'աղացուէինք . | Ի—յէ—տէ—լէ—ր էտէք |
| Աղ—այէք . | Կ'աղացուէիք . | Ի—յէ—տէ—լէ—ր էտէնէզ |
| Աղ—այէն . | Կ'աղացուէին . | Ի—յէ—տէ—լէ—ր էտէլէր |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Աղ—ացայ . | Աղացուեցայ . | Ի—յէ—տէ—լտէ—մ |
| Աղ—ացար . | Աղացուեցար . | Ի—յէ—տէ—լտէ—ն |
| Աղ—ացա— . | Աղացուեցաւ . | Ի—յէ—տէ—լտէ— |
| Աղ—ացաք . | Աղացուեցանք . | Ի—յէ—տէ—լտէ—ք |
| Աղ—ացայք . | Աղացուեցաք . | Ի—յէ—տէ—լտէ—նէ—զ |
| Աղ—ացան . | Աղացուեցան . | Ի—յէ—տէ—լտէ—լէր |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Աղ—ացայց . | Պիտի աղացուիմ . | Ի—յէ—տէ—լէճէյէմ |
| Աղ—ասցէս . | Պիտի աղացուիս . | Ի—յէ—տէ—լէճէքսէն |
| Աղ—ասցէ . | Պիտի աղացուի . | Ի—յէ—տէ—լէճէք |
| Աղ—ասցուք . | Պիտի աղացուինք . | Ի—յէ—տէ—լէճէյէզ |
| Աղ—ասջէք . | Պիտի աղացուիք . | Ի—յէ—տէ—լէճէքսէնէզ |
| Աղ—ասցէն . | Պիտի աղացուին . | Ի—յէ—տէ—լէճէքլէր |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Աղ—ացէր . | Աղացուէ . | Ի—յէ—տէ—լ |
| Մի աղ—ար . | Մի աղացուիր . | Ի—յէ—տէ—լմէ |
| Աղ—ացարուք . | Աղացուեցէք . | Ի—յէ—տէ—լէ—ն |
| Մի աղ—այք . | Մի աղացուիք . | Ի—յէ—տէ—լմէյէն |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Աղ–այցէմ · | Աղացուիմ · | Ի–յէ–տէ–լէյէմ |
| Աղ–այցէս · | Աղացուիս · | Ի–յէ–տէ–լէսէն |
| Աղ–այցէ · | Աղացուի · | Ի–յէ–տէ–լէ–ն |
| Աղ–այցէմք · | Աղացուինք · | Ի–յէ–տէ–լէլէմ |
| Աղ–այցէք · | Աղացուիք · | Ի–յէ–տէ–լէսէնէզ |
| Աղ–այցէն · | Աղացուին · | Ի–յէ–տէ–լէ–նլէր |

*Աներեւոյթ*

| | | |
|---|---|---|
| Աղ–ալ · | Աղացուիլ · | Ի–յէ–տէ–լմէք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Աղ–ացեալ · | Աղացուած · | Ի–յէ–տէ–լմիշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Աղ–ալէ · | Աղացուելու · | Ի–յէ–տէ–լէճէք |

99. Հ. Գ. լծորդութեան գործածական բային ներգործականն ինչպէս կը խոնարհի ։

Պ. Գ. լծորդութեան գործածական բային ներգործականը կը խոնարհի այսպէս ։

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Գող–անամ · | Կը գողնամ · | Չալըրըմ |
| Գող–անաս · | Կը գողնաս · | Չալըրսըն |
| Գող–անայ · | Կը գողնայ · | Չալըր |
| Գող–անամք · | Կը գողնանք · | Չալըրըզ |
| Գող–անայք · | Կը գողնաք · | Չալըրսընըզ |
| Գող–անան · | Կը գողնան · | Չալըրլար |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Գող–անայէ · | Կը գողնայի · | Չալըր իտըմ |
| Գող–անայէր · | Կը գողնայիր · | Չալըր իտըն |
| Գող–անայր · | Կը գողնար · | Չալըր իտը |

| | | |
|---|---|---|
| Գող-անայաք · | Կը գողնայինք · | Չալար իտիք |
| Գող-անայիք · | Կը գողնայիք · | Չալար իտինիզ |
| Գող-անային · | Կը գողնային · | Չալար իտիլար |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Գող-ացայ · | Գողցայ · | Չալտըմ |
| Գող-ացար · | Գողցար · | Չալտըն |
| Գող-ացաւ · | Գողցաւ · | Չալտը |
| Գող-ացաք · | Գողցանք · | Չալտըք |
| Գող-ացայք · | Գողցաք · | Չալտընըզ |
| Գող-ացան · | Գողցան · | Չալտըլար |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Գող-ացայց · | Պիտի գողնամ · | Չալաճաղըմ |
| Գող-ասցիս · | Պիտի գողնաս · | Չալաճագսըն |
| Գող-ասցի · | Պիտի գողնայ · | Չալաճագ |
| Գող-ասցուք · | Պիտի գողնանք · | Չալաճաղըզ |
| Գող-ասջիք · | Պիտի գողնաք · | Չալաճագսընըզ |
| Գող-ասցին · | Պիտի գողնան · | Չալաճագլար |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Գող-ացիր, Գող-ասջիր · | Գողցիր · | Չալ |
| Մի գող-անար · | Մի գողնար · | Չալմա |
| Գող-ացարուք, գող-ասջիք · | Գողցէք · | Չալըն |
| Մի գող-անայք · | Մի գողնաք · | Չալմայըն |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Գող-անայցեմ · | Գողնամ · | Չալայըմ |
| Գող-անայցես · | Գողնաս · | Չալասըն |
| Գող-անայցէ · | Գողնայ · | Չալսըն |
| Գող-անայցեմք · | Գողնանք · | Չալալըմ |
| Գող-անայցէք · | Գողնաք · | Չալասընըզ |
| Գող-անայցեն · | Գողնան · | Չալսընլար |

*Աներևոյթ*

| | | |
|---|---|---|
| Գող-անալ ․ | Գողնալ ․ | Ձալընմագ |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Գող-ացեալ ․ | Գողցած ․ | Ձալընմըշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Գող-անալոյ ․ | Գողնալու ․ | Ձալընաճագ |

100․ Հ․ Գողանամ բային կրաւորականն ի՞նչպէս կը խոնարհի ։

Պ․ Գողանամ բային կրաւորականը կը խոնարհի այսպէս ։

*Սահմանական եղանակ , ներկայ*

| | | |
|---|---|---|
| Գող-անամ ․ | Կը գողցուիմ ․ | Ձալընըրըմ |
| Գող-անաս ․ | Կը գողցուիս ․ | Ձալընըրսըն |
| Գող-անայ ․ | Կը գողցուի ․ | Ձալընըր |
| Գող-անամք ․ | Կը գողցուինք ․ | Ձալընըրըզ |
| Գող-անայք ․ | Կը գողցուիք ․ | Ձալընըրսընըզ |
| Գող-անան ․ | Կը գողցուին ․ | Ձալընըրլար |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Գող-անայի ․ | Կը գողցուէի ․ | Ձալընըր ըտըմ |
| Գող-անայիր ․ | Կը գողցուէիր ․ | Ձալընըր ըտըն |
| Գող-անայր ․ | Կը գողցուէր ․ | Ձալընըր ըտը |
| Գող-անայաք ․ | Կը գողցուէինք ․ | Ձալընըր ըտըգ |
| Գող-անայիք ․ | Կը գողցուէիք ․ | Ձալընըր ըտընըզ |
| Գող-անային ․ | Կը գողցուէին ․ | Ձալընըր ըտըլար |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Գող-ացայ ․ | Գողցուեցայ ․ | Ձալընտըմ |
| Գող-ացար ․ | Գողցուեցար ․ | Ձալընտըն |
| Գող-ացաւ ․ | Գողցուեցաւ ․ | Ձալընտը |

| | | |
|---|---|---|
| Գող-ացաք · | Գողցուեցանք · | Չալընդըք |
| Գող-ացայք · | Գողցուեցաք · | Չալընդընըզ |
| Գող-ացան · | Գողցուեցան · | Չալընդըլար |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Գող-ացայց · | Պիտի գողցուիմ · | Չալընաճաղըմ |
| Գող-ասցես · | Պիտի գողցուիս · | Չալընաճագսըն |
| Գող-ասցէ · | Պիտի գողցուի · | Չալընաճագ |
| Գող-ասցուք · | Պիտի գողցուինք · | Չալընաճաղըզ |
| Գող-ասջիք · | Պիտի գողցուիք · | Չալընաճագսընըզ |
| Գող-ասցեն · | Պիտի գողցուին · | Չալընաճագլար |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Գող-ացիր, Գող-ասջիր · | Գողցուէ · | Չալըն |
| Մի գող-անար · | Մի գողցուիր · | Չալընմա |
| Գող-ացարուք, գող-ասջիք · | Գողցուեցէք · | Չալընըն |
| Մի գող-անայք · | Մի գողցուիք · | Չալընմայըն |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Գող-անայցեմ · | Գողցուիմ · | Չալընայըմ |
| Գող-անայցես · | Գողցուիս · | Չալընասըն |
| Գող-անայցէ · | Գողցուի · | Չալընսըն |
| Գող-անայցեմք · | Գողցուինք · | Չալընալըմ |
| Գող-անայցէք · | Գողցուիք · | Չալընասընըզ |
| Գող-անայցեն · | Գողցուին · | Չալընսընլար |

*Աներեւոյթ*

| | | |
|---|---|---|
| Գող-անալ · | Գողցուիլ · | Չալընմագ |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Գող-ացեալ · | Գողցուած · | Չալընմըշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Գող-անալի · | Գողցուելու · | Չալընաճագ |

101. Հ. Դ. լծորդութեան [illegible] բային ներգործականն ինչպէս կը խոնարհի։

Պ. Դ. լծորդութեան [illegible] բային ներգործականը կը խոնարհի այսպէս։

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Թող-[illegible] . | կը թողում . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողուս . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողու . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողունք . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողուք . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողուն . | [illegible] |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Թող-[illegible] . | կը թողուի . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողուիր . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողուր . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողուինք . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողուիք . | [illegible] |
| Թող-[illegible] . | կը թողուին . | [illegible] |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Թող-[illegible] . | Թողուցի . | [illegible] |
| Թող-[illegible] . | Թողուցիր . | [illegible] |
| Թող, [illegible]-թող . | Թողուց . | [illegible] |
| Թող-[illegible] . | Թողուցինք . | [illegible] |
| Թող-[illegible] . | Թողուցիք . | [illegible] |
| Թող-[illegible] . | Թողուցին . | [illegible] |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Թող-[illegible] . | Պիտի թողում . | [illegible] |
| Թող-[illegible] . | Պիտի թողուս . | [illegible] |
| Թող-[illegible] . | Պիտի թողու . | [illegible] |

| | | |
|---|---|---|
| Թող-ցուք · | Պիտի թողունք · | Պըրագաճաղըզ |
| Թող-ջիք · | Պիտի թողուք · | Պըրագաճագսընըզ |
| Թող-ցեն · | Պիտի թողուն · | Պըրագաճագլար |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Թող, թող-ջիր · | Թող · | Պըրագ |
| Մի թող-ուր · | Մի թողուր · | Պըրագմա |
| Թող-էք, թող-ջիք · | Թողէք · | Պըրագըն |
| Մի թող-ուք · | Մի թողուք · | Պըրագմայըն |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Թող-ուցում · | Թողում · | Պըրագայըմ |
| Թող-ուցուս · | Թողուս · | Պըրագասըն |
| Թող-ուցու · | Թողու · | Պըրագսըն |
| Թող-ուցումք · | Թողունք · | Պըրագալըմ |
| Թող-ուցուք · | Թողուք · | Պըրագասընըզ |
| Թող-ուցուն · | Թողուն · | Պըրագսընլար |

*Աներեւոյթ*

| | | |
|---|---|---|
| Թող-ուլ · | Թողուլ · | Պըրագմագ |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Թող-եալ · | Թողած · | Պըրագմըշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Թող-լոց · | Թողելու · | Պըրագաճագ |

102. Հ. Թողուլ բային կրաւորականն ի՞նչպէս կը խոնարհի ։

Պ. Թողուլ բային կրաւորականը կը խոնարհի այսպէս ․

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Թող—ում · | Կը թողուիմ · | [illegible] |
| Թող—ուս · | Կը թողուիս · | [illegible] |
| Թող—ու · | Կը թողուի · | [illegible] |
| Թող—ումք · | Կը թողուինք · | [illegible] |
| Թող—ուք · | Կը թողուիք · | [illegible] |
| Թող—ուն · | Կը թողուին · | [illegible] |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Թող—ուէ · | Կը թողուէի · | [illegible] |
| Թող—ուէր · | Կը թողուէիր · | [illegible] |
| Թող—այր · | Կը թողուէր · | [illegible] |
| Թող—ուաք · | Կը թողուէինք · | [illegible] |
| Թող—ուէք · | Կը թողուէիք · | [illegible] |
| Թող—ուէն · | Կը թողուէին · | [illegible] |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Թող—այ · | Թողուեցայ · | [illegible] |
| Թող—ար · | Թողուեցար · | [illegible] |
| Թող—աւ · | Թողուեցաւ · | [illegible] |
| Թող—աք · | Թողուեցանք · | [illegible] |
| Թող—այք · | Թողուեցաք · | [illegible] |
| Թող—ան · | Թողուեցան · | [illegible] |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Թող—այց · | Պիտի թողուիմ · | [illegible] |
| Թող—ցէս · | Պիտի թողուիս · | [illegible] |
| Թող—ցէ · | Պիտի թողուի · | [illegible] |
| Թող—ցաք · | Պիտի թողուինք · | [illegible] |
| Թող—ջէք · | Պիտի թողուիք · | [illegible] |
| Թող—ցէն · | Պիտի թողուին · | [illegible] |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Թող—էր, թող—ջէր · | Թողուէ · | [illegible] |
| Մի թո—ղուր · | Մի թողուիր · | [illegible] |

| | | |
|---|---|---|
| Թող-արուէ, | | |
| Թող-ջէ . | Թողուեցէք . | Պրաքըլըն |
| Մի թող-ուէ . | Մի թողուլիք . | Պրաքըլմայըն |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Թող-ոացոամ . | Թողուլիմ . | Պրաքըլայըմ |
| Թող-ոացոաս . | Թողուլիս . | Պրաքըլասըն |
| Թող-ոացոա . | Թողուլի . | Պրաքըլսըն |
| Թող-ոացոամէ . | Թողուլինք . | Պրաքըլալըմ |
| Թող-ո-ացոաէ . | Թողուլիք . | Պրաքըլասընըզ |
| Թող-ոացոան . | Թողուլին . | Պրաքըլսընլար |

*Աներեւոյթ*

| | | |
|---|---|---|
| Թող-ոալ . | Թողուլիլ . | Պրաքըլմաք |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Թող-էալ . | Թողուած . | Պրաքըլմըշ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Թող-ըէ . | Թողուելու . | Պրաքըլաճաք |

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

103. Հ. Առաջին լծորդութեան, այսինքն եւ վերջաւորուած անկանոն բայերը քանի՞ հատ են ։

Պ. Առաջին լծորդութեան, այսինքն, եւ վերջաւորուած անկանոն բայերը 12 հատ են .

Առնեմ . ընել , էթմէք
Ասեմ . ըսել , տէմէք
Գիտեմ . գիտնալ , պիլմէք
Դնեմ . դնել , գօյմաք
Ըմպեմ . խմել , իչմէք
Լսեմ . լսել , իշիթմէք
Կարեմ . կրնալ , գատիր օլմաք
Ճանաչեմ . ճանչնալ , տանըմաք

Մեղանչեմ . մեղանչել , վնասել , կիւնահ էյլէմէք , ղուսուր գըլմագ

Յառնեմ . ելլել , գալգմագ

Յանցանեմ . յանցանք ընել , գապահաթ էթմէք

Ուտեմ . ուտել , եէմէք

104. Հ. Այս բայերն ի՞նչպէս կը խոնարհին ։

Պ. Այս բայերը կը խոնարհին այսպէս .

*Սահմանական եղանակ , ներկայ*

| | | | |
|---|---|---|---|
| Առնեմ | Առեմ | Գիտեմ | Դնե՛մ |

*Անցեալ անկատար*

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի | Առէի | Գիտէի | Դնէի |

*Անցեալ կատարեալ*

| | | | |
|---|---|---|---|
| Առարի | Առացի | Գիտացի | Եդի |
| Առարեր | Առացեր | Գիտացեր | Եդիր |
| Առար | Առաց | Գիտաց | Եդ |
| Առարաք | Առացաք | Գիտացաք | Եդաք |
| Առարէք | Առացէք | Գիտացէք | Եդիք |
| Առարին | Առացին | Գիտացին | Եդին |

*Ապառնի*

| | | | |
|---|---|---|---|
| Առարից | Առացից | Գիտացից | Եդից |
| Առասցես | Առասցես | Գիտասցես | Դիցես |
| Առասցէ | Առասցէ | Գիտասցէ | Դիցէ |
| Առասցուք | Առասցուք | Գիտասցուք | Դիցուք |
| Առասջիք | Առասջիք | Գիտասջիք | Դիջիք |
| Առասցեն | Առասցեն | Գիտասցեն | Դիցեն |

*Հրամայական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Առա | Առա | Գիտա | Դիր |
| մի առներ | մի առեր | մի գիտեր | մի դներ |
| Առարէք | Առացէք | Գիտացէք | Դիք |
| մի առնէք | մի առէք | մի գիտէք | մի դնէք |

*Ստորադասական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցեմ | Ասիցեմ | Գիտիցեմ | Գնիցեմ |

*Աներևոյթ*

| | | | |
|---|---|---|---|
| Առնել | Ասել | Գիտել | Գնել |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Արարեալ | Ասացեալ | Գիտացեալ | Եղեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Առնելոց | Ասելոց | Գիտելոց | Գնելոց |

---

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպեմ | Լսեմ | Կարեմ | Ճանաչեմ |

*Անցեալ անկատար*

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպէի | Լսէի | Կարէի | Ճանաչէի |

*Անցեալ կատարեալ*

| | | | |
|---|---|---|---|
| Արբի | Լուայ | Կարացի | Ծանեայ |
| Արբեր | Լուար | Կարացեր | Ծանեար |
| Արբ, էարբ | Լուաւ | Կարաց | Ծանեաւ |
| Արբաք | Լուաք | Կարացաք | Ծանեաք |
| Արբէք | Լուայք | Կարացէք | Ծանեայք |
| Արբին | Լուան | Կարացին | Ծանեան |

*Ապառնի*

| | | | |
|---|---|---|---|
| Արբից | Լուայց | Կարացից | Ծանեայց |
| Արբցես | Լուիցես | Կարասցես | Ծանիցես |
| Արբցէ | Լուիցէ | Կարասցէ | Ծանիցէ |
| Արբցուք | Լուիցուք | Կարասցուք | Ծանիցուք |
| Արբջիք | Լուիջիք | Կարասջիք | Ծանիջիք |
| Արբցեն | Լուիցեն | Կարասցեն | Ծանիցեն |

*Հրամայական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Արբ | Լուր | Չունի | Ծանիր |
| մի ըմպեր | մի լսեր | | մի ճանաչեր |
| Արբէք | Լուարուք | | Ծաներուք |
| մի ըմպէք | մի լսէք | | մի ճանաչէք |

*Ստորադասական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպիցեմ | Լսիցեմ | Կարիցեմ | Ճանաչիցեմ |

*Աներևոյթ*

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպել | Լսել | Կարել | Ճանաչել |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Արբեալ | Լուեալ | Կարացեալ | Ծանուցեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպելոց | Լսելոց | Չունի | Ճանաչելոց |

---

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչեմ | Յառնեմ * | Յանցանեմ | Ուտեմ |

*Անցեալ անկատար*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչէի | Յառնէի | Յանցանէի | Ուտէի |

*Անցեալ կատարեալ*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայ | Յարեայ | Յանցեայ | Կերայ, կերի |
| Մեղար | Յարեար | Յանցեար | Կերար, կերեր |
| Մեղաւ | Յարեաւ | Յանցեաւ | Կերաւ, եկեր |
| Մեղաք | Յարեաք | Յանցեաք | Կերաք |
| Մեղայք | Յարեայք | Յանցեայք | Կերայք |
| Մեղան | Յարեան | Յանցեան | Կերան, կերին |

---

* Յառնել նստած կամ պառկած տեղէն ելլել կը նշանակէ. Ելնել վեր կամ դուրս ելլել կը նշանակէ ։

*Ապառնի*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայց | Յարեայց | Յանցեայց | Կերայց |
| Մեղիցես | Յարիցես | Յանցիցես | Կերիցես |
| Մեղիցէ | Յարիցէ | Յանցիցէ | Կերիցէ |
| Մեղիցուք | Յարիցուք | Յանցիցուք | Կերիցուք |
| Մեղիջիք | Յարիջիք | Յանցիջիք | Կերիջիք |
| Մեղիցեն | Յարիցեն | Յանցիցեն | Կերիցեն |

*Հրամայական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղիր | Արի | Յանցիր | Կեր |
| մի մեղանչեր | մի յառներ | մի յանցաներ | մի ուտեր |
| Մեղարուք | Արիք | Յանցերուք | Կերայք |
| մի մեղանչէք | մի յառնէք | մի յանցանէք | մի ուտէք |

*Ստորադասական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչիցեմ | Յառնիցեմ | Յանցանիցեմ | Ուտիցեմ |

*Աներևոյթ*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչել | Յառնել | Յանցանել | Ուտել |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղուցեալ | Յարուցեալ | Յանցուցեալ | Կերեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչելոց | Յառնելոց | Յանցանելոց | Ուտելոց |

105. Հ. Երկրորդ լծորդութեան, այսինքն իմ վերջաւորուած անկանոն բայերը քանի՞ հատ են։

Պ. Երկրորդ լծորդութեան, այսինքն իմ վերջաւորուած անկանոն բայերը 7 հատ են.

Եղանիմ }
Լինիմ } ըլալ, օլմագ

Ունիմ. ունենալ, մալիք օլմագ

Ընդունիմ. ընդունիլ, գապուլ էթմէք

Տանիմ․ տանիլ, կէօթիւրմէք
Մարթիմ․ կրնալ, գադիր օլմագ
Երկնչիմ․ վախնալ, գօրգմագ

106․ Հ․ Այս բայերն ի՞նչպէս կը խոնարհին ։
Պ․ Այս բայերը կը խոնարհին այսպէս ․

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիմ | Լինիմ | Ունիմ | Ընդունիմ |

*Անցեալ անկատար*

| | | | |
|---|---|---|---|
| Եղանէի | Լինէի | Ունէի | Ընդունէի |

*Անցեալ կատարեալ*

| | | | |
|---|---|---|---|
| Եղէ | Նոյն է | կալայ | Ընկալայ |
| Եղեր | | կալար | Ընկալար |
| Եղեւ | | կալաւ | Ընկալաւ |
| Եղաք | | կալաք | Ընկալաք |
| Եղէք | | կալայք | Ընկալայք |
| Եղեն | | կալան | Ընկալան |

*Ապառնի*

| | | | |
|---|---|---|---|
| Եղէց | Լիցիմ | կալայց | Ընկալայց |
| Եղիցիս | Լիցիս | կալցիս | Ընկալցիս |
| Եղիցի | Լիցի | կալցի | Ընկալցի |
| Եղիցուք | Լիցուք | կալցուք | Ընկալցուք |
| Եղիջիք | Լիջիք | կալջիք | Ընկալջիք |
| Եղիցին | Լիցին | կալցին | Ընկալցին |

*Հրամայական*

| | | | |
|---|---|---|---|
| Եղիջիր | Լեր, լիջիր, լինիջիր | կալ, կա, կալջիր | Ընկալ, ընկալջիր |
| Մի եղանիր | մի լինիր | մի ունիր | մի ընդունիր |
| Եղերուք, եղիջիք | Լերուք, լիջիք, լինիջիք | կալարուք, կալջիք | Ընկալարուք, ընկալջիք |
| Մի եղանիք | մի լինիք | մի ունիք | մի ընդունիք |

*Ստորադասական*

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիցիմ | Լինիցիմ | Ունիցիմ | Ընդունիցիմ |

*Աներևոյթ*

| | | | |
|---|---|---|---|
| Եղանել | Լինել | Ունել | Ընդունել |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Եղեալ | Լեալ | Կալեալ | Ընկալեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Եղանելոց | Լինելոց | Ունելոց | Ընդունելոց |

---

*Խառնական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Տանիմ | Մարթիմ | Երկնչիմ |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Տանէի | Մարթէի | Երկնչէի |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Տարայ | Մարթացայ | Երկեայ |
| Տարար | Մարթացար | Երկեար |
| Տարաւ | Մարթացաւ | Երկեաւ |
| Տարաք | Մարթացաք | Երկեաք |
| Տարայք | Մարթացայք | Երկեայք |
| Տարան | Մարթացան | Երկեան |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Տարայց | Մարթացայց | Երկեայց |
| Տարցիս | Մարթասցիս | Երկիցես |
| Տարցի | Մարթասցի | Երկիցէ |
| Տարցուք | Մարթասցուք | Երկիցուք |
| Տարջիք | Մարթասջիք | Երկիջիք |
| Տարցին | Մարթասցին | Երկիցեն |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Տար, տարձիր<br>մի տանիր | Չունէ | Երկիր, երկիձիր,<br>մի երկնչիձիր |
| Տարայք, տարձիք<br>մի տանիք | | Երկերուք, երկիձիք, երկնչիձիք,<br>մի երկնչիք |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Տանիցիմ | Մարթիցիմ | Երկնչիցիմ |

*Աներեւոյթ*

| | | |
|---|---|---|
| Տանել | Մարթել | Երկնչել |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Տարեալ | Մարթացեալ | Երկուցեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Տանելոց | Մարթելոց | Երկնչելոց |

107. Հ. Այս բայերուն պէս խոնարհող ուրիշ բայեր կա՞ն ։

Պ. Քանի մը չել վերջաւորուած բայեր ճիշդ երկնչելին պէս կը խոնարհին . զոր օրինակ .

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մարտնչիմ | Մարտեայ | Մարտեայց | Մարտիր | Մարտուցեալ |
| Մատչիմ | Մատեայ | Մատեայց | Մատիր | Մատուցեալ |
| Հանգչիմ | Հանգեայ | Հանգեայց | Հանգիր | Հանգուցեալ |
| Կորնչիմ | Կորեայ | Կորեայց | Կորիր | Կորուսեալ |
| Թռչիմ | Թռեայ | Թռեայց | Թռիր | Թռուցեալ |
| Թաքչիմ | Թաքեայ | Թաքեայց | Թաքիր | Թաքուցեալ |

108. Հ. Երրորդ լծորդութեան անկանոն բայերը քանի՞ հատ են ։

Պ. Երրորդ լծորդութեան անկանոն բայերը 7 հատ են .

Գամ · գալ , կէլմէք
Երթամ · երթալ , կիթմէք
Լամ · լալ , աղլամաք
Կամ · կենալ , տուրմաք
Կեամ · ապրիլ , եաշամաք
Տամ · տալ , վէրմէք
Բամ · ըսել , տէմէք

109· Հ· Այս բայերն ինչպէս կը խոնարհին ։
Պ· Այս բայերը կը խոնարհին այսպէս ·

*Սահմանական , ներկայ*

| | | | |
|---|---|---|---|
| Գամ | Երթամ | Լամ | Կամ |

*Անցեալ անկատար*

| | | | |
|---|---|---|---|
| Գայի | Երթայի | Լայի | Կայի |

*Անցեալ կատարեալ*

| | | | |
|---|---|---|---|
| Եկի | Չոքայ | Լացի | Կացի |
| Եկիր | Չոքար | Լացեր | Կացեր |
| Եկն | Չոքաւ | Լաց , ելաց | Կաց , եկաց |
| Եկաք | Չոքաք | Լացաք | Կացաք |
| Եկիք | Չոքայք | Լացէք | Կացէք |
| Եկին | Չոքան | Լացին | Կացին |

*Ապառնի*

| | | | |
|---|---|---|---|
| Եկից | Երթայց | Լացից | Կացից |
| Եկեսցես | Երթիցես | Լասցես | Կասցես |
| Եկեսցէ | Երթիցէ | Լասցէ | Կասցէ |
| Եկեսցուք | Երթիցուք | Լասցուք | Կասցուք |
| Եկեսջիք | Երթիջիք | Լասջիք | Կասջիք |
| Եկեսցեն | Երթիցեն | Լասցեն | Կասցեն |

*Հրամայական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Եկ, եկես-ջիր | Երթ, երթի-ջիր | Լաց, լաց-ջիր | Կաց՛, կացջիր |
| մի՛ գար | մի՛ երթար | մի՛ լար | մի՛ կար |
| Եկայք, ե-կեսջիք | Երթայք, եր-թիջիք | Լացէք, լաց-ջիք | Կացէք, կաց-ջիք |
| մի՛ գայք | մի՛ երթայք | մի՛ լայք | մի՛ կայք |

*Ստորադասական*

| | | | |
|---|---|---|---|
| Գայցեմ | Երթայցեմ | Լայցեմ | Կայցեմ |

*Աներևոյթ*

| | | | |
|---|---|---|---|
| Գալ | Երթալ | Լալ | Կալ |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Եկեալ | Երթեալ | Լացեալ | Կացեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Գալոց | Երթալոց | Լալոց | Կալոց |

---

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Կեամ | Տամ | Բամ* |
| Կեաս | Տաս | Բաս |
| Կեայ | Տայ | Բայ |
| Կեամք | Տամք | |
| Կեայք | Տայք | |
| Կեան | Տան | |

*Անցեալ անկատար*

| | |
|---|---|
| Կէի | Տայի |
| Կէիր | Տայիր |
| Կեար | Տայր |

* Բամ բային ներկայ եղ. երեք դէմքը միայն, և գրեթէ միշտ ասեմ բային հետ մէկտեղ կը գործածուին ։

| | |
|---|---|
| կէաք | Տայաք |
| կէիք | Տայիք |
| կէին | Տային |

*Անցեալ կատարեալ*

| | |
|---|---|
| կեցի | Ետու |
| կեցեր | Ետուր |
| կեաց , եկեաց | Ետ |
| կեցաք | Տուաք |
| կեցէք | Ետուք |
| կեցին | Ետուն |

*Ապառնի*

| | |
|---|---|
| կեցից | Տաց |
| կեցցես | Տացես |
| կեցցէ | Տացէ |
| կեցցուք | Տացուք |
| կեցջիք | Տաջիք |
| կեցցեն | Տացեն |

*Հրամայական*

| | |
|---|---|
| կեաց , կեցջիր , մի կեար | Տուր , տաջիր , մի տար |
| կեցէք , կեցջիք , մի կեայք | Տուք , տաջիք , մի տայք |

*Ստորադասական*

| | |
|---|---|
| կեայցեմ | Տայցեմ |

*Աներեւոյթ*

| | |
|---|---|
| կեալ | Տալ |

*Անցեալ ընդունելութիւն*

| | |
|---|---|
| կեցեալ | Տուեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | |
|---|---|
| կելոց | Տալոց |

110. Հ. Չորրորդ լծորդութեան անկանոն բայերը քանի՞ հատ են։

Պ. Չորրորդ լծորդութեան, այսինքն ում վերջաւորեալ բայերուն մէջ անկանոն կրնան համարուիլ երդնում, երդում ընել, բայց և քանի մը նում վերջաւորեալ բայեր որոնց խոնարհման կերպը նեմ վերջաւորուած բայերուն խոնարհմանը շատ մօտ է։ Գոմ պակասաւոր բայն ալ որ լինել, գոյ ըլլալ կը նշանակէ, չորրորդ լծորդութեան կը վերաբերի։

111. Հ. Այս բայերն ի՞նչպէս կը խոնարհին։

Պ. Այս բայերը կը խոնարհին սա կերպով։

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Երդնում | Այանում | Գոմ * |
| Երդնուս | Այանուս | Գոս |
| Երդնու | Այանու | Գոյ |
| Երդնումք | Այանումք | Գոմք |
| Երդնուք | Այանուք | Գոյք |
| Երդնուն | Այանուն | Գոն |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Երդնուի | Այանուի | Գոյի |
| Երդնուիր | Այանուիր | Գոյիր |
| Երդնոյր | Այանոյր | Գոյր |
| Երդնուաք | Այանուաք | Գոյաք |

* Գոմ բայն էական բայ չէ. այլ չէզոք է և աշխարհաբար կայ բային նշանակութիւնն ունի. ուստի եմ բային պէս գործածելի չէ. և պէտք չէ ըսել հիւանդ գոմ. կամ առողջ գոլ, փոխանակ ըսելու հիւանդ եմ. կամ առողջ լինել։

| | | |
|---|---|---|
| Երդնուլիք | Այտնուլիք | Գոլիք |
| Երդնուլին | Այտնուլին | Գոլին |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Երդուայ | Այտեայ | Չունէ |
| Երդուար | Այտեար | |
| Երդուաւ | Այտեաւ | |
| Երդուաք | Այտեաք | |
| Երդուայք | Այտեայք | |
| Երդուան | Այտեան | |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Երդուայց | Այտեայց | |
| Երդուիցես | Այտիցես | |
| Երդուիցէ | Այտիցէ | Գուցէ |
| Երդուիցուք | Այտիցուք | |
| Երդուիջիք | Այտիջիք | |
| Երդուիցեն | Այտիցեն | Գուցեն |

*Հրամայական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Երդուիր, երդուիջիր | Այտիր, այտի՛ջիր | Չունէ |
| մի երդնուր | մի այտնուր | |
| Երդուարուք, երդուիջիք | Այտերուք, այտիջիք | |
| մի երդնուք | մի այտնուք | |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Երդնուցում | Այտնուցում | Չունէ |

*Աներևոյթ*

| | | |
|---|---|---|
| Երդնուլ | Այտնուլ | Գոլ |

*Անցեալ ընդունելութեան*

Երգուեալ    Այտուցեալ

*Ապառնի ընդունելութեան*

Երգնլոց    Այտնլոց

112. Հ. Այտնումին պէս խոնարհող ուրիշ բայերը որո՞նք են ։

Պ. Այտնումին պէս խոնարհող բայեր են ․

| *Սհմ. ներ.* | *Կտր.* | *Ապռ.* | *Հրմ.* | *Անց. ընդ.* |
|---|---|---|---|---|
| Զարթնում | Զարթեայ | Զարթեայց | Զարթիր<br>Յգ. Զարթիք | Զարթուցեալ |
| Ոստնում | Ոստեայ | Ոստեայց | Ոստիր | Ոստուցեալ |
| Սարտնում | Սարտեայ | Սարտեայց | Սարտիր | Սարտուցեալ |
| Ցասնում | Ցասեայ | Ցասեայց | Ցասիր | Ցասուցեալ |
| Քաղցնում | Քաղցեայ | Քաղցեայց | Քաղցիր | Քաղցեալ |

## ԱՆԿԱՆՈՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

113. Հ. Անկանոն բայերուն մէջ ներգործականները ցուցուր՝ անոնց ամէն մէկուն կրաւորականներովը ։

Պ. Անկանոն բայերուն ներգործականները հետեւեալներն են իրենց կրաւորականներովը ։

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Ներգ. | Առնեմ | Ընել | ԷԹՄԷՔ |
| | Կրաւ. | Առնիմ | Ըլլուիլ | ԷՏԻԼՄԷՔ |
| 2 | Ներգ. | Ասեմ | Ըսել | ՏԷՄԷՔ |
| | Կրաւ. | Ասիմ | Ըսուիլ | ՏԷՆՄԷՔ |
| 3 | Ներգ. | Գիտեմ | Գիտնալ | ՊԻԼՄԷՔ |
| | Կրաւ. | Գիտիմ | Գիտցուիլ | ՊԻԼԻՆՄԷՔ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Ներգ. | Դնեմ | Դնել | Գօմաք |
| | Կրաւ. | Դնիմ | Դրուիլ | Գօնմաք |
| 5 | Ներգ. | Ըմպեմ | Խմել | Իչմէք |
| | Կրաւ. | Ըմպիմ | Խմուիլ | Իչիլմէք |
| 6 | Ներգ. | Ճանաչեմ | Ճանչնալ | Թանըմաք |
| | Կրաւ. | Ճանաչիմ | Ճանչցուիլ | Թանընմաք |
| 7 | Ներգ. | Ուտեմ | Ուտել | Եէմէք |
| | Կրաւ. | Ուտիմ | Ուտուիլ | Եէնմէք |
| 8 | Ներգ. | Լսեմ | Լսել | Իշիթմէք |
| | Կրաւ. | Լսիմ | Լսուիլ | Իշիթիլմէք |
| 9 | Ներգ. | Տամ | Տալ | Վէրմէք |
| | Կրաւ. | Տուեալ լինիմ | Տրուիլ | Վէրիլմէք |
| 10 | Ներգ. և Կրաւ. | Պարտիմ | Պարտական ըլլալ | Պօրճլու օլմաք |

*Կրաւորական. Սահմանական ներկայ*

| | | | |
|---|---|---|---|
| Առնիմ | Ասիմ | Գիտիմ | Դնիմ |

*Անցեալ անկատար*

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի | Ասէի | Գիտէի | Դնէի |

*Անցեալ կատարեալ*

| | | | |
|---|---|---|---|
| Արարայ | Ասացայ | Գիտացայ | Եդայ |
| Արարար | Ասացար | Գիտացար | Եդար |
| Արարաւ | Ասացաւ | Գիտացաւ | Եդաւ |
| Արարաք | Ասացաք | Գիտացաք | Եդաք |
| Արարայք | Ասացայք | Գիտացայք | Եդայք |
| Արարան | Ասացան | Գիտացան | Եդան |

*Ապառնի*

| | | | |
|---|---|---|---|
| Արարայց | Ասացայց | Գիտացայց | Եդայց |
| Արասցիս | Ասասցիս | Գիտասցիս | Դիցիս |
| Արասցի | Ասասցի | Գիտասցի | Դիցի |

| | | | |
|---|---|---|---|
| Արասցուք | Ասասցուք | Գիտասցուք | Դիցուք |
| Արասջիք | Ասասջիք | Գիտասջիք | Դիջիք |
| Արասցեն | Ասասցեն | Գիտասցեն | Դիցեն |

*Հրամայական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Արասջիր, առնիջիր | Ասացիր, ասիջիր, ասասջիր | Գիտացիր, գիտասջիր | Դնիջիր, դիջիր |
| մի առնիր | մի ասիր | մի գիտիր | մի դնիր |
| Արասջիք, առնիջիք | Ասացարուք, ասիջիք, ասասջիք | Գիտացարուք, գիտասջիք, | Եդարուք, դիջիք, դնիջիք |
| մի առնիք | մի ասիք | մի գիտիք | մի դնիք |

*Ստորադասական եղանակ*

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցեմ | Ասիցեմ | Գիտիցեմ | Դնիցեմ |

*Աներևոյթ*

| | | | |
|---|---|---|---|
| Առնել (իլ) | Ասել (իլ) | Գիտել (իլ) | Դնել (իլ) |

*Անցեալ ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Արարեալ | Ասացեալ | Գիտացեալ | Եդեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | | |
|---|---|---|---|
| Առնելի | Ասելի | Գիտելի | Դնելի |

---

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Ըմպեմ | Ճանաչեմ | Ուտեմ |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Ըմպէի | Ճանաչէի | Ուտէի |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Արբայ | Ծանուցայ* | կեր եղէ** |
| Արբար | Ծանուցար | կեր եղեր |
| Արբաւ | Ծանուցաւ | կեր եղեւ |
| Արբաք | Ծանուցաք | կեր եղաք |
| Արբայք | Ծանուցայք | կեր եղէք |
| Արբան | Ծանուցան | կեր եղեն |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Արբայց | Ծանուցայց | կեր եղէց |
| Արբցիս | Ծանուսցիս | կեր եղիցիս |
| Արբցի | Ծանուսցի | կեր եղիցի |
| Արբցուք | Ծանուսցուք | կեր եղիցուք |
| Արբջիք | Ծանուսջիք | կեր եղիջիք |
| Արբցին | Ծանուսցին | կեր եղիցին |

*Հրամայական*

| | | |
|---|---|---|
| Արբիր | Ծանուցիր | կեր լեր |
| մի ըմպեր | մի ճանաչեր | մի լիներ կեր |
| Արբերուք | Ծանուցարուք | կեր լերուք |
| մի ըմպէք | մի ճանաչէք | մի լինիք կեր |

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Ըմպիցեմ | Ճանաչիցեմ | Ուտիցեմ |

*Աներևոյթ*

| | | |
|---|---|---|
| Ըմպել (իլ) | Ճանաչել (իլ) | Ուտել (իլ) |

---

* Ճանաչել բային արմատական անունը, ծանօթ բառը, եմ, լինել բայերով գործածուելով կրաւորականի մէջ կուտայ այսպէս, ծանօթ եմ կամ լինիմ, ծանօթ էի, ծանօթ եղէ, ծանօթ եղէց, ծանօթ լեր, որ կը նշանակեն կը ճանչցուիմ, կը ճանչցուէի, ճանչցուեցայ, եւայլն ։

** փոխանակ կեր բառին կրնայ ըստ տեղւոյն գործածուիլ նաև ճարակ բառն, այսպէս ճարակ լինիմ, եղէ, եղէց, լեր, որ կը նշանակէ նոյնպէս կ'ուտուիմ, կ'ուտուէի, կերուեցայ, եւայլն ։

*Անցեալ ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Արբեալ | Ծանուցեալ | Կերեալ |

*Ապառնի ընդունելութիւն*

| | | |
|---|---|---|
| Ըմպելի | Ճանաչելի | Ուտելի |

---

*Սահմանական եղանակ, ներկայ*

| | | |
|---|---|---|
| Լսիմ | Տուեալ լինիմ | Պարտիմ * |

*Անցեալ անկատար*

| | | |
|---|---|---|
| Լսէի | Տուեալ լինէի | Պարտէի |

*Անցեալ կատարեալ*

| | | |
|---|---|---|
| Լու եղէ** | Տուայ | Չունի |
| Լու եղեր | Տուար | |
| Լու եղեւ | Տուաւ | |
| Լու եղաք | Տուաք | |
| Լու եղէք | Տուայք | |
| Լու եղեն | Տուան | |

*Ապառնի*

| | | |
|---|---|---|
| Լու եղէց | Տուայց | Չունի |
| Լու եղիցիս | Տացիս | |
| Լու եղիցի | Տացի | |
| Լու եղիցուք | Տացուք | |
| Լու եղիջիք | Տաջիք | |
| Լու եղիցին | Տացին | |

---

* Պարտիմ բային կրաւորականին տեղ կը գործածուի ընդհանրապէս պէտք է միադէմ բայը տրական խնդրով, այսպէս, պէտք է, կամ էր, կամ եղեւ, կամ եղիցի ինձ, քեզ, նմա. մեզ, ձեզ, նոցա ևն:

** Փոխանակ լու բառին՝ կրնայ գործածուիլ նաև լսելի բառն, այսպէս. լսելի լինիմ, եղէ, եղէց, բայց այս ոճը կը նշանակէ ընդհանրապէս՝ ընդունելի ըլլալ, լսուիլ:

*Ստորադասական եղանակ*

| | | |
|---|---|---|
| Լսիցեմ | Տայցեմ | Պարտիցեմ |
| | *Աներևոյթ* | |
| Լու լինել | Տուեալ լինել | Պարտել |
| | *Անցեալ ընդունելութիւն* | |
| Լուեալ | Տուեալ | Չունի |
| | *Ապառնի ընդունելութիւն* | |
| Լսելի | Տալի | Չունի |

## ԲԱՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

114. Հ. Եմ և իմ վերջաւորած բայերէն ոմանց անցեալ ընդունելութիւնը ուրիշ ի՞նչ կերպ կ՚ըլլայ։

Եմ և իմ վերջաւորած բայերէն ոմանց անցեալ ընդունելութիւնը կ՚ըլլայ նաև եցեալ, զոր օրինակ կոչեմ, կոչեալ կամ կոչեցեալ. խօսիմ, խօսեալ կամ խօսեցեալ։

115. Հ. Ածեմ, բերեմ, հանեմ, նստիմ բայերն ի՞նչպէս կը խոնարհին։

Պ. Ածեմ, բերեմ, հանեմ, նստիմ բայերը՝ անեմ վերջաւորած բայերուն պէս կը խոնարհին. զոր օրինակ.

Կատարեալ. Ածի, բերի, հանի, նստայ

Ապառնի. Ածից, բերից, հանից, նստայց

Հրամայական. Ած, բեր, հան, նիստ։

116. Հ. Հարկանեմ բային վրայ ի՞նչ գիտելիք կայ։

Պ. Հարկանեմ բային է գիրը կատարեալին, ա-

պառնույն, հրամայականին և անցեալ ընդու-նելութեան մէջ կը կորսուի. զոր օրինակ. հարի, հարից, հար, հարեալ:

117. Հ. Հոգամ, յուսամ, որսամ, ցնծամ բայերուն կատարեալն ու ապառնին ի՞նչպէս կ'ըլլան:

Պ. Հոգամ, յուսամ, որսամ, ցնծամ բայերուն կատարեալն ու ապառնին կ'ըլլան, հոգացայ, յու-սացայ, որսացայ, ցնծացայ. հոգացայց, յուսացայց, որսացայց, ցնծացայց. փոխանակ հոգացէ, ցնծացէ, և այլն ըսելու: Բայց հրամայականները կ'ըլլան. հոգա, յուսա, որսա, ցնծա:

118. Հ. Առնում, զբօսնում բայերուն վրայ ի՞նչ դիտելիք կայ:

Պ. Առնում, զբօսնում, բայերուն կատարեալին, ապառնույն, հրամայականին և անցեալ ընդու-նելութեան մէջ ն գիրը կը կորսուի. զոր օրինակ.

| | Կտ. | Ապ. | Հրմ. | Անց. |
|---|---|---|---|---|
| Առնում, | առի, | առից, | առ, | առեալ |
| Զբօսնում, | զբօսայ, | զբօսայց, | զբօսիր, | զբօսեալ |

119. Հ. Լնում, խնում, յենում, զգենում, ընկենում, ընթեռնում բայերուն վրայ ի՞նչ դիտելիք կայ:

Պ. Լնում, խնում, յենում, զգենում, ընկենում, ըն-թեռնում բայերուն ալ ն գիրը նոյն ժամանակնե-րուն մէջ ց ի կը փոխուի, այսպէս.

| | Կտ. | Ապ. | Հրմ. | Անց. |
|---|---|---|---|---|
| Լնում, | լցի, | լցից, | լից, | լցեալ |
| Խնում, | խցի, | խցից, | խից, | խցեալ |
| Յենում, | յեցայ, | յեցայց, | յեցիր, | յեցեալ |

Զգենում, զգեցայ, զգեցայց, զգեցիր, զգեցեալ
Ընկենում, ընկեցի, ընկեցից, ընկեա, ընկեցեալ
Ընթեռնում, ընթերցայ, ընթերցայց, ընթերցիր, ընթերցեալ

## ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

120. Հ. Ո՞ր բառերը դերբայ կ'ըսուին ։

Պ. Դերբայ կ'ըսուին բայերուն աներեւոյթն ու ընդունելութիւնները ։

121. Հ. Բայերուն աներեւոյթներն ի՞նչպէս կը հոլովին ։

Պ. Բայերուն աներեւոյթները մինակ եզակի կը հոլովին, այսպէս.

Ա. Լծ. Սիրել, սիրելոյ, սիրելով. Հաստանել, հաստանելոյ, հաստանելով ։
Բ. Լծ. Խօսել. խօսելոյ, խօսելով. Ուսանել, ուսանելոյ, ուսանելով ։
Գ. Լծ. Աղալ, աղալոյ, աղալով. Գողանալ, գողանալոյ, գողանալով ։
Դ. Լծ. Թողուլ, թողլոյ, թողլով ։

122. Հ. Անցեալ ընդունելութիւններն ի՞նչպէս կը գործածուին ։

Պ. Անցեալ ընդունելութիւնները շատ անգամ իբր ածական կը գործածուին, և թէ եզակի թէ յոքնակի կը հոլովին այսպէս.

Ա. Լծ. Սիրեալ, սիրելոյ, սիրելով. Սիրեալք, սիրելոց, սիրելովք.
Հատեալ, հատելոյ, հատելով. Հատեալք, հատելոց, հատելովք ։

Բ. ԼԾ. Խօսեալ, խօսելոյ, խօսելով. Խօսեալք, խօսելոց, խօսելովք:

Ուսեալ, ուսելոյ, ուսելով. Ուսեալք, ուսելոց, ուսելովք:

Գ. ԼԾ. Աղացեալ, աղացելոյ, աղացելով. Աղացեալք, աղացելոց, աղացելովք:

Գողացեալ, գողացելոյ, գողացելով. Գողացեալք, գողացելոց, գողացելովք:

Դ. ԼԾ. Թողեալ, թողելոյ, թողելով. Թողեալք, թողելոց, թողելովք:

123. Հ. Անցեալ և ապառնի ընդունելութիւններն էական բայով ի՞նչ կը կազմեն:

Պ. Անցեալ և ապառնի ընդունելութիւններն էական բային եմ, էի, էցեմ ժամանակներով խոնարհելով, քանի մը բաղադրեալ ժամանակներ կը կազմեն, զոր օրինակ.

| Յարակատար | | Ներկայ ապառնի | |
|---|---|---|---|
| Սիրեալ եմ. | սիրած եմ. | Սիրելոց եմ. | պիտի սիրեմ. |
| » ես. | | » ես. | |
| » է. | | » է. | |
| » եմք. | | » եմք. | |
| » էք. | | » էք. | |
| » են. | | » են. | |

| Գերակատար | | Անկատար ապառնի | |
|---|---|---|---|
| Սիրեալ էի. | սիրած էի. | Սիրելոց էի. | պիտի սիրէի. |
| » էիր. | | » էիր. | |
| » էր. | | » էր. | |
| » էաք. | | » էաք. | |
| » էիք. | | » էիք. | |
| » էին. | | » էին. | |

| Ստորադասական անցեալ | | Ստորադասական ապառնի | |
|---|---|---|---|
| Սիրեալ իցեմ. | սիրած եմ. | Սիրելոց իցեմ. | պիտի սիրեմ. |
| » իցես. | սիրած ըլլամ. | » իցես. | |
| » իցէ. | | » իցէ. | |
| » իցեմք. | | » իցեմք. | |
| » իցէք. | | » իցէք. | |
| » իցեն. | | » իցեն. | |

# ԳԼՈՒԽ Գ.

## ՄԱԿԲԱՅ

124. Հ. Ո՞ր բառերը մակբայ կ'ըսուին։

Պ. Մակբայ կ'ըսուին այն բառերը որ բային մէկ որպիսութիւնը կամ պարագան կը ցուցնեն, ինչպէս որ ածականը գոյականին որպիսութիւնը կը ցուցնէ. զոր օրինակ սա խօսքերուն մէջ, Յոյժ ըմպել, շատ խմել. Բարւոք խօսել, աղէկ խօսիլ. յոյժ, շատ, և բարւոք, աղէկ, մակբայ են. առաջինը՝ ըմպել բային, երկրորդը՝ խօսել բային մէյմէկ որպիսութիւնը կը ցուցընեն։

125. Հ. Սովորական մակբայները որո՞նք են։

Պ. Սովորական մակբայները հետեւեալներն են։

| | | | |
|---|---|---|---|
| Յոյժ. Կարի. | } խիստ, շատ. | Բարւոք. | աղէկ. |
| | | Զարաչար. | գէշ. |
| Տարապարտուց. | անիրաւ-տեղ. | Իսկոյն. Իսկ եւ իսկ. Անդէն եւ անդ. | } անմիջապէս. մէկէն. |
| Ջուր. Վայրապար. | } պարապ տեղը. | | |

Գաղտ · ծածուկ ·
Եւեթ · միայն ·
Զրի · ձրի · (առանց սակի)
Եւս, եւ · նաեւ, ալ ·
Ստէպ · } շատ անգամ ·
Յաճախ · }
Դուն ուրեք · քիչ անգամ ·
Արդարեւ · իրաւ ·
Ապաքէն · անշուշտ ·
Այժմ · } հիմա ·
Արդ · }
Յետոյ · } ետքը ·
Ապա · }
Այսօր · այսօր ·
Վաղիւ · վաղը ·
Երէկ · երէկ ·
Յեռանդ · երէկ չէ առջի օր ·
Ընդառաւօտն · առտուան դէմ ·
Ընդ երեկս · իրիկուան դէմ ·
Այգուն · առտուանց ·
Երեկոյին · իրիկունը ·
Գիշերի · գիշերը ·
Հերուն · անցած տարի ·
Կանուխ · կանուխ ·
Անագան · ուշ ·
Վաղ · առաջ, կանուխ ·
Վաղվաղակի · } շուտով ·
Փութապէս · }
Փութանակի · }
Ի ներքս · } ներսը, տակը ·
Ի ներքոյ · }
Ի վեր · վերը ·
Ի վերուստ · վերէն ·

Յանկարծ · } յանկարծ ·
Յեղակարծումն · }
Նախ · նախ ·
Զառաջինն · } առաջ ·
Ի սկզբան · }
Յառաջագոյն · առաջուց ·
Վաղու · } շատոնց ·
Վաղուց · }
Կանխաւ · առաջուց ·
Մերթ, մերթ · երբեմն, երբեմն ·
Երբեք երբեք · ատեն ատեն ·
Յայտ · } յայտնի ·
Յայտնապէս · }
Միւսանգամ · } նորէն ·
Վերստին · }
Ի ծածուկ · ծածուկ ·
Երբեմն · երբեմն, ատենօք ·
Մանաւանդ · մանաւանդ ·
Թերեւս · գուցէ, կրնայ ըլլալ ·
Գուցէ · չըլլայ թէ ·
Արդեօք · արդեօք ·
Միթէ · միթէ, մի ·
Աստ · } հոս ·
Այսր · }
Անդ · } հոն ·
Անդր · }
Աստի · ասկէ ·
Անտի · անկէ ·
Արտաքս · } դուրսը ·
Արտաքոյ · }
Ի վերոյ · վերը ·
Որպէս · } ինչպէս ·
Զիարդ · }

Ի վերայ · վրան ·
Շուրջ · } բոլորտիքը ·
Շուրջանակի ·
Ուրեք · տեղ մը ·
Ուստեք · տեղէ մը ·
Միանգամ · անգամ մը ·
Միանգամայն · մէկէն ·
Ընդէ՞ր · } ինչո՞ւ համար ·
Զի՞ ·
Յո՞ · } ո՞ւր
Ո՞ւր ·
Ե՞րբ · ե՞րբ ·
Ուստի՞ · ո՞ւրկէ ·
Ոչ · } ոչ, չ ·
Մի ·

# ԳԼՈՒԽ Դ.

## ՇԱՂԿԱՊ

126. Հ. Ո՞ր բառերը շաղկապ կ'ըսուին ։

Պ. Շաղկապ կ'ըսուին այն բառերը որ երկու բառ կամ երկու խօսք իրարու հետ կը կապեն, զոր օրինակ. Հայր իմ և մայր իմ. Հայրս ու մայրս. Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան. Իրեններուն եկաւ ու իրենները զայն չընդունեցան ։ Այս խօսքերուն առջինին մէջ և՝ հայր, մայր բառերն իրարու հետ կը կապէ. երկրորդին մէջ՝ և շաղկապին կապածը երկու խօսք է ։

Գլխաւոր շաղկապներն են հետեւեալները.

Այլ · այլ, հապա ·
Ապա · } ուրեմն, անանկ է նէ,
Ուրեմն ·
Արդ · } արդ ·
Եւ արդ ·
Բայց · բայց ·
Իբրեւ · } երբ ·
Յորժամ ·
Իսկ · եւ, բայց ·
Կամ · կամ ·
Մինչ · } երբ, ատենը ·
Մինչդեռ ·

Եթէ . } էյէր , քի .
Եէ .
Եւ . վէ , տախի .
Զի . չիւնքի , օյլէ քի , քի .
Թէպէտեւ . էյէրչէ .

Ուստի . օրատան .
Սակայն . լաքին .
Վասն զի . } օլտուղունտան .
Որովհետեւ .
Քանզի . չիւնքի , զիրա քի .

# ԳԼՈՒԽ Ե.

## ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

127. Հ. Ո՞ր բառերը յայնարկութիւն կ'ըսուին ։

Պ. Ձայնարկութիւն կամ միջարկութիւն կ'ըսուին այն բառերը որ կիրք մը կը յայտնեն , այսինքն , վախ , զարմանք , բարկութիւն , զղջումն , արհամարհութիւն , ցաւ , և այլն ։

128. Հ. Գլխաւոր ձայնարկութիւնները որո՞նք են ։

Պ. Գլխաւոր ձայնարկութիւնները հետեւեալներն են ։

Ո՛վ . } օ՜հ . զարմանք ցուցնող .
Ո՜ .
Ո՜հ . օ՜հ . տրտմութիւն , վիշտ ցուցնող .
Վա՜հ . վա՜հ . արհամարհանք ցուցնող .
Վա՜չ . վա՜շ . օ՜ֆ . վրէժխնդրութիւն ցուցնող .
Բա՜բէ . բա՜բէ . զարմանք , ցաւ կամ ապաշաւ ցուցնող .
Եղո՜ւկ . } ահա՜ղ . գութ , ցաւակցութիւն ցուցնող .
Աւա՜ղ .
Հա՛պա . } օ՜ն . խրախոյս ցուցնող .
Օ՜ն .

Օ՜ն անդր · <br>
Փարգաստ · <br>
Քաւ լիցի · } Աստուած չընէ · մերժում, սոսկում ցուցընող ·

Ա՜յ · ա՜յ · բարկութիւն, թշնամանք ցուցնող ·
Է՜ · ո՜վ · մէկը կանչելու համար ·
Երանի՜ · երանի՜ · երանութիւն տալու համար ·
Իցի՜ւ · <br>
Իցէ թէ · } իղձ, բաղձանք ցուցնելու համար ·
Վա՜յ · վա՜յ · վայ կարդալու համար ·
Ազնի՜ւ · ազնի՜ւ · գովելու համար ·

## *ՄԱՍՆ Բ·*

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

129· Հ· Համաձայնութիւնն ի՞նչ կը սորվեցնէ ։

Պ· Համաձայնութիւնը կը սորվեցնէ թէ խօսք մը ինչ բաներէ կը կազմուի ։

130· Հ· Նախադասութեան մէջ ի՞նչ պէտք է որ ըլլայ ։

Պ· Նախադասութեան մէջ պէտք է որ դիմաւոր բայ մը ըլլայ ։

Աստուած արար զերկինս եւ զերկիր · Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց ։

*Այս խօսքը նախադասութիւն է, քանզի դիմաւոր բայ մը ունի որ է արար, ստեղծեց ։*

Ասաց Աստուած · Եղիցի լոյս, եւ եղեւ լոյս · Աստուած ըսաւ · Թող լոյս ըլլայ · եւ լոյսը եղաւ ։

*Այս խօսքին մէջ երեք նախադասութիւն կայ, քանզի երեք դիմաւոր բայ կայ · ասաց, ըսաւ · եղիցի, ըլլայ · եղեւ, եղաւ ։*

131. Հ. Խօսքին մէջ բայէն զատ ուրիշ ի՞նչ կը գտնուի։

Պ. Խօսքի մէջ բայէն զատ՝ կը գտնուին տէր բայ, կոչական, խնդիր, յատկացուցիչ, բացայայտիչ։

## Ա. ՏԷՐ ԲԱՅԻ

132. Հ. Տէր բայն ի՞նչ է։

Պ. Տէր բայ կ'ըսուի այն ուղղական հոլովը որ բային գործողութիւնն ընողը կը ցուցնէ, և բային հետ թուով ու դէմքով կը համաձայնի. զոր օրինակ. Աստուած արար զերկինս և զերկիր։ Այս խօսքին մէջ Աստուած ուղղական հոլովը արար բային տէր բայն է, քանզի ընողը կամ ստեղծողն Աստուած է, և բային հետ թուով և դէմքով համաձայնած է։

133. Հ. Խօսքի մը մէջ տէր բային ի՞նչպէս կը ճանչցուի։

Պ. Խօսքի մը մէջ տէր բային դիւրաւ կը ճանչցուի, եթէ ո՞վ հարցումն ընենք. զոր օրինակ, վերի խօսքին մէջ. — Ո՞վ ստեղծեց. — Աստուած. — ապա Աստուած տէր բայի է։

134. Հ. Բայը ի՞նչ թիւ կը դրուի, երբ քանի մը տէր բայի ունի։

Պ. Երբ բայը քանի մը տէր բայի ունի, բայը յոգնակի կը դրուի. զոր օրինակ։

Նոյ եւ որդիք նորա մտին 'ի տապանն. Նոյ եւ անոր որդիքը տապանը մտան։ Ո՞վ մտաւ. – Նոյ եւ որդիքը. ապա՝ Նոյ եւ որդիք նորա տէր բայի են։

135. Հ. Եթէ տէր բայները տարբեր դէմքի բառեր են, բայն ի՞նչ թիւ և ի՞նչ դէմք կը դրուի։

Պ. Եթէ տէր բայները տարբեր դէմքի բառեր են, բայը յոգնակի կը դրուի, և նախադասական դէմքին հետ կը համաձայնի։ Առաջին դէմքը քան զերկրորդը նախապատիւ է, երկրորդն ալ քան զերրորդը։ Այսպէս կ'ըսուի,

Ես և Հայր իմ մի եմք.

Յորժամ դու և նա միայն էիք։

136. Հ. Տէր բայն միշտ ուղղակա՞ն հոլով է։

Պ. Տէր բայն սեռական կամ տրական ալ կրնայ ըլլալ։

137. Հ. Տէր բայն ե՞րբ սեռական կը դրուի։

Պ. Երբ և շաղկապով կապուած երկու բայ մի և նոյն տէր բայն ունին, կրնայ և շաղկապը զանց առնուիլ, և առաջին բայն անցեալ ընդունելութեան փոխուիլ. անատեն տէր բայն կրնայ սեռական դրուիլ. զոր օրինակ։

Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ. Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ կ'ըսէ. փոխանակ ըսելու, Ետես Յիսուս զհաւատս նոցա և ասէ։

Երկրորդ, անցեալ ընդունելութեամբ և էական բայով շինուած ժամանակներու, այսինքն՝ յարակատարի, գերակատարի, ստորադասական անցեալի (տես թիւ 23) եղանակի երրորդ դէմքերը սեռական տէր բայիւ ամէն դէմքի տեղ կը գործածուին։ Այսպէս կ'ըսուի։

Տեսեալ է իմ, տեսեալ է քո, տեսեալ է նորա, տես-

եալ է եղբօր իմոյ, տեսեալ է մեր, տեսեալ է ձեր, տես-եալ է նոցա. տեսեալ է եղբարց իմոց, փոխանակ ըսե-լու՝ Տեսեալ եմ ես, տեսեալ ես դու, տեսեալ է նա, տեսեալ է եղբայր իմ, տեսեալ եմք մեք, տեսեալ էք դուք, տեսեալ են նոքա, տեսեալ են եղբարք իմ։

Տեսեալ էր իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա. Տեսեալ իցէ իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա։

Եթէ իմ չէր եկեալ, Եթէ ես եկած չըլլայի։ Փոխա-նակ՝ Եթէ ես ոչ էի եկեալ։

Հրէից երդուեալ էր սպաննանել զՊաւղոս. Հրեաները երդում ըրած էին զՊօղոս սպաննել։ Փոխանակ ըսելու՝ Հրեայք երդուեալ էին սպաննանել, եւ այլն։

138. Հ. Տէր բային ե՞րբ տրական կը դրուի։

Պ. Երբ երկու նախադասութիւն զի, որ շաղկա-պով կապուած են, այն շաղկապները զանց առ-նելով՝ երկրորդ նախադասութեան բայը կրնայ աներեւոյթի փոխուիլ, և անատեն տէր բային տրական կը դրուի. զոր օրինակ.

Ոչ կամիմք թագաւորել դմա ՚ի վերայ մեր. Չենք ու-զեր որ ասիկայ մեր վրայ թագաւորէ. Փոխանակ ըսե-լու՝ Ոչ կամիմք զի թագաւորեսցէ դա ՚ի վերայ մեր։

Ոչ տամք թոյլ անցանել ձեզ ընդ երկիր մեր. Չենք թողուր որ մեր երկրէն անցնիք։ Փոխանակ՝ Ոչ տամք թոյլ զի անցանիցէք դուք, եւ այլն։

139. Հ. Ո՞ր տէր բայները կրնան զեղչուիլ։

Պ. Դերանուն տէր բայները հայերէնի մէջ սովորաբար կը զեղչուին. ուստի կ'ըսուի, սիրեմ, գործեաց, երթիցէ, արասցուք, ընկալարուք, ասէին. այս բայերուն դերանուն տէր բայները ես, դու, նա, մեք, դուք, նոքա, լռելեայն կ'իմացուին։

### Բ. ԿՈՉԱԿԱՆ

140. Հ. Կոչականն ի՞նչ է։

Պ. Կոչականը ուղղական հոլով է, որ երկրորդ դէմքի անձ մը կը ցուցնէ առ որ խօսքը կ'ուղղուի․ զոր օրինակ․

Լուր, որդեակ, խրատու հօր քո․ Որդեակ, քու հօրըդ խրատը մտիկ ըրէ։ Ղազարէ, արի, եկ արտաքս․ Ղազարոս, ել, դուրս եկուր։ Աղջիկ դու, քեզ ասեմ, արի․ Աղջիկ, քեզի կըսեմ, ել։ Ով անմիտք եւ հեղգամիտք 'ի հաւատալ․ Ով անմիտներ եւ սրտով դանդաղներ հաւատալու։

Այս խօսքերուն մէջ՝ որդեակ, Ղազարէ, աղջիկ դու, ով անմիտք և հեղգամիտք բառերը կոչական են։

### Գ. ԽՆԴԻՐ

141. Հ. Խնդիրն ի՞նչ է։

Պ. Բայերն իրենց նշանակութիւնը լրացնելու համար, առանց նախադրութեան և նախադրութեամբ այլ և այլ հոլով բառեր կ'ուզեն, որ խնդիր կը կոչուին։

### Ստորոգելի

142. Հ. Ստորոգելին ի՞նչ է։

Պ. Էական բային և ուրիշ քանի մը բայերու հետ, տէր բայէն զատ, ուրիշ ուղղական հոլով մը կ'ըլլայ, որ տէր բային ինչ ըլլալը կը ցուցնէ․ այս ուղղականին կ'ըսուի ստորոգելի (ուղղական խնդիր)․ զոր օրինակ․

Ես եմ որդի քո․ Ես քու որդիդ եմ․

Այս խօսքին մէջ երկու ուղղական կայ․ Ես և

ուզէ · Եւ տէր բայի է, ուզէ՝ ստորոգելի, որ տէր բային ինչ կամ ով ըլլալը կը ցուցնէ · այսպէս է հետեւեալ օրինակներուն մէջ ։

Նոքա եղիցին ձեր դատաւորք · Անոնք ձեր դատաւորները ըլլան ։

Հոս ալ դատաւորք ստորոգելի է ։

Եւ էր այր մեծատուն · Այն մարդը հարուստ էր ։

Հոս ալ մեծատուն բառն է ստորոգելի ։

143. Հ. Ստորոգելին ե՞րբ հայցական կը դրուի ։

Պ. Ստորոգելին, փոխանակ ուղղական դրուելու, անորոշ (առանց ըի) հայցական կը դրուի, երբ, փոխանակ վերաբերելու տէր բային, հայցական բառի մը կը վերաբերի · զոր օրինակ ·

Կոչեցի զձեզ բարեկամս · Ձեզ բարեկամ կոչեցի ։

Հոս բարեկամս ստորոգելին հայցական դրուած է՝ զձեզին վերաբերելուն համար ։

Ո՞ կացոյց զիս դատաւոր · Զիս ով դատաւոր դրաւ ։

Հոս ալ դատաւոր ստորոգելին հայցական է՝ զիսին վերաբերելուն համար ։

Դու զո՞ առնես զքեզ · Դուն քեզ ով կը կարծես ։

Հոս ալ զո՞ ստորոգելին հայցական է՝ զքեզին վերաբերելուն համար ։

### Սեռի խնդիր

144. Հ. Սեռի խնդիրն ի՞նչ է ։

Պ. Սեռի խնդիր կ՚ըսուի այն հայցական հոլովը որ ներգործական բայի մը տէր բային գործողութեան առարկան կը ցուցնէ · զոր օրինակ ·

Աստուած արար զերկինս եւ զերկիր · Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց ։

Այս խօսքին մէջ զերկինս, զերկիր բառերը սեռի խնդիր են, քանզի տէր բային, այսինքն Աստուծոյ ստեղծագործութեան առարկան կը ցուցնեն ։

Առաքեաց զորդի իւր · Իր որդին ղրկեց ։

145. Հ. Սեռի խնդիրն ի՞նչպէս կը ճանչցուի ։

Պ. Սեռի խնդիրը կը ճանչցուի սա հարցումն ընելով · զո՞վ կամ զի՞նչ բանը · զոր օրինակ · Աստուած ստեղծեց · — ի՞նչ բանը · — երկինքն ու երկիրը — ։ Ղրկեց · — զո՞վ · — իր որդին · ապա զերկինս ու զերկիր, զորդի, սեռի խնդիր են ։

*Բնութեան խնդիր*

146. Հ. Բայերն ուրիշ ի՞նչ հոլով խնդիր կ'առնուն, և այս խնդիրներն ի՞նչ կը կոչուին ։

Պ. Բայերը տրական, բացառական և գործիական հոլով խնդիրներ ալ կ'ունենան, որոնց բնութեան խնդիր կ'ըսուի · զոր օրինակ ·

Թող մեզ զպարտիս մեր · Մեր յանցանքը մեզի թող ։

Հոս մեզ տրական բնութեան խնդիր է թողին ։

Եղբարքն Յովսեփու վաճառեցին զնա Իսմայելացւոց · Յովսէփին եղբայրներն զանի Իսմայելացւոց ծախեցին ։

Հոս ալ Իսմայելացւոց նոյնպէս տրական հոլով բնութեան խնդիր է վաճառեցին բային ։

147. Հ. Տրական հոլովն ի՞նչ հարցման պատասխան է ։

Պ. Տրական հոլովը որո՞ւմ, քիմէ՛, հարցման պա-

տասխան է. զոր օրինակ. Ծախեցին. որո՞ւն. — իսմայելացւոց. ապա իսմայելացւոց տրական խնդիր է վաճառեցին բային :

Փրկեա զմեզ 'ի չարէ. Մեզ չարէ փրկէ :

Այս խօսքին մէջ 'ի չարէ բացառական հոլով բնութեան խնդիր է փրկեա բային :

148. Հ. Բացառական հոլովն ի՞նչ հարցման պատասխան է :

Պ. Բացառական հոլովը ո՞րմէ, քիմտէ՞ն, հարցման պատասխան է. փրկէ. —որմէ՞. —չարէ. ապա 'ի չարէ բացառականը բնութեան խնդիր է փրկեային :

Բերէին զհիւանդս մահճօք. Հիւանդներն անկողին-ներով կը բերէին :

Այս խօսքին մէջ ալ մահճօք գործիական հոլով բնութեան խնդիր է բերէին բային :

149. Հ. Գործիական հոլովն ի՞նչ հարցման պա-տասխան է :

Պ. Գործիական հոլովը ո՞րով, ի՞նչ բանով, քիմի՞լէ, նէ՞ իլէ, հարցման պատասխան է. զոր օրինակ. Հի-ւանդները կը բերէին. —ի՞նչ բանով. —մահիճ-ներով :

150. Հ. Խօսքի մը մէջ ուրիշ ի՞նչ խնդիրներ կրնան գտնուիլ :

Պ. Խօսքի մէջ, տրական, բացառական և գոր-ծիական հոլով խնդիրներէն զատ, Նախադրութենաւք խնդիրներ ալ կրնան գտնուիլ. զոր օրինակ.

Ածին զՅիսուս առ Պիղատոս :

Հոս, առ Պիղատոս, առ նախադրութեամբ խնդիր է ածին բային.

Ընկեցին զԴանիէլ 'ի գուբն առիւծուց. Դանիէլն առիւծներուն գուբը նետեցին։

Հոս ալ, 'ի գուբն, 'ի նախադրութեամբ խնդիր է ընկեցին բային։

Կացոյց զնա 'ի վերայ աշտարակի տաճարին. Անիկա տաճարին աշտարակին վրայ կեցուց։

Հոս ալ, 'ի վերայ աշտարակի, 'ի վերայ նախադրութեամբ խնդիր է կացոյց բային։

Դ. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ

151. Հ. Յատկացուցիչն ինչ է։

Պ. Գոյականները շատ անգամ սեւատիպ հոլով խնդիր մը կ'ունենան, որ յատկացուցիչ կ'ըսուի, և բան մը որուն ըլլալը կ'իմացնէ. զոր օրինակ, վերի օրինակին մէջ — 'ի վերայ աշտարակի տաճարին. տաճարին աշտարակին վրայ. — տաճարին, սեռական հոլովը, աշտարակ բառին յատկացուցիչն է, քանզի աշտարակը որուն ըլլալը կ'իմացնէ, այսինքն՝ տաճարին։

Ես զկամս նորա առնեմ. Ես անոր կամքը կ'ընեմ։

Հոս ալ նորա սեռական հոլով դերանունը՝ կամք բառին յատկացուցիչն է, քանզի կամքը որուն ըլլալը կը ցուցնէ, այսինքն՝ անոր (Աստուծոյ)։

152. Հ. Ի՞նչ կը կոչուի այն բառը որ յատկացուցիչ ունի։

Պ. Այն բառը որ յատկացուցիչ ունի՝ յատկացեալ

կ՚ըսուի . ուստի վերի օրինակներուն մէջ ողորմեաց և չարէ բառերը յորջորջեալ են ։

153. Հ. Յատկացուցիչն ի՞նչ հարցման պատասխան է ։

Պ. Յատկացուցիչը, այսինքն սեռական հոլովը, որո՞յ, ի՞նչ բանին, քիմին, նէնին, հարցման պատասխան է ։

154. Հ. Բայէն և գոյականէն զատ ո՞ր բառերը խնդիր կ՚ուզեն ։

Պ. Բայէն և գոյականէն զատ, խօսքի մէջ – ածականներէն ոմանք և նախադրութիւններ այլ և այլ հոլով խնդիր կ՚առնեն . այսպէս կ՚ըսենք .

Արժանի վարձուց . Հնազանդ հրամանաց . Հմուտ օրինաց . Թափուր ՚ի բնակչաց . Ազատ ՚ի հարկաց . Լի դրամօք . Կարօտ իմիք կամ իւիք ։

Այս օրինակներուն մէջ, վարձուց, հրամանաց, օրինաց, տրական հոլովները՝ արժանի, հնազանդ, հմուտ ածականներուն խնդիր են . ՚ի բնակչաց, ՚ի հարկաց, բացառական հոլովները, թափուր, ազատ, ածականներուն խնդիր են . դրամօք, իւիք, գործիական հոլովներն ալ՝ լի, կարօտ, ածականներուն ։

155. Հ. Դերանուններն ի՞նչ խնդիր կ՚ուզեն ։

Պ. Ամէն նախադրութիւն գոյական կամ դերանուն խնդիր մը կ՚ուզէ ։

156. Հ. ՚ի, յ, առ, զ, ընդ, ըստ, ց, նախդիրներն ի՞նչ հոլով խնդիր կ՚առնուն ։

Պ. ՚ի, յ, առ, զ, ընդ, ըստ, ց նախդիրներն այլ և այլ հոլով խնդիր կ՚առնուն, և այլևայլ նշանակութիւն կ՚ունենան ։

157. Հ. ՚ի կամ յ նախդիրն ի՞նչ կը ցուցնէ ։

Պ. ՚ի կամ յ նախդիրը շատ անգամ տեղւոյ պարագան կը ցուցնէ. և ո՞ւր հարցման կը պատասխանէ, զոր օրինակ. — Գնաց ՚ի տուն. — ո՞ւր գնաց. — ՚ի տուն, տուն ։ Նստի ՚ի տան. — ո՞ւր կը նստի. — ՚ի տան, տունը ։

158. Հ. ՚ի կամ յ նախդիրը ե՞րբ տրական կ՚ուզէ ։

Պ. Երբ բայը դադարում կը ցուցնէ, ՚ի կամ յ նախդիրը տեղ ցուցնելու համար եղակի անունը տրական կ՚ուզէ, և ներգոյական կ՚ըսուի ։

Բնակէ ՚ի քաղաքի. Նստի ՚ի տան. Կայր ՚ի տաճարին ։

159. Հ. ՚ի կամ յ նախդիրը ե՞րբ հայցական կ՚ուզէ ։

Պ. Երբ բային գործողութիւնը շարժում կը ցուցնէ, ՚ի կամ յ նախդիրը տեղ ցուցնելու համար եղակի անունը անորոշ հայցական կ՚ուզէ, և նախդրե-տրական կ՚ըսուի. զոր օրինակ.

Չոգաւ ՚ի տուն. Առաքեաց ՚ի քաղաքն. Ընթացաւ ՚ի հրապարակն ։

160. Հ. ՚ի կամ յ նախդրէն ետքը ե՞րբ միշտ հայցական կը դրուի ։

Պ. Երբ խնդիրը յոքնակի և կամ չորրորդ հոլովման (գետ, գետոյ) բառ է, ՚ի կամ յ էն ետքը միշտ անորոշ հայցական կը դրուի. զոր օրինակ.

Գնացին ՚ի տունս իւրեանց. Բնակին յանտառս. Անկաւ ՚ի գետն. Հեղձաւ ՚ի գետն ։

161. Հ. Ը նախդիրը բացառական խնդրով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ը նախդիրը բացառական խնդրով բանի մը վրայով կը նշանակէ, և պատմական կ'ըսուի. զոր օրինակ.

Պատմեն զնմանէ. Անոր վրայով կը պատմեն։ Ասացաւ զմանկանէն. Տղուն վրայով ըսուեցաւ։

162. Հ. Ը նախդիրը գործիականով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ը նախդիրը գործիական խնդրով բանի մը բոլորտիքը կը նշանակէ, և պարառական կ'ըսուի. զոր օրինակ.

Խռնեցան զնովաւ. Անոր բոլորտիքը ժողվուեցան։ Պատեսցեն զքեւ պատնէշ. Քու բոլորտիքդ պատ պիտի քաշեն։

163. Հ. Ընդ, եզակի տրական և յոգնակի հայցական խնդրով, ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ընդ, եզակի տրական և յոգնակի հայցական խնդրով, մէկուն հետը կը նշանակէ. զոր օրինակ.

Խօսեցաւ ընդ նմա. Անոր հետ խօսեցաւ։ Խօսեցաւ ընդ նոսա. Անոնց հետ խօսեցաւ։

164. Հ. Ընդ, սեռական խնդրով, ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ընդ, սեռական խնդրով, տեղը, փոխանակ, կը նշանակէ. զոր օրինակ.

Թագաւորեաց Ռոբովամ որդի նորա (Սողոմոնի) ընդ նորա. Անոր (Սողոմոնին) որդին Ռոբովամ անոր տեղը թագաւորեց։

165. Հ. Ընդ, գործիական խնդրով, ի՞նչ կը նշանակէ ։

Պ. Ընդ, գործիական խնդրով, տակը կը նշանակէ . զոր օրինակ .

Ընդ թեւովք . Թեւերուն տակը . Ընդ իշխանութեամբ . Իշխանութեան տակ ։

166. Հ. Ուրիշ նախադրութիւններ ի՞նչ խնդիր կ'ուզեն ։

Պ. Ուրիշ նախադրութիւններէն ոմանք սեռական կ'ուզեն, զոր օրինակ . առաջի, զկնի, յետ, ՚ի վերայ . ոմանք տրական, ոմանք բացառական, ոմանք գործիական ։

## Ե. ԲԱՑԱՅԱՅՏԻՉ

167. Հ. Բացայայտիչ ի՞նչ է ։

Պ. Բացայայտիչ կ'ըսուին մէկ կամ աւելի մը բառ որ ուրիշ բառի մը քով կը դրուին և մի և նոյն բանը կը նշանակեն, բայց անոր մեկնութեան պէս են . զոր օրինակ .

Յովսէփ, այր Մարիամու . Յովսէփ Մարիամին այրը ։

Հոս, այր Մարիամու, Յովսէփին բացայայտիչ է ։ Յովսէփ և այր Մարիամու մի և նոյն անձը կը նշանակեն, բայց երկրորդը մեկնութիւն է առաջնոյն, քանզի ո՛ր Յովսէփին ըլլալը կը ցուցնէ ։

Փախուստն Անակայ, հօր սրբոյն Գրիգորի . Սուրբ Գրիգորին հօրը, Անակայ փախուստը ։

Հոս ալ հօր սրբոյն Գրիգորի բառերն՝ Անակին բացայայտիչ են . Անակ և հայր սրբոյն Գրիգորի մի և նոյն

անձն է, միայն երկրորդը մեկնութիւն է առաջնոյն։

Զմայրն ամենայն առաքինութեան, զխոնարհութիւն, չունէր յանձին. Ամէն առաքինութեանց մայրը, խոնարհութիւնը չունէր։

Հոս ալ խոնարհութիւն բառը մայր ամենայն առաքինութեանց ին բացայայտիչ է։ Երկուքն ալ մի և նոյն բանը կը նշանակեն, միայն վերջին բառն առաջիններուն մեկնութիւնն է։

Կռոց եւ դրօշելոց հոնդամանք առ Թարայիւ, հօրն Աբրահամու, եղեն. Քարէ եւ փայտէ արձաններ (կուռքեր) շինել՝ Աբրահամին հօրը Թարային ատեն սկսաւ։

Հոս ալ հօրն Աբրահամու բառերը Թարայի բացայայտիչ են։

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

168. Հ. Յարաբերական դերանունն ի՞նչ բառ է։
Պ. Յարաբերական դերանունը որ բառն է, և խօսքին մէջ իրմէ առաջ գտնուած բառ մը կը ցուցնէ. զոր օրինակ.

Հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս. Քու հայրդ որ ծածուկ կը տեսնէ, յայտնի պիտի հատուցանէ։

Այս խօսքին մէջ որ յարաբերական դերանուն է, և հայր բառին տեղ դրուած է, կամ հայր բառը կը յարաբերէ։

Աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդէր նոցա. Աստղը զոր արեւելք տեսան՝ անոնց առաջնորդեց։

Այս խօսքին մէջ ալ որ յարաբերական դերանունը՝ տող բառը կը յարաբերէ ։

169. Հ. Յարաբերականով ցուցուած բառն ի՞նչ կը կոչուի ։

Գ. Յարաբերականով ցուցուած բառը յարաբերեալ կը կոչուի · ուստի վերի խօսքերուն մէջ հայր և տող բառերը յարաբերեալ են ։

170. Հ. Յարաբերականն ո՞ւր պիտի դրուի ։

Գ. Յարաբերականը կարելի եղածին չափ յարաբերելոյն անմիջապէս քովը պիտի դրուի ։

171. Հ. Դերանուն յարաբերեալը կրնա՞յ լռելեայն իմացուիլ ։

Գ. Դերանուն յարաբերեալը շատ անգամ լռելեայն կ'իմացուի · զոր օրինակ ·

Որ ետես զիս՝ ետես զհայր իմ ։

Այս խօսքին մէջ լռելեայն կ'իմացուի յարաբերեալը, որ է Նա դերանունը · ուստի պիտի ըլլայ · — Նա որ ետես զիս՝ ետես զհայր իմ · Ան որ զիս տեսաւ՝ հայրս տեսաւ ։

Որք ոչն տեսանեն՝ տեսցեն, եւ որք տեսանենն կուրասցին ։

Հոս ալ յարաբերեալը, Նոքա, լռելեայն կ'իմացուի · պիտի ըլլայ այսպէս · Նոքա որ ոչ տեսանեն՝ տեսցեն, և Նոքա որ տեսանեն՝ կուրասցին · Անոնք որ չեն տեսներ՝ պիտի տեսնեն, իսկ անոնք որ կը տեսնեն՝ պիտի չտեսնեն ։

172. Հ. Երբ յարաբերեալը լռելեայն է, ի՞նչ կ'ըլլայ ։

Պ. Երբ յարաբերեալն այսպէս լռելեայն է, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ ս, դ, ն, գիրերէն մէկը կը դրուի, այսինքն՝ ս կը դրուի՝ երբ լռելեայն իմացուած դերանունը՝ այս, սա կամ սոյն դերանուններէն մէկն է. դ կը դրուի՝ երբ լռելեայն իմացուած դերանունը այդ, դա կամ դոյն դերանուանց մէկն է. ն կը դրուի՝ երբ լռելեայն իմացուած դերանունը՝ այն. կամ նա դերանուններէն մէկն է. զոր օրինակ.

Մի ոք մեղադիր լիցի եւ աղարտիցէ զոր ասեմս.

փոխանակ ըսելու, Մի ոք մեղադիր լիցի և աղարտիցէ զայս զոր ասեմ։

Գիտիցես արդեօք զոր ընթեռնուցուսդ։

Փոխանակ ըսելու, Գիտիցե՞ս արդեօք զայդ զոր ընթեռնուս։

Ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք չխօսել։

փոխանակ ըսելու, Ոչ կարեմք չխօսել զայն զոր տեսաք և լուաք։

173. Հ. Յարաբերականը դիմաւոր բայով ի՞նչ բանի զօրութիւն ունի։

Պ. Առանց յարաբերեալի յարաբերական դերանունը, դիմաւոր բայով մէկտեղ, աշխարհաբարին ող կամ ած վերջաւորուած բառերուն զօրութիւնն ունի. ուստի՝

Որ տեսին զիս, կը նշանակէ՝ Զիս տեսնողը։ Որք զիս տեսանեն, կը նշանակէ՝ Զտեսնողները։ Մի ոք աղարտիցէ զոր առնեմ, կը նշանակէ՝ Ըրածս մէկը չպարսաւէ։

Գիտիցես զոր ընթեռնուցուք, կը նշանակէ՝ Կարդացած գիտես: Ոչ կարեմք զոր տեսաք և լուաք չխօսել, կը նշանակէ՝ Չենք կրնար տեսածնիս և լսածնիս չխօսիլ:

174. Հ. Այս կերպ դրուցուածներու մէջ յարաբերականն ի՞նչ հոլով կրնայ դրուիլ:

Պ. Այս կերպ դրուցուածներու մէջ յարաբերականը ներքեւային իմացուած յարաբերեալին հոլովը կը դրուի, եթէ այն յարաբերեալը հոլոված բառ է. զոր օրինակ.

Որում խնդրէ 'ի քէն՝ տուր. Քենէ խնդրողին տուր:

Փոխանակ ըսելու, Տուր այնմ՝ որ խնդրէ 'ի քէն:

## ՄԱՍՆ Գ.

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

175. Հ. Շարադրութիւն ի՞նչ բանի կ'ըսուի:

Պ. Խօսք մը կազմելու կամ իմաստ մը հասկըցընելու համար բառերուն իրարու քով շարուելուն շարադրութիւն կ'ըսուի:

176. Հ. Խօսք մը շարադրելը քանի՞ կերպով կ'ըլլայ:

Պ. Խօսք մը շարադրելը կամ բառերը շարելը երկու կերպով կ'ըլլայ. պարզ և շրջուն:

177. Հ. Պարզ շարադրութիւնը ո՞րն է:

Պ. Պարզ շարադրութիւն ան է որ բառերը քերականական կարգով շարուած են:

178. Հ. Բառերը քերականական կերպով շարել ի՞նչպէս կ'ըլլայ։

Գ. Բառերը քերականական կերպով շարելը հետեւեալ կերպով կ'ըլլայ։

Նախ պէտք է տէր բային գտնել իր մասերովը, այսինքն՝ ածականներովն ու յատկացուցչովը։

Երկրորդ՝ բայը։

Երրորդ՝ մակբայը, եթէ մակբայ կայ։

Չորրորդ՝ հայցական սեռի խնդիրն իր մասերովը, եթէ բայը ներգործական է և հայցական հոլով սեռի խնդիր ունի։

Հինգերորդ՝ միւս խնդիրները, այսինքն՝ տրական, բացառական, գործիական և նախադրութեամբ խնդիրներն իրենց մասերովը. զոր օրինակ.

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի որ արար հարսանիս որդւոյ իւրում, եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն 'ի հարսանիսն, եւ ոչ կամեցան գալ։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս եւ ասէ. Ասացէք հրաւիրելոցն. ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ պարարակք զենեալ են, եւ ամենայն ինչ պատրաստ է, եկայք 'ի հարսանիսս։ Եւ նոքա յուլացեալ գնացին, ոմն յագարակ իւր, եւ ոմն 'ի վաճառ իւր։ Եւ այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին եւ սպանին։ Իսկ թագաւորն իբրեւ լուաւ, բարկացաւ, եւ առաքեաց զզօրս իւր եւ սատակեաց զսպանողսն զայնոսիկ, եւ զքաղաքս նոցա այրեաց։ Յայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են. եւ հրաւիրեալքն չէին արժանի. արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, եւ զոր միանգամ գտանիցէք՝ կոչեցէք 'ի հարսանիս։ Եւ ելեալ ծառայքն 'ի ճանապարհս՝ ժողովեցին

զամենեսեան զորս եւ գտին, զչարս եւ զբարիս, եւ լցան հարսանիքն բազմականօք։ Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ ետես անդ այր մի որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց. եւ ասէ ցնա (թագաւորն). Ընկեր, զիարդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց. եւ նա պապանձեցաւ։ Յայնժամ ասէ թագաւորն ցպաշտաւորսն. Կապեցէք զդորա ոտս և զձեռս, եւ հանէք զդա 'ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճտել ատամանց։

Այս հատուածին մէջ շարադրութեան կարգը քերականական է, բաց 'ի նօտր գրով նշանակուած մասերէն որոնց կարգը ձեւաւոր է։

179. Հ. Ձեւաւոր կարգը քանի՞ է։

Պ. Ձեւաւոր կարգը երեք է։ Նախ, արտադիր, այսինքն, երբ բառերը քերականական կարգէն տարբեր կերպով շարուած են, զոր օրինակ, երբ ենթակայն փոխանակ բայէն առաջ գրուելու բայէն ետքը գրուած է. կամ խնդիր մը փոխանակ խնդրառուէն ետքը գրուելու անկէ առաջ գրուած է, զոր օրինակ, յատկացուցիչը յատկացեալէն առաջ։ վերի հատուածին մէջ՝ Նմանեցաւ արքայութիւն երկնից խօսքը՝ արտադիր է, քանզի հոն ենթակայն բայէն ետքը գրուած է։ Զճաշ իմ պատրաստեցի խօսքն ալ արտադիր է, քանզի հոս հայցական խնդիրը նոյնպէս խնդրառուէն, այսինքն՝ պատրաստեցի բայէն առաջ գրուած է։ Կապեցէք զդորա ոտս և զձեռս խօսքն ալ արտադիր է, քանզի հոս ալ դորա յատկացուցիչը յատկացեալէն առաջ գրուած է։ Այս ձեւը արտադրութիւն կը կոչուի։

Երկրորդ՝ ձեւաւոր է կարգը, երբ խօսքին

մէջ բառ մը **զեղչուած** է, այսինքն՝ լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ, վերի հատուածին մէջ՝ **Ոմն յագարակ իւր** և **ոմն 'ի վաճառ իւր** խօսքը զեղչուած է, քանզի **գնաց** բայը զօրութեամբ կ'իմացուի, ուստի պիտի ըլլար՝ Ոմն գնաց յագարակ իւր և ոմն գնաց 'ի վաճառ իւր։ Այս ձևը **զեղչում** կ'ըսուի։

Երրորդ՝ ձևաւոր է շարադրութեան կարգը, երբ խօսքին մէջ բառ մը, զոր օրինակ, տէր բային կամ խնդիր մը, **աւելի** է. զոր օրինակ.

Կինն զոր ետուր ընդ իս՝ նա ետ ինձ 'ի ծառոյ անտի և կերայ. Կինը զոր ինծի տուիր ան տուաւ ինծի ծառէն ու կերայ։

Հոս **նա** աւելորդ է։

Յիսուս զոր դուք սպանէք՝ զնա յարոյց Աստուած։

Հոս ալ **զնա** աւելի դրուած է։ Այս ձևն **աւելորդութիւն** կը կոչուի։

## ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Հ. Կէտադրութիւն ի՞նչ է։

Պ. **Կէտադրութիւն** է խօսքին մէջ բառեր և իմաստներ **կէտ** կոչուած նշաններով իրարմէ զատել։

2. Հ. Կէտադրութեան գլխաւոր նշանները ո՞րոնք են։

Պ. Կէտադրութեան գլխաւոր նշաններն են **բութ** (՝), **ստորակէտ** (,), **միջակէտ** (.) և **վերջակէտ** (։)։

3. Հ. Այս նշաններն ինչո՞ւ համար կը գործածուին ։

Պ. Այս նշանները կը գործածուին նախադասութեան մը և կամ պարբերութեան մը մասերն իրարմէ զատելու համար։

4. Հ. Նախադասութիւն ի՞նչ է ։

Պ. Նախադասութիւն է այլևայլ մասերէ բաղկացեալ իմաստ մը որուն մէջ դիմաւոր բայ մը կայ, և Նախադասութեան մասերն են՝ դեր բայն, ենթակաները, մակբայը, ածականներ և այլն ։

5. Հ. Պարբերութիւնն ի՞նչ է ։

Պ. Պարբերութիւն կ'ըսուի երկայն խօսք մը որ կը բաղկանայ երկու գլխաւոր Նախադասութենէ որոնք պարբերութեան անդամները կը կոչուին ։

6. Հ. Պարբերութեան անդամներն ի՞նչ են ։

Պ. Պարբերութեան անդամներն են այնպիսի Նախադասութիւններ՝ որ իրարմէ կախում ունին, կամ իրարու հարկադրեալ են, և կամ որոնց մէկը միւսին պատճառն է . զոր օրինակ ։

Եթէ մեզի մեր տկարութեան վրայ գաղափար տըւող բան մը կայ, մեր ծննդենէն անմիջապէս ետքը մեր գտնուած վիճակն է ։

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն . բայց եւ այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին ։

Մեր թագաւորը բարեսիրտ եւ մարդասէր է . ապա անոր գթութեանը կրնանք դիմել ։

Այս պարբերութեանց առաջին անդամները

կախում կը ցուցնեն․ երկրորդին անդամներն իրարու հարկադրեալ են․ իսկ երրորդին անդամներուն մէկը միւսին պատճառն է ։

7․ Հ․ Ո՞ր խօսքերը պարբերութիւն չեն ։

Պ․ Պարբերութիւն չեն երկայն խօսքեր՝ որոնց մէջ իրարմէ կախում ունեցող կամ իրարու հարկադրեալ և կամ մէկը միւսին պատճառ անդամներ չկան․ զոր օրինակ․

Առողջութիւնը լոկ անուն է․ կեանքը սոսկ երազ է․ փառքը միայն երեւոյթ է․ զուարճութիւններն ու հեշտութիւններ ուրիշ բան չեն եթէ ոչ վտանգաւոր զբօսանք ։

8․ Հ․ Ո՞ր պարբերութիւնը պարզ է ։

Պ․ Պարբերութիւն մը պարզ կը կոչուի, երբ անդամներուն երկուքն ալ մէյմէկ նախադասութիւն են․ այսպէս են վերի երեք պարբերութիւնները ։

9․ Հ․ Ո՞ր պարբերութիւնը բաղադրեալ է ։

Պ․ Պարբերութիւն մը բաղադրեալ կը կոչուի, երբ անդամներուն մէկը կամ երկուքն ալ երկու կամ աւելի նախադասութիւններէ կը բաղկանան․ զոր օրինակ․

Եթէ մարդիկ արդարութեան վրայ աւելի յարգ ունենային՝ եւ ճշմարտութեան մեծ զօրութեանը վրայ համոզուած ըլլային, ոչ միայն ընկերութիւնն իր նպատակին աւելի մօտեցած կ'ըլլար՝ այլեւ առանձնական շահերն աւելի ապահով երաշխաւորութիւն մը ունեցած կ'ըլլային ։

10. Հ. Կէտադրութեան կանոնները որո՞նք են։

Պ. Կէտադրութեան կանոնները հետեւեալներն են ։

1. Երբ նախադասութիւն մը քանի մը տէր բայի կամ խնդիր, կամ երբ գոյական մը քանի մը ածական ունի, ասոնք իրարմէ ստորակէտով կը բաժնուին . զոր օրինակ .

Աշխարհիս վրայ չոր, խոնաւ, ջերմ, ցուրտ, լոյծ, [illegible] բաներ խառն կը գտնուին .

Նենգութիւնը, բռնութիւնը, ատելութիւնը, դա-ւերը, պատերազմներն այն երկրին մէջ իրենց ձայնը լսել չեն տար ։

Այս փիլիսոփան ուրախութեամբ կը խոստովանէր թէ հոգին կ'ըմբռնէ, կը խորհի, կը տարակուսի, կը հաւա-տայ, կ'երեւակայէ, կը ճանչնայ, կը կամի, կը փափաքի ։

Ոմանք այս դէպքերուն մէջ ստորակէտի տեղ բութ կը գործածեն ։

2. Պարբերութիւն չեղող խօսքի մը մէջ նախադասութիւնները սովորաբար միջակէտով կը զատուին . ինչպէս վերը (թիւ 7) տեսնուեցաւ ։

3. Պարզ պարբերութեան մը իրարմէ կախում ցուցնող անդամներն ստորակէտով կը զատուին ։ (Տես վերը թիւ 6 առաջին օրինակը ։)

4. Պարզ պարբերութեան մը անդամները իրարու հարկադրեալ են, կամ մէկը միւսին պատճառն է, միջակէտով կը զատուին ։ (Տես վերը, թիւ 6, երկրորդ և երրորդ օրինակները ։)

5. Բաղադրեալ պարբերութեան մը անդամները որ կախում կը ցուցնեն՝ նոյնպէս ստորա-

կէտով կը զատուին, իսկ իւրաքանչիւր անդամը կազմող մասերը բութով կը զատուին։ (Տես վերը 9 թիւ օրինակը։)

6. Բաղադրեալ պարբերութեան մը անդամները որ իրարու հարկադրեալ են, կամ մէկը միւսին պատճառն է, վերջակէտով կը զատուին. իսկ իւրաքանչիւր անդամը կազմող մասերը միջակէտով կը զատուին, զոր օրինակ.

Մարդ իրեն համամիտ եւ համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն զժտեալ չի կրնար մնալ. վերջապէս կը հաշտուի։ Բայց իր զգացմանցն ու կարծեացը հակառակ զգացում ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ըլլալու վայրապար կ՚աշխատի. ասոնկները կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին։

7. Կոչականը նախադասութեան միւս մասէն ստորակէտով կը բաժնուի։ Նոյնպէս՝ ասէ, ասեն, եւ ուրիշ ասոնց նման բառ մը որ ուրիշի մը խօսքը յառաջ կը բերէ, եւ ան նախադասութեան մէջն է, ստորակէտով կը բաժնուի, զոր օրինակ.

Ով արժանաւոր որդիդ իմաստնոյն Ոդիսեայ, հօրդ զգօնութիւնը քու վրադ կը տեսնեմ։

Ով է, ըսաւ դիցուհին, հայրդ զոր կը փնտռես։

Հայրս ըսաւ Տելեմաք, Ոդիսեւս կը կոչուի։

Ասէ, ասեն եւ այլն բայերքէն ետքը միջակէտ կը դրուի, եւ յաջորդ խօսքը որ ուրիշինն է՝ գլխագրով կը սկսի, եթէ յիշեալ բայերը յաջորդ խօսքէն առաջ են. զոր օրինակ.

Դիցուհին ըսաւ. Ով է հայրդ զոր կը փնտռես։ Տե-

լեմաք պատասխան տուաւ․ Հայրս Ոդիսեւս կը կոչուի, եւ այլն ։

11․ Հ․ Ի՞նչ բառեր կէտանշանով չեն բաժնուիր ։

Պ․ Ամենեւին կէտանշանով չեն բաժնուիր,

1․ Երկու նոյնատեսակ բառ, զոր օրինակ՝ երկու ածական, երկու տէր բայի, երկու բայ, որ մի և նոյն գոյականի, բայի և տէր բայիի կը վերաբերին, եւ, ու, կամ, բայց և ուրիշ ասոնց նման շաղկապներով կապուած են, ու յարակից մասեր չունին․ զոր օրինակ․

Պատիժն ու մոլութիւնն անբաժին են ։ Բոլորտիքդ եղողներուն կորուստը կամ փրկութիւնը քու կորստենէդ կամ փրկութենէդ կախում ունի ։ Մարդուս կիրքերն անոր վնասակար բայց սիրելի թշնամիներն են ։

2․ Կրկնուած շաղկապներով կամ մակբայներով կապուած բառեր․ զոր օրինակ․

Ամէն տեղ ծաղկած կը տեսնենք թէ Պոմոնային պտուղները թէ Փլորային ընծայները ։ Մի թողուր ոչ ագահութեան ոչ հպարտութեան որ քեզ քարշ ածեն ։

3․ Ոչ, թէ, շաղկապներով կապուած նախադասութիւն մը որ նախընթաց բային խնդիր է․ զոր օրինակ․

Չենք ուզեր ոչ մէկը մեզ յանդիմանէ, քանզի ուղղուիլ չենք ուզեր ։ Շողոքորթութենէ կը խաբուինք, քանզի կը կարծենք թէ ուրիշներն այնչափ կոյր են, որ մեր մոլութիւնները չեն տեսներ ։

12․ Հ․ Պարոյկ ի՞նչ է ։

Պ․ Պարոյկը (՞) հարցական նշան է, և հարցական բառին վրայ կը դրուի ։

13. Հ. Երկար ի՞նչ է:

Պ. Երկարը (˘) զարմացական նշան է, և հոգւոյն մէկ կիրքը նշանակող բառերու վրայ կը դրուի:

14. Հ. Կախում ի՞նչ է:

Պ. Կախումը՝ որ երեք կէտ է (. . .), կը գործածուի խօսքին պակաս կամ կիսկատար մնացած ըլլալը ցուցնելու համար:

15. Հ. Գիծ ի՞նչ է:

Պ. Գիծը (—) կը գործածուի նախ՝ հարցման ու պատասխանւոյ մէջտեղը. առանց՝ կ'ըսէ, ըսաւ, պատասխան տուաւ, կրկնեց խօսքերը գործածելու: Երկրորդ՝ փակագծի տեղ:

16. Հ. Չակերտ ի՞նչ է:

Պ. Չակերտը („) կը դրուի խօսքի մը սկիզբը և վերջը, եթէ այն խօսքը վկայութիւն կամ կոչում է հեղինակէ մը, կամ մէկուն խօսքն է:

17. Հ. Փակագիծ ի՞նչ է:

Պ. Փակագիծը որ սա նշանն է (), խօսքին մարմինէն դուրս, բայց անոր յաւելուած մաս մը բուն խօսքէն կը զատէ:

ՎԵՐՋ

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi
*ERM1006*
255.07.02.01.06.00/

# ՑԱՆԿ ԳՐՈՑ

## Ի ԳՐԱՏԱՆ ՅՈՎՍԷՓԱՅ ԳԱՎԱՖԵԱՆ

| | Դշ. ՓՐ. |
|---|---|
| Այբբենարան դիւրուսոյց հեգարան և ընթերցարան | 20 |
| Աշխարհագրութիւն բնական և քաղաքական Ա. Մ. Գարագաշեանի | 4 |
| Աշխարհագրութիւն Ուսումնական, բնական և քաղաքական Ս. Միքայէլեանի | 7 |
| Գրագիտութիւն առձեռն Մուրատեանի | 15 |
| Դաստիարակ մանկանց կամ նոր ընթերցարան Ա. Մ. Գարագաշեանի | 3 |
| Դասագիրք թուաբանութեան Տ. Յ. Պօղաճեան Գ. Տպագրութիւն | 8 |
| Դպրութիւն կամ նոր քերականութիւն Ա. Մ. Գարագաշեանի Զ. Տպագրութիւն | 8 |
| Մանր ուսմունք քրիստոնէական հաւատոյ և Սրբազան պատմութիւն Գ. Մարկոսեանի | 2 |
| Քերականութիւն գործնական Գարագաշեանի | 19 |
| Բանալի գործնական քերականութեան Ա. Մ. Գարագաշեանի | 6 |
| Երգարան նոր կամ քնար Հայաստանի | 6 |
| Սրբազան պատմութիւն բազմապատկեր Ա. Մ. Գարագաշեանի | 5 |
| Տիեզերագրութիւն կամ Ուսումնական, բնական և քաղաքական Աշխարհագրութիւն Ա. Մ. Գարագաշեանի | 8 |
| Բազգամ Ճէտվէլի | 4 |
| Փոքրիկ քարտուղար կամ Նամականի Ա. Մ. Գարագաշեանի | 10 |
| Քերականութիւն համառօտ Ա. Մ. Գարագաշեանի | 4 |
| Քերականութիւն Գաղղիարէն և Հայերէն ըստ Օլլէնտօրֆի դրութեան Ա. Մ. Գարագաշեանի | 26 |